



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



W. A. Illbruck
E. J. J. J. J.

Շեքսպիրը դարձել է մի չափ ազգե-
րի զարգացման աստիճանը որոշելու
համար: Եթե մի ժողովուրդ նրան չի
թարգմանում, կնշանակի տգետ է, եթե
չի հասկանում, կնշանակի տհաս է,
եթե մի լեզու նրա վրա չի գալիս,
կնշանակի տկար է:

Հովհաննես Քումանյան

BAKHTIAR HOVAKIMYAN

**SHAKESPEARE IN THE
ARMENIAN THEATRE**

**YEREVAN
YEREVAN UNIVERSITY PRESS
2012**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍԻ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ**

ԲԱՆՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

**ՇԵՔՍՊԻՐԸ
ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012**

ՀԴՏ 792(479.25)

ԳՄԴ 85.33(22)

Հ 843



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Հովակիմյան Բ. Մ.

**Հ 843 Շեքսպիրը Հայ թատրոնում / Բ. Մ. Հովակիմյան: - Եր.: ԵՊՀ
Հրատ., 2012.- 540 էջ + 32 էջ ներդիր:**

Հանրագիտակ-տարեգրության մեջ ամփոփված են Շեքսպիրի երկերի Հրատարակությունների, թարգմանիչների և նրանց թարգմանությունների, չեքսպիրյան թեմաներով գրականության, Օթելլոյի և Համլետի դերակատարների առաջին ելույթների, չեքսպիրյան թեմաներով միջոցառումների ու փառատոների մասին մատենագիտական ցանկեր և 25 պիեսի բեմադրությունների տարեգրությունը:

Գիրքը կարող է օգտակար լինել Հայ թատրոնի պատմությանը, թատերական կապերով, Շեքսպիրը Հայ թատրոնում թեմայով զբաղվողներին ու հետաքրքրվողներին:

ՀԴՏ 792(479.25)

ԳՄԴ 85.33(22)

ISBN 978-5-8084-1644-4

© Հովակիմյան Բ. Մ., 2012

© ԵՊՀ Հրատ., 2012

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Մեր թվարկության հինգերորդ դարի սկզբից Հայ գրական կյանքի վերելքի հետ, զուգահեռաբար, սկզբնավորվել ու ստեղծագործական մեծ ճանապարհ է անցել նաև թարգմանական գրականությունը: Այդ երկու բնագավառներն էլ մտել են մեր ազգային տոների մեջ և նշվում են որպես թարգմանչաց տոն: Ազգային և թարգմանական գրական այս շարժումը ծնունդ ու անուն է տվել նաև միջազգային գրական ու թատերական կապերին, որոնք նույնպես դարերի պատմություն ունեն:

Տարբեր ազգերի գործիչների հետ շփման միջոցով են Հայերն անդրադարձել նաև անգլիական գրականությանը, թատրոնին, որոնք միավորվել են մեկ անվան մեջ՝ Վիլյամ Շեքսպիր (1564-1616): Ոչ միայն անգլիական, այլև Համալսարանային մեծության ճանաչված Շեքսպիրի գրական ժառանգությանը Հայերը ծանոթ են եղել դեռևս 17-րդ դարից: Թեև այս տվյալը փաստացի կերպով դեռ վերջնական լուծում չի ստացել, բայց հարցը հավաստի է:

1916-ի ապրիլին, երբ աշխարհի առաջավոր մտավորականությունը, այդ թվում և Հայերը, նշում էին դրամատուրգների արքա Շեքսպիրի մահվան 300-ամյակը, Լոնդոնում, տեղի Հայ գրողների ընկերության քարտուղար Արամ Բաֆֆին, իր զեկուցման մեջ նշել է, որ 17-րդ դարում տպագրված «Ծաղիկ գիտություն» գրքում հիշատակվել է Շեքսպիրի անունը: Այդպիսի Հայտարարության համար նա, անշուշտ, հիմք է ունեցել: Բաֆֆին այդ գիրքը տեսել է կամ բրիտանական որևէ թանգարանում կամ էլ մեկնումեկի անձնական գրադարանում:

Շեքսպիրին, նրա թողած գրական-դրամատիկական ժառանգությունը հաստատ ծանոթ առաջին մտավորականը 18-19-րդ դարերի հայ ազգային-քաղաքական գործիչ Հովսեփ Էմինն է (1726-1809): 1750-ական թթ. ապրելով Լոնդոնում, ծանոթացել է թե՛ անցյալի և թե՛ ժամանակակից գրական-թատերական գործիչների հետ: 1792-ին, Լոնդոնում, նա հրատարակել է «Իմ կյանքը և արկածները» անգլերեն հուշագրությունը¹, որտեղ հիշատակելով «Օթելլո» և «Վենետիկի վաճառականը» պիեսները, համեմատություններ է կատարել իր և Շեքսպիրի հերոսների միևնույն վիճակում գտնվելու մասին: Նա անձնական ծանոթություն է ունեցել իր ժամանակի շեքսպիրյան մեծ դերասան Գարրիկի հետ, ինչը վկայում է Էմինի և Լոնդոնի թատերական գործիչների միջև եղած փոխադարձ կապերի մասին: Այդ կապերն անցողիկ բնույթ չեն կրել: Գրքի էջերից կյանք են մտել: Նրա մասին գրախոսական է գրվել Մադրասում լույս տեսնող հայերեն առաջին պարբերական՝ «Ազգարարում» (1794): Ավելին՝ բացվել է գրքի բաժանորդագրություն, որով այն ձեռք են բերել տեղի անգլիացիները և հնդկահայերը:

Էմինի գրքից բացի, Հնդկաստան են հասել նաև Շեքսպիրի և ուրիշ հեղինակների (այդ թվում և Փրանսիացիների) բազմաթիվ գործեր, որոնք իրենց արձագանքն են գտել հնդկահայ մամուլում: Շեքսպիրյան գրականության մասսայականացման գործում կարևոր դեր է խաղացել Կալկաթայում լույս տեսնող «Շտեմարան» հանդեսը, որի, ինչպես նրա խմբագիր Մարտիրոս Մկրտչյանը, այնպես էլ աշխատակիցները 1822-1823 թթ. իրենց հոդվածներում, այս կամ այն ճշմարտությունը հաստատելու համար քաղվածաբար մեջբերումներ են կատարել Շեքսպիրի «Երկու վերոնացիք», «Ամառնային գիշերվա երազ», «Չափի դեմ չափ», «Մեծ աղմուկ ոչնչից», «12-րդ գիշեր», «Օթելլո», «Համլետ» պիեսներից: Դրանք եղել են «Անմահացյալ Շեքսպիրից» կատարած հայերեն թարգմանության առաջին նմուշները:

¹ Life and Adventures of Joseph Emin an Armenian, London, 1792.

Հովսեփ Էմինի գիրքը ուղղակի ազդեցություն է ունեցել նաև նրա մահից հետո ծնված թոռան՝ աղջկա որդի Մկրտիչ Էմինի վրա, որը հետագայում դարձել է նշանավոր հայագետ ու մանկավարժ (1815-1890): 1823-ին Նոր Զուղայից Կալկաթա ուսման գնացած պատանի Մկրտիչն ապրել է թանգում տառի մոտ, սովորել մարդասիրական ընկերության ճեմարանում, տիրապետել անգլերենին: Հոգատար տառի նախաձեռնություններ, 14-ը դեռ չլրացած Մկրտիչը, 1829-ին շուրջ կեստարյա ճամփորդությունից հետո հասել է Մոսկվա, ընդունվել Լազարյան ճեմարան, հետո ավարտել համալսարանը, զբաղվել գրականությունում ու մանկավարժությունում:

Եվ ի՞նչն է հետաքրքրական: Էմին կրտսերի ճամփորդական պայուսակում եղել է երկու գիրք՝ Միլտոնի «Դրախտ կորուսյալի» հայերեն թարգմանությունը և 1823-ին Լոնդոնում հրատարակված՝ Շեքսպիրի պիեսների ժողովածուն¹, որից նա թարգմանություններ է կատարել դասընկերների և ուսանողների համար²:

1830-ական թվականներից գրական ուսումնասիրություններում և մամուլում սկսել են երևան գալ Շեքսպիրի և նրա գրական ժառանգության մասին առանձին գնահատականներ: Առաջինն արտահայտվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի չրջանավարտ և համալսարանի բանասիրական բաժնի ուսանող, 20-ամյա Սարգիս Տիգրանյանը (1812-1875): 1832-ին գրած և 1834-ին ճեմարանի հրատարակությամբ լույս ընծայած՝ Փրանսիացի դրամատուրգ Ռասինի «Գոթոդիա» ողբերգության գրաբար թարգմանությունը նա կցել է «Ինչ ինչ զեղբերգութենե» վերնագրով առաջաբան, ուր ներկայացրել է համաշխարհային դրամատուրգիայի պատմությունը՝ անտիկ աշխարհից մինչև 1820-ական թթ.: Տիգրանյանն այդտեղ անդրադարձել է նաև Շեքսպիրին, նրան անվանելով՝ «չնորհաչուքն», նրա «Համլետ», «Հուլիոս Կեսար», «Անտոնիոս և Կլեոպատրոս», «Օթելլո», «Հոլբարդոս Երրորդ» ողբերգությունները համարել խոր բանաստեղծական թատրոնական և ավելացրել՝

¹ The dramatic Works. With glossary Chiswick.

² Հայ գրականության միջազգային կապերը, հ. 2, եր., 1987, էջ 287-300:

«բազումք ի քերթվածոց նորա խաղարկեցան առաջի թագուհւոյն Եղիսաբեթի»¹:

Իր գնահատութիւնների մեջ Տիգրանյանն օգտվել է անգլիացի հեղինակների գործերից և արել իր հետևութիւնները, առանց ազատվելու կլասիցիստական դրամատուրգիայի ազդեցութիւնից:

Արևմտահայ գրական մտքի պատմութեան մեջ առաջինը, որն անդրադարձել է Եքսպիրին, եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանութեան ներկայացուցիչ Մատթեոս վարդապետ Մաղաք-թեոփիլյանցը: 1839-ին նա Վենետիկում հրատարակել է «Կենսագրութիւն երևելի արանց» հանրագիտարանաբնույթ աշխատութիւնը, որի երկրորդ հատորում, խոսելով Եքսպիրի մասին, նրան համարել է «մեծահամբավ քերթող անգլիացի»:

Ինչպես Մաղաք-թեոփիլյանցը, այնպես էլ Վիեննայի «Եվրոպա» հանդեսի անատորագիր հոդվածագիրը, որպես կլասիցիզմի ուղղութեան պաշտպաններ, թեև չեն բարձրացրել Եքսպիրին, բայց և այնպես, չեն ժխտել նրա մեծութիւնը:

Եքսպիրի մասին ինքնուրույն և թարգմանական տեսական հոդվածներից հետո, սկսվել են նրա պիեսների թարգմանական փորձերը: Այս հարցում նախապատմութիւնը տրվում է Զմյուռնիայի թատերական գործիչներին: Թարգմանիչ և «Արփի Արարատյան» թերթի թատերախոս Արամ Տետեյանը 1851-ին լինելով Լոնդոնում, տարբեր թատրոններում մի շարք ներկայացումներ տեսնելուց հետո, հիացել է Եքսպիրի պիեսներով:

Տետեյանի թարգմանութեամբ, Զմյուռնիայի թերթերում, մասնակի կամ ամբողջովին, նրա թարգմանութեամբ տպագրվել են «Կատակերգութիւն սխալանաց» (1853), «Վենետիկի վաճառականը» (1862, ամբողջութեամբ), «Համլետ» (1862) պիեսները: Առանձին գրքով՝ 1866-ին լույս է տեսել «Հոռոմեոս և Ճյուլեթզոլա» ողբերգութիւնը՝ անգլիական աղբյուրներից քաղած հոդվածների և այլ նյութերի թարգմանութեամբ հանդերձ: Եքսպիրի նկատմամբ իր սերը Տետեյանն այսպես է բացատրել՝ «Երբ առաջին անգամ Եքսպիր կարդացի սքանչանալով Հափշտակվեցա»:

¹ Գոթոդիա եղբերգութիւն, թարգմանյաց ի գաղղիական Սարգիս Տիգրանյան նախիջևանցի, ի Մոսկով, 1834, էջ 57:

Եթե Տետեյանը և նրա գործը շարունակող մյուս գործիչները Եքսպիրին թարգմանել են բնագրից, ապա Վենետիկի Մխիթարյան միաբանութեան հայրերն այդ աշխատանքն սկսել են Փրանսիացի Ժան Ֆրանսուա Դյուսիսի փոխադրութիւնների թարգմանութիւնից: Թեև մեր թատրոնի պատմութեան մեջ այդ հարցն անչվում է «Մակբեթի» փոխադրութեան թարգմանութեանը, որը կատարել է հայր Սամուել Կայսերյանը (1838–1908), որով էլ այն առաջին անգամ ներկայացվել է 1864-ի հունվարի 29-ին, Սուրբ Ղազարում, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի ճաշասրահում, կրճատված, առանց կին դերակատարի (Լեդի Մակբեթը փոխարինվել է Մակբեթի տղայով), բայց, մեզ թվում է, որ Մխիթարյաններն առաջին անգամ այդ քայլին են դիմել դեռևս 1853-ին՝ բեմադրելով «Հուլիոս Կեսարը», թերևս նույն Դյուսիսի փոխադրութեան թարգմանութեամբ: (Հոռոմեոս կատարվող տեսարաններում հանդես են եկել Հուլիոս Կեսարը, Անտոնիոսը, Բրուտոսը, Տուլլիոսը, Կասսիոսը, Մերակուլոսի անդամներ և ուրիշներ):

Ճիշտ է, այս բեմադրութիւններում Եքսպիրի հերոսները խոսել են ոչ թե հեղինակի տեքստով, այլ Դյուսիսի փոխադրութեան լեզվով, բայց և այնպես հիմքը հանդիսացել է Եքսպիրի ստեղծագործութիւնը:

Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի դպրոցական թատրոնում Եքսպիր բեմադրելն իր դրական ազդեցութիւնն է ունեցել նրա աշակերտների ոչ միայն մտավոր զարգացման, այլև հետագա գործունեութեան վրա: Վարժարանի մի շարք սաներ դարձել են գրող-դրամատուրգներ, իսկ Սրապիոն Հեքիմյանը (1832–1892), իր գրած առաջին պիեսով՝ «Արտաչես և Սաթենիկ» (1848–16 տարեկանում), որոշ գործողութիւններ ժառանգել է «Ռոմեո և Զուլիետից»:

Եքսպիրի դրամատուրգիայի ազդեցութիւնն ակնհայտ է նաև քսան տարին դեռ չլրացած Պետրոս Դուրյանի (1851–1872) «Թատրոն և թշվառներ» պիեսում (1871), ուր, ի տարբերութիւն հեղինակի գրած պատմական ողբերգութիւնների, նյութը վերցրել է ժամանակակից առօրյա կյանքից և ուրիշներին էլ խորհուրդ է տվել զբաղվել արդիական կյանքի պատկերմամբ: «Թատրոն և թշվառներ» պիեսում Դուրյանի գաղա-

փարախոսությունն արտահայտվել է հատկապես ներկայացման Գ. արարվածի Գ. պատկերի Ա. տեսիլում (բեմի ներկայացման ընդմիջման ժամանակ) Ա. և Բ. հանդիսատեսների մտքերի փոխանակության մեջ:

Թատրոնի կարևորության, հեղինակության, նշանակության և այլ հարցերի մասին խոսելիս, Բ. հանդիսատեսն ասում է Ա. հանդիսատեսին՝

— Անհնար է, որ մարդ Շեքսպիրի, Շիլլերի, Հյուկոյի և Տյուժայի թատերգությունքը կարդացած ժամանակը չսքանչանա, կը պաշտեմ ես այդ հանճարները¹: Սրանք, իհարկե, Գուրյանի խոսքերն են, որ իրենց արտահայտությունն են ստացել նրա հերոսի բերանով:

Ժամանակի առումով, Շեքսպիրից ներչնչված երրորդ դրամատուրգը, երևանցի Աբգար Գուլամիրյանն է (1840—1916): Իր գրած «Սենեքերիմ թագավոր Հայոց Վասպուրականի» (տպվ. 1878) ողբերգության առաջաբանում Գուլամիրյանը գրել է. «Կարևոր եմք համարում հայտնել, որ ողբերգությանս Հինգերորդ արարվածի Ջ, է, Ը, Թ և ԺԳ տեսարանների մենախոսությունները մենք հարմարեցրել ենք Շեքսպիրի Ռիբարդոս Երրորդի վերջին արարվածին»²:

Ազդեցությունն ազդեցություն, բայց Գուլամիրյանի պիեսի համար հիմք ծառայած Մանուել Արտամետյանի «Գաղթականություն ի Վասպուրականե Սենեքերիմա Արքային Արծրունվո» (տպվ. Վան, 1860) ողբերգության վերափոխումն ու հավելումներ մտցնելը, Շեքսպիրի պիեսից վերցրած մտքերն իր հերոսին վերագրելը միայն պատմական մոտեցման արժեք ունեն: Այդ պիեսը բեմադրվել է Ախալցխայում և Թեհրանում:

Շեքսպիրի գործերի գաղափարական ազդեցությունն ակնբեր է Գ. Սունդուկյանի «Պեպո» և «Քանդած օջախ» պիեսներում: 1898-ին պատասխանելով Յուրի Վեսելովսկու այն հարցին՝ թե ո՞ր հեղինակներից է ազդվել Սունդուկյանը, եվրոպական և ռուս մի քանի հեղինակների թվում հայ դրամատուրգը հիշատակել է Շեքսպիրին, որի գործերը նա կարդացել է

¹ Պետրոս Գուրյան, Երկերի ժողովածու, հ. 2, եր., 1972, էջ 444:

² Աբգար Գուլամիրյանց, Սենեքերիմ թագավոր Հայոց Վասպուրականի, եր., 1878, էջ Ժ:

Ֆրանսերեն: Այդ ազդեցությունը նկատելի է Համլետ—Պեպո և Թիմոն Աթենացի—Օսեփ կերպարների հոգեբանության ու գործունեության մեջ՝ բողոք անարդարության դեմ և սնանկանալուց հետո մերձավորների կողմից լքվելու ցավի զգացում:

Շեքսպիրից թարգմանություններ կատարելու, նրա մասին ինքնուրույն կամ թարգմանական հոդվածներ տպագրելուց հետո նրան մերձենալու հաջորդ քայլը եղել է առկա թարգմանություններից որոշ գործեր բեմ հանելը, որով, փաստորեն սկսվել է մեծ դրամատուրգի ստեղծագործությունների բեմական պատմությունը հայ թատրոնում:

Նախքան առաջադրված հարցին անցնելը, հիշեցնենք, որ 1863 թվականի հունվարից, Գևորգ Չճկյանը երկրաչափ ճարտարագետի մասնագիտությունը մի կողմ զնելով, իր ամբողջ կյանքը նվիրել է թատրոնին՝ եղել է դերասան, բեմադրիչ, դրամատուրգ, թարգմանիչ, թատրոնի պատմաբան: Նրա շնորհիվ են հայ թատրոն մուտք գործել Շեքսպիրը, Օստրովսկին և այլ հեղինակներ:

Չճկյանը թատրոն է մտել տեսականորեն պատրաստված: Նա լավ ծանոթ է եղել ռուս մեծ քննադատ Վ. Գ. Բելինսկու թատերագիտական ժառանգությանը: Իսկ որտեղ Բելինսկի՝ այնտեղ Շեքսպիր: Ահա, այսպիսի զինվածությամբ, նույն 1863-ի գարնանը Չճկյանը ձեռնարկել է «Թիմոն Աթենացիի»՝ Բելինսկու բնորոշմամբ՝ «անարյուն ողբերգության» թարգմանությունը: Աշխատանքի մասին կարծիք իմանալու համար, նա իր մոտ է հրավիրել բեմընկեր-դերասաններ Միհրդատ Ամրիկյանին և Արտաշես Սուքիասյանին: Նա իր թարգմանությունը կարդացել է այն եղանակով, ինչպես որ պետք է խոսեին դերասանները (հակառակ ընդունված երգեցիկ խոսակցական եղանակին): Ընկերները չեն հավանել նրա թարգմանությունը, որի պատճառով Չճկյանը պատռել է ձեռագիրը:

Այսուամենայնիվ, Չճկյանը ձեռք չի քաշել Շեքսպիրից: Հայ թատրոնի խաղացանկը նոր և արժանի դրամատուրգիայով հարուստացնելու նպատակով, 1864-ին, նա ֆրանսերենից թարգմանել է «Վենետիկի վաճառականը», որի առաջին գործողության երրորդ տեսիլը, որտեղ հանդես են գալիս Շայլոկը, Անտոնիոն և Բասանիոն, բեմադրել է 1865-ի մայիսի 7-ին, Թիֆլիսի Քաղաքային (Թամամչյանի) թատրոնում:

Չմշկյանի թարգմանած ու բեմադրած այս հատվածով Եբրսապիրն առաջին անգամ մուտք է գործել արևելահայ թատրոն: Առաջին անգամ Եբրսապիրի հերոսների խոսքերը հնչել են հայերեն: Այդպես, հատվածաբար, իսկ այնուհետև ամբողջությամբ, շուրջ քսան տարի Չմշկյանը բեմադրել է «Վենետիկի վաճառականը», որին հաջորդել է «Օթեյլոյի» նրա թարգմանությունը բեմադրությունը 1867-ի փետրվարի 10-ին, դարձյալ առանձին տեսարաններով, մինչև որ 1884-ին խաղացվել է ամբողջությամբ: Այսպիսով, Գևորգ Չմշկյանը «Վենետիկի վաճառականի» և «Օթեյլոյի» առաջին թարգմանիչն է, բեմադրողը, Եայլոկի ու Օթեյլոյի առաջին դերակատարը:

«Վենետիկի վաճառականի» չմշկյանական առաջին բեմադրությունից երկու տարի անց, 1867-ի մարտի 25-ին Կ. Պոլսի Նաումի թատրոնում, Ասիական ընկերության դերասանական խումբը Հակոբ Վարդուկյանի բեմադրությամբ առաջին անգամ բեմ է հանել «Մակբեթը», ինքն էլ կատարել գլխավոր հերոսի դերը: Հետաքրքրականն այստեղ այն է, որ «Մակբեթը» խաղացվել է 16-ամյա Ռաչատուր Ուղուրեկյանի թարգմանությամբ:

Պոլսահայ թատրոնում «Ռոմեո և Զուլիետ» (1869) և «Օթեյլո» (1871) ողբերգությունները բեմադրացանկ մտցնելու հայտարարություններ են տպագրվել մամուլում, բայց արձագանք չեն ստացել: Մինչև 1888-1889 թթ. Պետրոս Աղամյանի ելույթները Պոլսում («Օթեյլո») և Չմյուռնիայում («Համլետ») և դրանից հետո՝ մինչև 1908-ը Պոլսում այլևս Եբրսապիր չի խաղացվել: Ինչպես Աղամյանն է գրել Վարդգես Սուրենյանցին, «Համլետն» ու «Արքա Լիրն» արգելված են եղել գրաքննության կողմից¹: Այս երևույթը ձգվել է շուրջ երկու տասնամյակ: Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» (1907 թ.) գրքում Համլետի դերը պատրաստելու մասին Սիրանույշի տպագրած («Զեռնարկա Եբրսապիրի մի գործին») հոդվածում նույնպես բացակայում է Համլետ անունը:

Վերադառնալով անցյալին վերհիշենք, որ 1870-ին Գամառ Քաթիպայի (Ռափայել Պատկանյան) «Հիմի էլ լոենք» բանաստեղծությունը բեմից արտասանելու համար մամուլում

գրվել է՝ «Ո՞նք ո՞ւս բանաստեղծի մը»¹: Այսպիսի վիճակում ի՞նչ կարելի էր անել:

Հայ թատրոնում Եբրսապիրն իսկական զարթոնք է ապրել 1880 թվականից և մինչև օրս մնում է նրա խաղացանկի հիմնական ու մնայուն հեղինակներից մեկը: Հիրավի, 1880-ական թվականները Հայ թատերական գործիչների և, ընդհանրապես, թատերական կյանքի աշխույժ գործունեություն ծավալելու տարիներն էին, երբ մեկը մյուսի ետևից ասպարեզ իջան նոր թարգմանություններ՝ ո՛րը բնագրից, ո՛րը գերմաներենից, ո՛րը ֆրանսերենից, ո՛րը ռուսերենից թարգմանված:

Եբրսապիրի նկատմամբ ցուցաբերված այդ հետաքրքրությունը Հայ մտավոր կյանքի հասունացման ու վերելքի չրջան էր, ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հատվածների համար, թարգմանվում ու տպագրվում էին նորանոր գործեր, իրարից անկախ, հաճախ թարգմանվում էին նույն գործերը, բեմական կյանք մտնում տարբեր քաղաքներում: Տարեցտարի ընդարձակվում էին Եբրսապիր խաղացող թատերախմբերի գործունեության սահմանները, հարստացվում խաղացանկը, ի հայտ գալիս նոր դերակատարուհիներ, լայն ծավալ ստանում հյուրախաղային ճամփորդությունները, թատերական մթնոլորտը հեղեղվում էր Եբրսապիրի ողբերգությունների ու կատակերգությունների նորանոր բեմադրություններով:

Այդ առաջընթացն սկսվել էր Թիֆլիսի Հայոց դրամատիկական նորաստեղծ կոմիտեի (ընկերության) ակտիվ գործունեությամբ, որը գլխավորում էր իշխան Նապոլեոն Ամատունին, իսկ քարտուղարն էր Գևորգ Չմշկյանը: Թատերախմբի կազմն ուժեղացնելու, ավելի լուրջ պիեսներ բեմ հանելու նրանց մտահոգությունը թելադրել է առաջնակարգ դերասաններ Հրավիրել Կ. Պոլսից: Այդ նպատակով, 1879-ին Չմշկյանը մեկնել է Կ. Պոլիս, պայմանագրեր կնքել Պետրոս Աղամյանի, Աստղիկ և Սիրանույշ քույրերի հետ և միասին ուղևորվել դեպի Թիֆլիս:

Թատերական կոմիտեն ունեցել է խաղացանկը թարգմանական պիեսներով ապահովելու իր հանձնախումբը՝ ի դեմս դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի, թարգմանիչներ Սենե-

¹ Պետրոս Աղամյան, Նամակներ, Եր., 1959, էջ 212:

¹ Մանգումերի էֆքյար, № 1490:

քերիմ Արծրունու և Արգար Հովհաննիսյանի: Ընկերության բոլոր օղակներն աշխատել են սիրով ու նվիրվածությամբ, որի արդյունքում թատերախմբի խաղացանկ են մտել Գոգոլի «Ռեվիզորը», Գրիբոյեդովի «Նելլից պատուհասը», Օստրովսկու «Եկամտավոր պաշտոնը», Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Մուրացանի «Ռուզանը», կրկնվել են «Պեպոն» և այլ պիեսներ:

Շեքսպիրյան պիեսների բեմադրություններն սկսվել են 1880-ից: Սեպտեմբերի 25-ին բեմադրվել է «Վամակոր կնոջ սանձահարումը» (Թարգմ. Ամիրան Մանդինյան), նոյեմբերի 20-ին՝ «Համլետը» (Թարգմ. Ս. Արծրունի), 1881-ի դեկտեմբերի 31-ին՝ «Վենետիկի վաճառականը» (Թարգմ. Գևորգ Բարխուդարյան), 1886-ի փետրվարի 17-ին՝ «Օթելլոն» (Թարգմ. Ստեփանոս Սուլխանյան), նույն տարվա նոյեմբերի 6-ին՝ «Արքա Լիրը» (Թարգմ. Ս. Արծրունի, վերջինս Թարգմանել էր նաև «Մակբեթը», բայց ոչ բեմադրվել է, ոչ էլ Թարգմանությունն է պահպանվել):

Այս պիեսների զգալի մասի հաջողությունը կապված է Համլետի, Օթելլոյի և Արքա Լիրի դերակատար Պետրոս Աղամյանի անվան հետ: Դերի ուսումնասիրությունից զատ, նա աշխատել է իր դերատեքստը դարձնել ավելի բեմական, առավել արտահայտիչ, խոսքերը՝ սահուն արտասանվող:

Աղամյանը շեքսպիրյան այս դերերին ավելացրել է նաև Կ. Գուցկովի Ուրիել Ակոստայի և Պ. Զիակոմետտի Կորրադոյի դերերը և 1882–1888 թթ. չրջել Անդրկովկասի մի շարք և Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում: Մոսկվայում և Պետերբուրգում խաղացել է հայ թատերասերների հետ, իսկ մնացած վայրերում՝ ռուսական խմբերում, իր դերերը կատարել հայերեն և ֆրանսերեն:

Աղամյանի շեքսպիրյան դերակատարումները շատ բարձր են գնահատվել հատկապես Ռուսաստանի մայրաքաղաք Պետերբուրգի թատերական քննադատության կողմից: 1884-ի հունվարի 28-ին, Կոնոնովի դահլիճում, հայ ուսանողների և մտավորականների մասնակցությամբ, Աղամյանն առաջին անգամ հանդես է եկել իր գլխավոր՝ Համլետի դերում: Հանդիսատես քիչ է եղել, բայց ներկա են եղել Ալեքսանդրինյան

Թատրոնի առաջնակարգ դեմքերը՝ Մ. Գ. Սավինյան (որը մինչև հայ դերասանի մահը եղել է նրա բարեկամը), Վ. Վ. Սամոյլովը, Ա. Պ. Լենսկին (վերջին երկուսը եղել են Համլետի դերակատարներ), թատերական քննադատ Վ. Վ. Չուլկոն, դրամատուրգ Ա. Ս. Սուվորինը, թատերական գործիչ Պալմը, մամուլի թղթակիցներ:

Աղամյանի ելույթը խանդավառությամբ է ընդունվել: Ներկայացումն ավարտվելուց հետո, Սամոյլովը մտնելով Աղամյանի սենյակը, նրան ասել է՝ «Անկեղծորեն ասում եմ ձեզ, որ նույնիսկ Սավինիի խաղը ինձ այնքան հաճույք չի պատճառել, որքան ձեր խաղը»: «Նովոյե վրեմյա» թերթում գրվել է՝ «Տեսնելով պ. Աղամյանին, մենք պետք է խոստովանենք նրա՝ անկասկած ընդունակ, մտածող, զարգացած դերասան լինելը... Համլետի դերը նա տարավ այնքան բավարար, որ կարող է հաճույք պատճառել Շեքսպիրի ստեղծագործությանը ծանոթ ամեն մի ինտելիգենտ հանդիսատեսի» (№ 2846):

Աղամյանի լեզուն չհասկանալու պատճառով զանազան դիտողություններ են եղել Համլետի մասին, բայց «Լինե՞լ, թե՞ չլինե՞լ» մենախոսության ժամանակ, բոլորը միակարծիք, բարձր գնահատական են տվել: Բանն այն է, որ Աղամյանը մըշտապես կատարելագործելով իր խաղը, կերպարից բխող նոր արտահայտչամիջոցներ է որոնել ու հարստացրել Համլետի վարվելակերպի ու գործողության միասնությունը: Նրա նորամուծություններից մեկը եղել է «Լինե՞լ, թե՞ չլինե՞լ» մենախոսության ժամանակ Համլետի ձեռքին դաշույն ունենալը: Վ. Չուլկոն այսպիսի բացատրություն է տվել այդ երևույթին. «դա շատ նոր է և հաջող. ընդգծում է Համլետի ինքնասպանության միտքը: Ամբողջ մենախոսությունը կատարում է գրեթե հանգիստ, շատ պարզ, երբեմն նստած, դաշույնի հետ խաղալով: Հոյակապ տպավորություն է թողնում»¹:

1880-ական թթ. թատերական զարթոնքը նպաստեց ոչ միայն շեքսպիրյան պիեսների նոր թարգմանությունների երեվան գալուն (թեև նրանց զգալի մասը բեմի երես չի տեսել), այլև թատերական առողջ քննադատությանը: Իրենց բանիմաց

¹ Новистя, № 30.

և անաչառ ոգով գրած թատերախոսականներով աչքի են ընկել Գրիգոր Արծրունին («Մեղու Հայաստանի» և «Մշակ»), Սպանդար Սպանդարյանը («Մեղու Հայաստանի» և «Նոր-Դար»), Ավետիք Արասխանյանը («Մուրճ»), Սիմոն Հախումյանը (Թիֆլիսի և Բաքվի ուսական ու հայկական մամուլում) և ուրիշներ, որոնց հետևեցին նորանոր ուժեր:

Այդ տարիներին է վերաբերում նաև Հայ շեքսպիրագիտության գիտական գրականության սկզբնավորումը ի դեմս Պետրոս Աղամյանի, որն ապացուցելու համար, որ եթե ինքը թատերագիտությամբ զբաղվի, ավելի լավ կգրի, քան հրապարակի վրա եղած թատերախոսները: Ի հաստատումն այդ մտքի, նա կարճ ժամկետում գրել և 1887-ի գարնանը Թիֆլիսում լույս է ընծայել իր «Շեքսպիր և յուր Համլետ ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» ուչագրավ աշխատությունը, որը, դեռևս ձեռագիր վիճակում, բարձր է գնահատվել «Մշակի» կողմից: Թերթում գրվել է. «Աղամյանի այս աշխատությունը մի թարմ նորություն է հայոց գրականության մեջ և իրավ, չունենք մենք մի քննադատ, որը այս աստիճան լուրջ կերպով ուսումնասիրեր մի որևէ հեղինակություն, հավաքեր բազմաթիվ մատենախոսների կարծիքները և հետազոտեր ու կշռեր նրանց և հետո իր սեփական դատողությունների հետ միացնելով ընծայեր հասարակությանը»¹:

Աղամյանի գիրքը լույս տեսնելուց հետո, նրա դեմ հողված է գրվել «Արձագանքում» և արժանի հակահարված ստացել Շիրվանզադեի կողմից: Աղամյանի ուսումնասիրությունը բարձր են գնահատել նաև Ղազարոս Աղայանը, Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Ենգիբարյանը և ուրիշներ: Աղամյանի սկսած գործը հետագայում շարունակեցին Սիրանույշը (Համլետի իր կատարման մասին) և Վահրամ Փափազյանը, որի «Իմ Օթելլոն», «Համլետը ինչպես տեսա» և «Արքա Լիրը» գիտական փայլուն ուսումնասիրություններ են:

1890-ական թթ. Հայ շեքսպիրյան թարգմանությունները և նրանցով կատարված բեմադրությունները նոր թռիչք ապրեցին: 1894-1898 թթ. Թիֆլիսում, մեկը մյուսի ետևից լույս տե-

սան մեծավաստակ, դասական թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի (1864-1931) «Համլետ իշխան Դանեմարքի», «Ինչպես կուզեք», «Ռոմեո և Ջուլիետ», «Արքա Լիր» բնագրից կատարված թարգմանությունները, որոնք իսկույն գրավեցին թատերական գործիչների ուշադրությունը:

Մասեհյանի թարգմանություններով բեմադրություն տալու նախաձեռնողը եղել է դերասան Հովհաննես Արեւյանը, որը Հայ շեքսպիրյան թատրոնի վաստակաշատ գործիչներից մեկն է: Շեքսպիրյան խաղացանկում նա կատարել է տասը դեր, որից՝ Օթելլոն - 40 տարի, Արքա Լիրը՝ 25: 1894-1899 թթ. նա երկու անգամ փորձել է «Համլետ» բեմադրել ու Համլետ խաղալ, չի հաջողվել: Բաքվում և Թիֆլիսում դերաբաշխումներ է արել, Մասեհյանի տեքստի վրա աշխատել - անօգուտ: Պիեսի բեմադրության թույլտվություն ստանալու համար նրան մերժել են, որովհետև թույլատրված պիեսների շարքում Մասեհյանի թարգմանությունը նշված չի եղել և խորհուրդ են տվել Պ. Վեյլինբերգի թարգմանությամբ խաղալ:

Ի դեպ է ասել, որ Արեւյանն առաջին Հայ դերասանն է, որ 1899-ին Եվրոպա կատարած ճամփորդության ժամանակ ուխտի է գնացել Շեքսպիրի ծննդավայրը՝ Ստրետֆորդ:

Համանման մի դեպք էլ պատահել է Սիրանույշի հետ: 1903-ին իր խմբով Թիֆլիսից Երևան եկած դերասանուհին ցանկացել է այստեղ ևս Համլետ խաղալ: Ոստիկանատանը Սիրանույշի ներկայացուցիչը նույն պատասխանն է ստացել, ինչ որ Արեւյանը: «Բարի» ոստիկանապետը խորհուրդ է տվել «Համլետը» խաղալ թույլատրված՝ Դ. Ավերկիևի թարգմանությամբ: Հնարամիտ դերասանները (Անդրանիկը թե՞ Իսահակ Ալիխանյանը) համաձայնել են, ազդագրի վրա թարգմանչի դիմաց գրել են Ավերկիևի ազգանունը, բայց խաղացել Մասեհյանի թարգմանությամբ:

Շեքսպիրի հետ մի պատահար էլ տեղի է ունեցել 1944-ին, Թեհրանում: Դերասան Միքայել Կոստանյանը մտադիր լինելով «Օթելլո» բեմադրել, գնացել է համապատասխան հաստատություն թույլտվություն ստանալու, մերժել են: Օրերից մի օր էլ կոմպոզիտոր Աշոտ Պատմազրյանն իր գործով գնացել է նույն

¹ Մշակ, 1887, № 44:

պաշտոնյայի մոտ և հանդիպել Մ. Կոստանյանին: Մտքերի փոխանակությունից հետո, Պատմագրյանը խոստացել է օգնել: Պաշտոնյան արդարանալով ասել է, որ ես չեմ կարողանում այդ մարդուն համոզել, որ Յագոն թող ասի թաշկինակը ես եմ գտել ու վերադարձնի Օթելլոյին, հաշտվեն: Պատմագրյանն ասել է՝ ախր Շեքսպիրն այդպես չի գրել: Պաշտոնյան ինքնավստահությամբ ասել է՝ դուք բերեք այդ Շեքսպիրին, ես նրան կհամոզեմ:

Ահա այսպիսի պայմաններում է զարգացել Հայ թատերական կյանքը: Եվ եթե այսօր Շեքսպիր ենք մեծարում, նախ և առաջ մենք պարտական ենք Հայ թատրոնի դերը բարձրացնող այն դերասաններին, ռեժիսորներին, թարգմանիչներին, որոնք ամբողջովին նվիրված են եղել իրենց կոչումին ու ծառայությանը:

Այսուամենայնիվ, Մասեհյանը հաղթանակել է: 1900-ից նա հաղթականորեն մտել է Հայ թատրոն, այնտեղից երբեք դուրս չգալու հաստատ համոզվածությամբ: Այդ թվականի փետրվարի 5-ին Բաքվում, առաջին անգամ Հայ թատրոնում, Գևորգ Պետրոսյանը բեմադրել է «Արքա Լիրը» ինքն էլ մարմնավորել գլխավոր հերոսի դերը: Միջանկյալ ասենք, որ Պետրոսյանն առաջին անգամ Արքա Լիր է խաղացել 1896-ին, Աստրախանում, ռուսական խմբի հետ, ռուսերեն: Նրա շեքսպիրյան խաղացանկն սկսվել է 1884-ից, երբ Ադամյանի պետերբուրգյան հյուրախաղերին եղել է նրա Լաերտը «Համլետում»: Այնուհետև խաղացել է Օթելլո, Կլավդիոս և այլ դերեր:

Ցնծությունը մեկ տարի հետո պետք է լիներ: Մեկ տարում երեք Համլետ, բոլորն էլ Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում: Ապրիլի 6-ին՝ Համլետ – Կարապետ Գալֆայան, 22-ին՝ Համլետ – Նիկողայոս Հովհաննիսյան, նոյեմբերի 19-ին՝ Համլետ – Սիրանույշ:

Գալֆայանը շատ է խաղացել թե Համլետ և թե Օթելլո – Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Բուլղարիայում, Եգիպտոսում և այլուր, ունեցել է զնահատողներ և քննադատողներ, նույնիսկ հալածվել, բայց համարվել է շեքսպիրյան թատրոնի դերասան:

Հովհաննիսյանն իր թե՛ թատերախմբերի ղեկավարների բնավորությունը չհամընկնելու պատճառով գրեթե միշտ սիրողների հետ է խաղացել – Համլետ, Օթելլո: Նրա գործունեության վառ շրջանը եղել է 1906-ին, Ալեքսանդրապոլում աշխատելիս, ղեկավարել է Հայ դրամատիկ նոր խումբը:

Սրանցից շեքսպիրյան բախտը ժպտացել է Սիրանույշին՝ Արևելքի ժողովուրդների պատմության մեջ Համլետի առաջին կին դերակատարին, որը 1901–1922 թթ. չուրջ քսան քաղաքում, ավելի քան 40 անգամ հանդես է եկել Համլետի դերում: 1907-ին Բաքվի Ա. Ն. Կրուչինինի հրավերով Սիրանույշը Հայերեն Համլետ է խաղացել ռուսական խմբի հետ, ինչպես իրենից առաջ Պ. Ադամյանը, իրենից հետո՝ Վ. Փափազյանը:

Սիրանույշը առաջին կին Համլետը լինելուց բացի, նաև Օֆելյայի առաջին դերակատարն է: Համլետի դերում կին դերակատարներից նրան հաջորդել են Արաքսի Օհանյանը (Կահիրե), Ժասմեն Գևորգյանը (Երևան):

1900–1910-ական թթ. անդրկովկասյան թատրոնի շեքսպիրյան պիեսների բեմադրություններում իրենց վառ անհատականությունն են դրսևորել Ամո Նարազյանը (Օթելլո, Համլետ, Արքա Լիր), Արմեն Արմենյանը և Միքայել Մանվելյանը (Ցագո, Շայլոկ), Օլգա Մայսուրյանը, Օլգա Գուլազյանը, Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Ժասմենը, Լյուսի Սևուճյանը, Արուս Ոսկանյանը (Դեզդեմոնա, Օֆելյա, Կորդելիա, Կատարինե և այլ դերեր), Սաթենիկ Ադամյանը, որը Արչավիր Շահխաթունու հետ սկզբնավորել են «Ռոմեո և Զուլիետի» բեմական պատմությունը և շատ ուրիշներ:

1908 թվականի օսմանյան սահմանադրությունից հետո որոշ աշխուժացում է սկսվել Թուրքիայում, նոր խմբեր են կազմակերպվել Կ. Պոլսում, Իզմիրում և այլ քաղաքներում: Թատերական այս եռուզեռի մեջ գլուխ է բարձրացրել Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի սան Վահրամ Փափազյանը, մի դերասան, որն աշխարհում միակ մարդն է, որ հինգ լեզվով Շեքսպիր է խաղացել – Հայերեն, իտալերեն, թուրքերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերենով հանդես է եկել նաև

Բաքվի և Թիֆլիսի աղբբջանական թատրոններում, որոնք այն ժամանակներում (1920-1930-ական թթ.) կոչվում էին Թուրքաց թատրոն: Փափազյանը նաև միակ դերասանն է, որ թիվ ու հաշիվ չկա նրա այցելած-խաղացած քաղաքներին՝ Թուրքիա, Եգիպտոս, եվրոպական երկրներ, Փարիզից ամբողջ Ռուսաստանով մինչև Հեռավոր Արևելք և իր մշտական օրրան՝ Անդրկովկաս:

Փափազյանին է պատկանում նաև այն առաջնությունը, որ 4.000-ից ավելի անգամ Օթելլո է խաղացել՝ սևացնելով գլուխը, թևերը, պարանոցը, կուրծքը: Գիտական առումով էլ նա բացառիկներից բացառիկն է, որն ընտիր հայերենով շարադրել է Օթելլոյի, Համլետի, Արքա Լիրի - իր դերակատարումների պատմությունը անթիվ համեմատություններով, մեկնաբանություններով, խաղընկերների աշխատանքը բնութագրելով, իր մոտեցումները վերլուծելով: Հիրավի, նա մի հսկայական ուսումնական հաստատություն է, որի արժեքն ու գնահատականը, ցավոք, մենք դեռ չենք տվել:

Թեև երիտասարդություն տարիներին Փափազյանը վարպետության շատ դասեր է ստացել իտալական և ֆրանսիական թատերախմբերի հետ երկրե-երկիր շրջելով ու դերեր խաղալով, բայց նրա գերագույն դպրոցը եղել է ազգային թատրոնը, փայլել է հոգեբանական բարդ ու դժվարին դերերի կատարմամբ, բայց նրան խորթ չեն եղել ազգային դասական ու ժամանակակից դրամատուրգների գործերում հանդես գալը, կինոյում նկարահանվելը, հեռուստատեսությունում ելույթ ունենալը: Այո, Վահրամ Փափազյանը բացառիկ եզակի երևույթ է մեր մուրրակի ժողովուրդների պատմության մեջ:

1910-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը (1937) չեքսպիրյան դերերով մեր թատրոնի պատմության մեջ կարևոր տեղ է գրավել Հովհաննես Զարիֆյանը: Նա և դերասան Մանվել Մարությանը (1901-1986) կարող են մրցել միմյանց հետ, թե ով է ավելի շատ հանդես եկել հայկական շրջանակներում՝ Անդրկովկաս, Իրան, Թուրքիա, եվրոպական երկրներ, Եգիպտոս, Հարավային և Հյուսիսային Ամերիկաներ - ուր հայ կա, ում պետք է հոգով ու գիտակցությամբ հայ պահել:

Շեքսպիրյան թատրոնում Զարիֆյանը մարմնավորել է ջրասան դեր, բայց մշտական կատարումները եղել են Համլետն ու Օթելլոն: Մարությանի հիմնականը - եղել է Օթելլոն: Սրանց երրորդությունը լրացրել է Տրդատ Նշանյանը, որը պակաս դեր չի խաղացել եվրոպական երկրներից բացի, միջին արևելյան երկրներում ևս թատրոնի լուսատու կայծը վառ պահելու գործում: Շեքսպիրյան կերպարներից նա մարմնավորել է Համլետին, Օթելլոյին, Արքա Լիրին:

Իրանում, Սիրիա - Լիբանանում, Հնդկաստանում և այլուր, երկար տարիներ Օթելլո է մարմնավորել Միքայել Կոստանյանը: Ահա մի բացառիկ չեքսպիրյան ընտանիք, որտեղ հայր և մայր (Մարգո) Կոստանյանները խաղացել են Օթելլոյի և Դեզդեմոնայի, իսկ զավակները՝ Վուլոդյան և Սեդան - Ցագոյի և Էմիլյայի դերերը:

Հրաչքների երկիր է Շեքսպիրյան թատրոնի Հայաստանը:

Եղած թարգմանություններին ավելացել են նորերը: Հսկայական թոփչք է կատարել բանաստեղծ և թարգմանիչ Սաչիկ Դաշտենցը: Եարունակելով մասեհյանական թարգմանչական ավանդները, Դաշտենցը թարգմանել է չուրջ 20 պիես, որոնցից 10-ից ավելին բեմադրվել են Անդրկովկասի և Սփյուռքի թատրոններում:

Գրեթե բոլոր առաջատար թատրոններն ունեցել են իրենց չեքսպիրյան բեմադրությունները, անգամ ուսանողական թատրոնում: Քանի՞ թատրոն կգտնվի, որ մի բեմադրության մեջ երեք Համլետ խաղան նույն թատերաշրջանում - Վաղարշ Վաղարչյան, Գուրգեն Զանիբեկյան, Վահրամ Փափազյան: Սունդուկյանի անվան թատրոնի այս մեծահամբավ դերասանները խաղացել են նաև Օթելլո - Գ. Զանիբեկյան, Հրաչյա Ներսիսյան, Վ. Փափազյան: Արքա Լիր են խաղացել Վ. Փափազյանը և Հ. Ներսիսյանը, իրենց հմայքի տակ պահելով թե բեմի խաղընկերներին և թե դահլիճի հանդիսատեսներին:

Թատրոնի անվանի վարպետների հետ հանդիսատեսի ուշադրությունն են արժանացել Ավետ Ավետիսյանը (Ցագո), Դավիթ Մալյանը (Ցագո, Կլավդիոս), Ռուզաննա Վարդանյանը, Սյուզան Գարազաչը, Ամալյա Արազյանը, Մայրանուշ Գարո-

նիկյանը, Լյուսյա Հովհաննիսյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Մարգո Մուրադյանը և ուրիշները, որը՝ Դեզոդմոնա, որը՝ Օֆեյյա, որը՝ Կորդելիա և ուրիշ դերեր: Հիշարժան են Սոս Մարգսյանի Ցագոն, ՄՀեր Մկրտչյանի Մերկուտիոն և այլ դերակատարներ:

Սունդուկյանի անվան թատրոնը հետագա ճանաչում գտավ Ոորեն Աբրահամյանի Օթեյլոյով և Կորիդլանով: Վերջինիս բեմադրությունը 1981-ին արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Ամենից շատ, բնականաբար, որպես հին և մայր թատրոն, Սունդուկյանի անվան թատրոնն է չեքսպիրյան բեմադրություններ ունեցել: Պակաս չեն նաև Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական, Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի, Պատանի հանդիսատեսի թատրոնների բեմադրությունները: Մայրաքաղաքից դուրս՝ Գյումրիի և Վանաձորի, Ստեփանակերտի և հանրապետությունից դուրս՝ Թբիլիսիի, Բաքվի (1949-ից դադարած) թատրոնների բեմադրությունների արժանիքները մեր մշակութային կյանքի պատմության համար:

Սփյուռքահայ թատերական կյանքն էլ իր չեքսպիրյան տարեգրությունն ունի՝ Եգիպտոս (Օննիկ Վոլթեր, Արաքսի Օհանյան), Ֆրանսիա (Գառնիկ Բարիլուսյան, Ոորեն Փափազյան), Կ. Պոլիս (Գևորգ Գապարաճյան), Լիբանան (Պերճ Ֆազյան, Վարուժան Նտրչյան, Գրիգոր Սաթամյան): Իսկ եթե նկատի ունենանք հայերի մասնակցությունը համաշխարհային թատրոնի չեքսպիրյան բեմադրություններին, ապա ո՞ւր ասեք, որ հայ թատերական գործիչ չի աշխատել, չեքսպիրյան պիեսների բեմադրությունների մասնակից չի եղել: Շեքսպիրը միշտ և ամենուրեք հայերին մերձեցրել է օտար ժողովուրդների հետ, բարեկամացրել, ստեղծել թատերական գործիչների միասնական մի հզոր ընտանիք:

Հայ չեքսպիրյան թատրոնի բեղմնավոր գործունեության ծնունդ է նաև չեքսպիրագիտության զարգացումը Հայաստանում: Շեքսպիրագիտական միտքը հարստանալու շնորհիվ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանի նախաձեռնու-

թյամբ, ինստիտուտին կից ստեղծվել է Հայկական չեքսպիրագիտության կենտրոն և չեքսպիրյան գրադարան: Կենտրոնի գիտաշխատողների և տարբեր վայրերի գիտնականների չեքսպիրյան թեմաներով գրած աշխատությունների առկայության պայմաններում 1966-ից սկսել են լույս տեսնել «Շեքսպիրական» (7 գիրք) տարեգրքեր, որոնցում լուսաբանվել են չեքսպիրյան թեմաներին առնչվող բազմապիսի հարցեր – թատրոն, երաժշտություն, կինո, կերպարվեստ, թարգմանչական արվեստ, հրապարակումներ, թարգմանություններ, նամակներ, տարեգրություն – մի խոսքով հայկական չեքսպիրագիտության հանրագիտարան: Իսկ գրադարանում 3 տասնյակից ավելի լեզուներով Շեքսպիրի գործերի հրատարակություններ, չեքսպիրագիտական գրականություն, ձեռագիր թարգմանություններ, գրական-թատերական գործիչների անձնական իրեր – փոքրիկ թանգարան:

Շեքսպիրագիտության լայն պրոպագանդումը նպաստեց այն բանին, որ Հայաստանի թատերական գործիչների միությունը շարունակելով 1944, 1981 և 1984 թթ. չեքսպիրյան ներկայացումների փառատոնը, այն դարձրեց ամենամյա փառատոն, որը 2008-ից կրում է Վահրամ Փափազյանի անունը: Այդ փառատոնների ընթացքում հայ հանդիսատեսը հնարավորություն է ունենում հաղորդակից դառնալ այլ երկրների ու ժողովուրդների չեքսպիրյան ըմբռնումներին, ձգտումներին, մշակույթին: Այդ ճանապարհով հայ բեմի գործիչներն էլ իրենց հերթին մասնակցում են արտասահմանյան երկրների չեքսպիրյան փառատոններին, ցուցադրում հայկական արվեստը և զոհ ու զնահատված սրտով տուն վերադառնում:

Մոտենում է Շեքսպիրի ծննդյան 450-ամյակը (2014) և մահվան 400-ամյակը (2016): Հայ թատերական գործիչներն այդ տոները դիմավորելու են ակնառու նվաճումներով: Այնպիսի մի փոքրաթիվ ժողովուրդ, ինչպիսին հայերն են, անցած 150 տարվա ընթացքում 85 թարգմանչի կողմից ամբողջովին կամ մասնակի թարգմանվել է 36 պիես, որոնցից 25-ը ունեն իրենց բեմական պատմությունը: Շեքսպիրից հրատարակվել է 10 ժողովածու, առանձին գրքերով՝ 53-ը, որոնցից «Օթեյլոն» ու

«Ռոմեո և Ջուլիետը» տպագրվել են 6 անգամ, «Արքա Լիրը» – 7, «Համլետը» – 9: Շեքսպիրյան թեմաներով լույս են տեսել 67 գիրք և յոթ հատոր «Շեքսպիրական» տարեգիրք: Հայերը շեքսպիրյան թատրոնին տվել են ավելի քան 92 Օթելլո, 78 Համլետ: Շեքսպիրի հերոսների խոսքերը հայերեն հնչել են աշխարհի 200-ից ավելի վայրերում: Պաշտպանվել են 3 դոկտորական, 14 թեկնածուական դիսերտացիաներ: Սրանք պերճախոս թվեր են, որոնց թիվունքում մեկ ու կես դարյա հարուստ պատմություն կա, որոնք պատիվ են բերում հայ շեքսպիրագիտության պատմությանը, հայ թատրոնին, նրա նվիրյալ մշակներին:

Բախտխար Հովակիմյան

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

անգլ. – անգլերեն
 արաբ. – արաբերեն
 արքեպ. – արքեպիսկոպոս
 բնագր. – բնագրից
 ԳԱԹ – Ջարենցի անվան
 գրականության և ար-
 վեստի թանգարան
 գերմ. – գերմաներեն
 գյ. – գյուղ
 գործ. – գործողություն
 Ե., Եր. – Երևան
 եպ., եպիսկ. – եպիսկոպոս
 թարգմ. – թարգմանություն
 թուրք. – թուրքերեն
 ժող. – ժողովրդական
 իտալ. – իտալերեն

խմբ. – խմբագրում
 Հ. – հատոր
 պարսկ. – պարսկերեն
 պրոֆ. – պրոֆեսոր
 ռուս. – ռուսերեն
 ստեղծ. խմբ. – ստեղծագոր-
 ծական խմբագրում
 վարդ. – վարդապետ
 տես., տեսար. – տեսարան
 ուսումնակ. – ուսումնական
 քաՆ. – քահանա
 Փրանս. – Փրանսերեն
 Եք. – Երևան
 Մ. – Մոսկվա
 Մ.-Ա. – Մոսկվա-Լենինգրադ
 չ. – հատոր

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅԵՐԵՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Ընտիր երկեր, երեք հատորով, Հովհաննես Մամիկոնյանի խմբագրությամբ ու առաջաբանով, Եր.:

Հ. 1, 1951, 596 էջ, Հովհաննես Մասեհյանի թարգմանությամբ:

Համլետ, Օթելլո, Մակբեթ, Արքա Լիր, Ռոմեո և Ջուլիետ (թարգմ. Ս. Դաշտենց), Վենետիկի վաճառականը:

Հ. 2, 1953, 576 էջ, Սաչիկ Դաշտենցի թարգմանությամբ:

Մխալների կոմեդիա, Անսանձ կնոջ սանձահարումը, Վերոնայի երկու ազնվականները, Սիրո ապարդյուն ճիգերը, Տասներկուերորդ գիշեր կամ ինչ որ կամենաք, Վինձորի զվարճասեր կանայք, Միջամառնային գիշերվա երազ (թարգմ. Վ. Սուրենյանց), Իզուր տեղը մեծ աղմուկ:

Հ. 3, 1955, 472 էջ, Սաչիկ Դաշտենցի թարգմանությամբ:

Ռիչարդ Երրորդ, Հուլիոս Կեսար, Անտոնիոս և Կլեոպատրա, Տիմոն Աթենացի, Ձմեռային Հեքիաթ (թարգմ. Ս. Ալաջաջյան):

Ընտիր երկեր, երկու հատորով, Եր.:

Հ. 1, 1964, 908 էջ:

Համլետ, Օթելլո, Մակբեթ (թարգմ. Հ. Մասեհյան), Լիր Արքա, Ռոմեո և Ջուլիետ (թարգմ. Ս. Դաշտենց), Վենետիկի վաճառականը (թարգմ. Հ. Մասեհյան):

Հ. 2, 1964, 960 էջ:

Ռիչարդ Երրորդ, Հուլիոս Կեսար, Տիմոն Աթենացի (թարգմ. Ս. Դաշտենց), Ձմեռային Հեքիաթ (թարգմ. Ս. Ալաջաջյան), Կորիոլան (թարգմ. Ս. Դաշտենց):

Կոմեդիաներ, Եր., 1946, 389 էջ:

Տասներկուերորդ գիշեր, Սխալների կոմեդիա, Վերոնա-
յի երկու ազնվականները (Թարգմ. Ս. Դաշտենց), Ոչնչից
մեծ աղմուկ (Թարգմ. Վ. Թերզիբաչյան):

Շերկեր, Բեյրութ, 1967 (Թարգմ. Հ. Մասեհյան):

Անտոնիոս և Կլեոպատրա (էջ 3-144), Բազում աղմուկ
վասն ոչնչի (էջ 1-104), Փոթորիկը (էջ 1-86):

Երկեր, Ուսանողի գրադարան մատենաչար, Եր., 1991, 768 էջ:

Համլետ, Օթելլո, Մակբեթ, Արքա Լիր (Թարգմ. Հ. Մա-
սեհյան), Տասներկուերորդ գիշեր, Սխալների կոմեդիա
(Թարգմ. Ս. Դաշտենց), Սոնետներ, պոեմներ, բանաս-
տեղծություններ (Թարգմ. Ս. Մկրտչյան):

Քրոնիկներ, երկու հատորով, Ուաշինգ Դաշտենցի և Հենրիկ Սե-
վանի թարգմանությամբ, Եր.:

Հ. 1, 1972, 536 էջ: Ս. Դաշտենցի թարգմանությամբ:

Ռիչարդ Երկրորդ, Հենրի Չորրորդ, մասն առաջին,
Հենրի Չորրորդ, մասն երկրորդ, Հենրի Հինգերորդ:

Հ. 2, 1973, 683 էջ: Հ. Սևանի թարգմանությամբ:

Հենրի Վեցերորդ, մասն առաջին, Հենրի Վեցերորդ,
մասն երկրորդ, Հենրի Վեցերորդ, մասն երրորդ, Ռիչարդ
Երրորդ (Թարգմ. Ս. Դաշտենց):

ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոմերոս և Ճյուլեզդա (Մթիվրնսի, Մալոնի և Ջոնարնի օրի-
նականից թարգմ. Արամ Կ. Հ. Տետյան), Ջմյունիա,
1866, ԻԹ+112 էջ:

Օթելլո Վենետիկի մավր (ռուսերենից թարգմ. Ստեփանոս
Սուլխանյան), Տփլիս (Թիֆլիս), 1880, 168 էջ:

Աստղիկ և Ադոնիս (Վեներա և Ադոնիս, թարգմ. Արթաքի Համ-
բարգաթան), Կ. Պոլիս, 1886, 61 էջ:

Լիր թագավոր (գերմ. թարգմ. Ստեփանոս Մալխասյանց), Ս.
Պետերբուրգ, 1888, ԺԳ+186 էջ:

Ջուր տեղը մեծ աղմուկ (գերմ. թարգմ. Հովհաննես Լալայան),
Թիֆլիս, 1888, 111 էջ:

Համլետ (ֆրանսերեն և ռուսերեն մի քանի թարգմանության
համեմատությամբ, թարգմ. Սենեքերիմ Արծրունի), Թիֆ-
լիս, 1889, VII+125 էջ:

Մակբեթ (գերմ. թարգմ. Ստ. Մալխասյանց), Թիֆլիս, 1892,
ԺԸ+108 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքի (բնագր. թարգմ. Հովհաննես
Մասեհյան), Թիֆլիս, 1894, 222 էջ:

Ինչպես կուզեք (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս, 1895,
159 էջ:

Ռոմեո և Ջուլիետ (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս,
1896, 189 էջ:

Վենետիկի վաճառականը (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան),
Թիֆլիս, 1897, 133 էջ:

Արքա Լիր (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս, 1898, 180
էջ:

Համլետ (բնագր. թարգմ. Գարեգին Բաբազյան), Վիեննա,
1899, ԺԶ-ԻԳ+183 էջ:

Օթելլո (բնագր. թարգմ. Գ. Բաբազյան), Կահիրե, 1904, է-Թ+
186 էջ:

Հուլիոս Կեսար (բնագր. թարգմ. Մաթիլդ Պաղտասարյան), Կ.
Պոլիս, 1910, 153 էջ:

Անտոնիոս և Կլեոպատրա (բնագր. թարգմ. Գառնիկ Տնտքըլ-
յան-Փառնակ), Փարիզ, 1911, 108 էջ:

Միջամառնային գիշերվա երազ, «Հուշարարի» մատենադա-
րան, № 14 (բնագր. թարգմ. Վարդգես Սուրենյանց),
Թիֆլիս, 1912, 63 էջ:

Ռոմեո և Ջուլիետ (բնագր. թարգմ. Մեսրոպ Նուպարյան), Իզ-
միր, 1912, ԺԳ+176 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքայի (առանց թարգմանչի անվան և
հրատարակության տարեթվի, <1920-1921 թթ.>), Կ. Պո-
լիս, տպարան Տեր-Սահակյանի, 135 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքայի (թարգմ. Հ. Մասեհյան, երկ-
րորդ վերամշակված հրատարակություն), Վիեննա, 1921,
XXXIII+161 էջ:

Վենետիկի վաճառականը (Թարգմ. Հ. Մասե՛յան, երկրորդ վերամշակված հրատարակություն), Վիեննա, 1922, V-XXXIX+111 էջ:

Օթելլո Վենետիկի մավրը (Թարգմ. Հ. Մասե՛յան), Վիեննա, 1922, V-XXII+151 էջ:

Օթելլո (Թարգմանիչը չի նշված), Կ. Պոլիս (Օ. Փելլոյանի տպագրություն), 1922, 154 էջ:

Մակրեթ (Թարգմ. Հ. Մասե՛յան), Վիեննա, 1923, V-XLVII+111 էջ:

Վենետիկի վաճառականը (Թարգմ. Հ. Մասե՛յան), Պետհրատի էժանագին գրադարան մատենաչար, ՊէԳ, Եր., 1933, 171 էջ:

Մակրեթ (Թարգմ. Հ. Մասե՛յան), ՊէԳ, Եր., 1934, 162 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքայի (Թարգմ. Հ. Մասե՛յան), ՊէԳ, Եր., 1936, 228 էջ:

Օթելլո Վենետիկի մավրը (Թարգմ. Հ. Մասե՛յան, բնագրի հետ համեմատությունյամբ խմբ. Վ. Թոթովենց), ՊէԳ, Եր., 1936, 216 էջ:

Արքա Լիր (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., 1938, 220 էջ:

Հուլիոս Կեսար (բնագր. Թարգմ. Ս. Դաշտենց, առաջաբանը՝ Վ. Թերզիբաչյանի), Եր., 1944, 108 էջ:

Տիմոն Աթենացի (բնագր. Թարգմ. Ս. Դաշտենց), Եր., 1950, 152 էջ:

Լիր Արքա (Թարգմ. Ս. Դաշտենց), Եր., 1961, 130 էջ:

Համլետ (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., 1961, 139 էջ:

Հուլիոս Կեսար (Թարգմ. Հ. Մասե՛յան), Վենետիկ, Ս. Ղազար, 1962, 123 էջ:

Ռոմեո և Ջուլիետ (Թարգմ. Հ. Մասե՛յան, երկրորդ վերամշակված հրատարակություն), Թեհրան, 1962, 160 էջ:

Կորիոլան (Թարգմ. Հ. Մասե՛յան), Վենետիկ, Ս. Ղազար, 1962, 165 էջ:

Համլետ (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., 1966, 264 էջ:

Ռիչարդ Նորրոգ (բնագր. Թարգմ. Գևորգ Դարժի [Հովհաննիսյան]), Թեհրան, 1966, 217 էջ (Թարգմանությունը նվի-

րել է «Շեքսպիրի հայ հանճարեղ թարգմանիչ Հովհաննես Մասե՛յանի անմահ հիշատակին»):

Լիր Արքա (Թարգմ. Ս. Դաշտենց), Եր., 1970, 239 էջ:

Մակրեթ (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., 1971, 174 էջ:

Ռոմեո և Ջուլիետ (Թարգմ. Ս. Դաշտենց), Եր., 1974, 240 էջ:

Օթելլո (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., 1980, 235 էջ:

Տիտոս Անդրոնիկոս (բնագր. Թարգմ. Հենրիկ Սևան), Եր., 1983, 160 էջ:

Երկերի լիակատար ժողովածու 39 զրբում:

Գիրք 1. **Պերիկլես** (բնագր. Թարգմ. Հ. Սևան), Եր., 1997, 140 էջ:

Գիրք 2. **Տիտոս Անդրոնիկոս** (Թարգմ. Հ. Սևան), Եր., 1997, 150 էջ:

Գիրք 3. **Սիմբելին** (Թարգմ. Հ. Սևան), Եր., 1997, 195 էջ:

Գիրք 4. **Փոթորիկը** (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., <1998>, 125 էջ:

Գիրք 5. **Ամեն ինչ լավ է, թե լավ վերջանա** (Թարգմ. Հ. Սևան), Եր., 2006, 200 էջ:

Լուկրեցիայի պատվազրկումը (բնագր. Թարգմ. Ս. Մկրտչյան), Եր., 2003, 71 էջ:

Արքա Լիր (Թարգմ. Հ. Մասե՛յան, ստեղծագ. խմբ. Ե. Չարենց), Եր., 2006, 220 էջ:

Արքա Լիր (Թարգմ. Հ. Մասե՛յան, ստեղծագ. խմբ. Ե. Չարենց), Եր., 2007, 137 էջ:

Համլետ (Թարգմ. Հ. Մասե՛յան), Եր., 2008, 143 էջ:

Ռոմեո և Ջուլիետ (Թարգմ. Ս. Դաշտենց), Եր., 2008, 115 էջ:

**ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՎ ԳՐԳԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ
ՄԱՍՆԱԿԻ ԵՎ ԱՄՐՈՂՋԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1822. — Կալկաթայի «Շտեմարան» հանդեսում, խմբագիր Մարտիրոս Մկրտչյանի և ուրիշների թարգմանությունյամբ փոքրիկ մեջբերումներ են կատարվել «Ամառնային գի-

- չերվա երազ», «Համլետ», «Վերոնայի երկու ազնվականները» պիեսներից:
1848. – Կալկաթայի «Ազգասեր» Հանդեսի (№ 130, էջ 46) խմբագիր Մեսրոպ Թաղիադյանը տպագրել է մի հատված «Հուլիոս Կեսարից» (3-րդ գործ., 2-րդ տես.), «Հրապարակախոսություն Բրուտոսի ի վերա մահվան Կեսարու» վերնագրով:
- 1853, Հունիս-Հուլիս. – Չմյուռնիայի «Արփի Արարատյան» թերթում, Արամ Տետեյանի թարգմանությունում, որպես հավելված, տպագրվել է մի հատված «Կատակերգություն սխալանաց» պիեսից:
- 1853, Հունիս. – Վենետիկի «Բազմավեպ» Հանդեսում, Խ. Գ.-ի (Նորեն Գալֆայան) թարգմանությամբ, տպագրվել են Անտոնիոսի և Բրուտոսի ճառերը «Հուլիոս Կեսարից» (№ 11, էջ 163–166, 3-րդ գործ., 2-րդ տես.):
1862. – Չմյուռնիայի «Հավերժահարս» Հանդեսում, Արամ Տետեյանի թարգմանությամբ, ամբողջը՝ մաս-մաս (№ 1–12) տպագրվել է «Վենետիկի վաճառականը»:
1862. – Չմյուռնիայի «Դիմակ» Հանդեսում, Արամ Տետեյանի թարգմանությամբ, տպագրվել են «Համլետի» Ա. արարվածի Ա, Բ, Գ, Դ, Ե տեսարանները և Բ. արարվածի Ա տեսարանը (չարունակությունը մնացել է անտիպ Հանդեսի փակման պատճառով):
- 1862, մարտ. – Չմյուռնիայի «Ծաղիկ» Հանդեսում (№ 25–26), Նուպար Գաղտալյանի թարգմանությամբ ու առաջաբանով տպագրվել է Ռոմեոյի և Ջուլիետի («Ռոմեո և Ջուլիետ») Հանդիպման տեսարանը (2-րդ գործ., 2-րդ տես.):
1877. – Վենետիկի «Բազմավեպում» Մխիթարյան ուխտի միաբան Արիստակես Ղասղանտիլի (Քասզանտիլյան) թարգմանությամբ, մաս-մաս (ամբողջությամբ) տպագրվել է «Մակբեթը»:
1877. – «Բազմավեպի» Լե հատորում (էջ 124–131), Ա. Ղասղանտիլի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Հենրիկոս Ը արքա» ողբերգությունից (4-րդ գործ., 2-րդ տես.):
1879. – Թիֆլիսի «Փորձ» Հանդեսի առաջին և երկրորդ Համարներում, Գևորգ Բարխուդարյանի թարգմանությամբ (ամբողջովին, գերմաներենից) տպագրվել է «Վենետիկի վաճառականը»:
1886. – Կ. Պոլսի «Մասիսում» (№ 3819, էջ 875–880), Արթաքի Համբարգաթանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Ռոմեո և Ջուլիետից»:
- 1889, Հունիս. – Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում (№ 6), Ս. Արծրունու՝ «Համլետի» թարգմանության մասին գրախոսականում, Համեմատության կարգով, հատվածներ են տպագրվել Ավետիք Եզեկյանի թարգմանած «Համլետից»:
- 1891–1892. – Կ. Պոլսի «Ծաղիկ» Հանդեսի մի շարք Համարներում, Արթաքի Համբարգաթանի թարգմանությամբ տպագրվել է «Վենետիկի վաճառականը»:
1894. – «Բազմավեպում» (№ 9, էջ 427–429), Արիստակես Քասզանտիլյանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Համլետից»:
- 1898, Մոսկվա. – Մկրտիչ Էմինի երկասիրությունները Հայոց լեզվի, գրականության և պատմության մասին (1840–1850) գրքի ճարտասանությանը նվիրված մասում տպագրվել են մեջբերումներ բնագրով և Էմինի թարգմանություններով՝ «Ռոմեո և Ջուլիետ» (3-րդ գործ., 2-րդ տես.), «Հենրի Ջորջորդ թագավոր» (2-րդ մաս, 1-ին գործ., 1-ին տես.), «Հուլիոս Կեսար» (4-րդ գործ., 3-րդ տես.), «Անտոնիոս և Կլեոպատրա» (5-րդ գործ., 2-րդ տես.) պիեսներից:
- 1899, Հունիս-դեկտեմբեր. – Չմյուռնիայի «Արևելյան մամուլ» Հանդեսում (№ 12–23), Լ. Պալեոզյանի թարգմանությամբ տպագրվել է «Վենետիկի վաճառականը»:
- 1900, մայիս. – Կ. Պոլսի «Արևելք» թերթում (№ 4312–4316), Ենովքի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Վենետիկի վաճառականից»:
- 1900, Հունիս. – Կ. Պոլսի «Արևելք» թերթում (№ 4353–4358), Ենովքի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Ամառնային գիշերվան երազ մը» պիեսից:

1903. — Ալեքսանդրիայի «Պարտեզ» Հանդեսում (№ 7, էջ 100–103), Հովհաննես Սեթյանի թարգմանությունը տպագրվել է մի հատված «Կորիդանուսից»:
1903. — Ալեքսանդրիայի «Պարտեզ» Հանդեսում (№ 9, էջ 130–138), Հովհաննես Սեթյանի թարգմանությունը տպագրվել է մի հատված «Հենրիկոս Ջ» քրոնիկից:
1913. — Կահիրեի «Գալուստյան միություն» Հանդեսում տպագրվել է մի հատված (№ 1, էջ 7–8), «Հուլիոս Կեսարից»: Թարգմանիչ՝ աշակերտ է. Հ. Սեթյան:
1916. — Թիֆլիսի «Տարազ» Հանդեսում, տպագրվել են առանձին հատվածներ Ավետիք Եզեկյանի թարգմանած «Համլետից»:
1926. — Կահիրեի «Փունջ Հայ և օտար գրականություն» Հանդեսում (պրակ 37, էջ 184–187), խմբագրի՝ Լևոն Աճեմյանի թարգմանությունը տպագրվել է մի հատված «Արքա Լիրից»:
1936. — Երևանի «Սորհրդային արվեստ» երկչաբաթաթերթում, Վահան Թոթովենցի թարգմանությունը տպագրվել է «Ռիչարդ Երրորդի» առաջին գործողությունը:
1951. — Նյու Յորքի «Նոր գիր» Հանդեսում (ամառ, № 2, էջ 97), խմբագրի՝ Բենիամին Նուրիկյանի թարգմանությունը տպագրվել է մի հատված «Ռիչարդ Բ» պիեսից:
- 1966, Երևան. — «Շեքսպիրական» տարեգրքի առաջին գրքում (էջ 251–267), Գաբրիել քահ. Պատկանյանի թարգմանությունը տպագրվել են հատվածներ «Համլետ Արքայորդի Դանիմարքայի» պիեսից:
- 1967, Երևան. — «Շեքսպիրական» տարեգրքի երկրորդ գրքում (էջ 337–500), Վահան Թոթովենցի թարգմանությունը (ամբողջովին) տպագրվել է «Անտոնիոս և Կլեոպատրա» պիեսը:
- 1972–1973, Բեյրութ. — «Շիրակ» ամսագրի տարբեր համարներում, Վարուժան Պետիկյանի՝ բնագրից կատարած թարգմանությունը տպագրվել է «Քաղում աղմուկ վան ոչնչի» կատակերգությունը:
- 1975, Երևան. — «Շեքսպիրական» տարեգրքի Հինգերորդ գրքում (էջ 521–524), Գրիգոր Նալաթյանի թարգմանու-

թյամբ տպագրվել են պատառիկներ «Համլետ» և «Ռիչարդ Երրորդ» պիեսներից:

— «Շեքսպիրականի» նույն տարեգրքում, Մելքոն Կյուրճյանի թարգմանությունը տպագրվել են հատվածներ «Մակբեթից», էջ 557–565:

2004, Երևան. — «Նոր Դար» Հանդեսում, Հովհաննես Մասեհյանի թարգմանությունը, պակաս էջերով, տպագրվել է «Ամառնամեջ գիշերվա երազը»:

1840, Москва. — В журнале "Пантеон русского и всех европейских театров" (№ 3) была напечатана пьеса "Буря", в переводе Матвея Гамазова (Матевос Гамазян).

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՍՈՒՑՔՆԵՐ

Հանուն Հայրենիքի (Համադրությունը՝ Սուրեն Գոչարյանի, թարգմ. ուսերենից՝ Սաքո Սուքիասյանի: Հատվածներ Հուլիոս Կեսար, Ռիչարդ Երրորդ, Տրոիլ և Կրեսիդա, Համլետ, Ջոն Արքա, Հենրի Չորրորդ (առաջին մաս), Սիմբելին, Պերիկլես, Հենրի Հինգերորդ, Հենրի Վեցերորդ (առաջին և երրորդ մասեր), Երկու Վերոնացի, Էդվարդ Երրորդ, Տիտոս Անդրոնիկոս, Երկու նշանավոր տոհմակիցներ, Կորիդան, Վեներա և Ադոնիս, Լուկրեցիա — գործերից: Եր., 1942, 31 էջ:

Վիլյամ Շեքսպիր, Աֆորիզմներ (քաղեց նշան Մուրադյանը), Եր., 1964, 84 էջ:

Шекспир в искусстве (կազմող և առաջարանի Հեղինակ Յակով Նաչիկյան), Եր., 1977, 200 էջ:

Շեքսպիրը արվեստի մասին (Հատվածներ և ասույթներ, կազմող՝ Յակով Նաչիկյան), Եր., 1985, 199 էջ:

Իմաստախոս Շեքսպիրը (աֆորիզմներ, Հայերեն և անգլերեն, կազմող՝ Սոնա Սեֆերյան), Եր., 1986, 339 էջ:

Վիլյամ Շեքսպիր. Աֆորիզմներ, ասույթներ, իմաստուն մտքեր (կազմող՝ Վ. Սահակյան), Եր., 2004, 91 էջ:

Իմաստախոս Շեքսպիրը (կազմող՝ Ս. Սեֆերյան), Եր., 2010, 375 էջ:

ՍՈՆԵՏՆԵՐ

Սոնետներ (բնագր. թարգմ. Դավիթ Դավթյան, Հովհաննես Քելեջյան, «Շեքսպիրն իբրև բանաստեղծ» – առաջաբանը՝ Հովհաննես Մամիկոնյանի), Եր., 1961, 170 էջ:

Սոնետներ (թարգմ. Գևորգ Էմին), Եր., 1995, 79 էջ:

Սոնետներ (բնագրով և հայերեն թարգմանությամբ Շեն-Մահի <Թորգոմ արքեպ. Մանուկյան>), Երուսաղեմ, 1996, V-XX + 315 էջ:

Սոնետներ (թարգմ. Սամվել Մկրտչյան), Եր., 1994, 311 էջ:

Սոնետներ (թարգմ. Սամվել Մկրտչյան), Եր., 2009, 110 էջ:

Սոնետների թարգմանիչներ՝

Աղամյան Պետրոս	Մասեհյան Հովհաննես
Անդրեասյան Բյուրակն	Մելեքյան Ե.
Անտոնյան Հակոբ	Ջանան Մկրտիչ
Գրաչի Աշոտ	Սուրենյանց Վարդգես
Թեքեյան Վահան	Սևակ Պարույր
Թումանյան Հովհաննես	Տարոնցի Սողոմոն
Համբարգարթյան Արթուր	Տեր-Անդրեասյան Երվանդ
Հովհաննիսյան Հովհաննես	Չնտքյան Գառնիկ
Հուրյան Թաթուլ	

ՓՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձին հրատարակություններ

Համլետ Դանիացի իշխան – «Համլետի» բովանդակության համառոտ, արձակ շարադրանքի թարգմանությունը ռուսերենից, (թարգմ. Սեյադ Ամիրյան), Բաքու, 1986, 2+48 էջ: Գիրքը նվիրվել է Պետրոս Աղամյանին:

Լիր թագավոր – (Ժողովրդական ընթերցանության համար փոխադրել է օր. Շուշանիկ Տեր-Նիկողոսյանը), Թիֆլիս, 1891, 38 էջ (երկու պատկեր):

Լիր Արքա – Վիկտոր Օստրոգորսկու ժողովածուից թարգմ. Տիրուհի Կոստանյան, Թիֆլիս, 1894, 42 էջ:

Վեպք ի դերից Շեկսպիրա – Չարլզ և Մերի Լեմերի (Լամբա) արձակ շարադրանքը Թ. Տեր-Ստեփաննոսյանի (Կալկաթա) թարգմանությամբ, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, 271 էջ:

Բովանդակությունը՝ Ռոմեո և Ջուլիետ, Վենետկացի վաճառականն, Օթելլո, Ջոննացուցնել կին ժանտաբնույթ, Համլետ, Դեր սխալանաց և շփոթի, Մակբեթ, Սիմբոլին, Տիմոն Աթենացի, Որպես և հաճո է քեզ, Արքայն Լիր, Փոթորիկն:

Ձմեռային հեքիաթ – Չարլզ և Մերի Լեմերի համառոտ շարադրությունը Հար(ություն) Նահապետյանի թարգմանությամբ, Թիֆլիս, 1904, 29 էջ:

Ձմեռային հեքիաթ – Ըստ Շեքսպիրի, վերակազմեց Ղազարոս Աղայանը, Թիֆլիս, 1910, 48 էջ:

Շեքսպիրյան պատմվածքներ, Վենետիկի վաճառականը – Չարլզ և Մերի Լեմերի արձակ շարադրանքը, թարգմանությունը Հովսեփ Տեր-Ստեփանյանի, Կ. Պոլիս, 1910, 31 էջ:

Շեքսպիրյան ավանդավեպեր – Չարլզ և Մերի Լեմերի արձակ շարադրանքը, թարգմանությունը՝ Մ. Վերածինի (Մինաս Գասպարյան), Բոստոն, 1922, 212 էջ:

Բովանդակությունը՝ Ռոմեո և Ջուլիետ, Փոթորիկը, Օթելլո, Կովասեր կնոջ ընտելացումը, Լիր Արքա, Ամառ գիշերվան երազ մը, Համլետ, Ձմեռվա պատմությունը, Վենետիկի վաճառականը, Աստվածահայտնությունը <Տասներկուերորդ գիշեր>:

Շեքսպիրյան ավանդավեպեր – Արքա Լիր, կազմեց՝ Գասպար Իփեկյանը, Բեյրութ, 1951, 56 էջ:

Շեքսպիրը մանուկների համար – Ջեննի Լանգի ազատ շարադրանքը, անգլերենից թարգմանությունը՝ Սուսաննա Մկրտչյանի, Երևան, 1970, 92 էջ:

Բովանդակությունը՝ Անսանձ կնոջ սանձահարումը, Փոթորիկ, Վենետիկի վաճառականը, Ինչպես կուզեք, Ձմեռային հեքիաթ, Սխալների կոմեդիան:

Օգոստոսի 28. – Հոկտեմբերյանում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը:

(Համլետ – Գ. Զանիբեկյան, Օֆելյա – Ռ. Վարդանյան):

ԳԱԹ, Ռ. Վարդանյանի ֆոնդ, № 285:

Դեկտեմբերի 19. – Կահիրեի Արքայական օպերային թատրոնում, ի նպաստ տեղի Անարատ Հղության Հայ քույրերի վարժարանի, թատերասերների խումբը Լի Գասարճյանի բեմադրությամբ:

Համլետ – Լի Գասարճյան:

Սավանակ, № 46, էջ 23:

1944

Հունվարի 2. – Կ. Պոլսի Մայր եկեղեցու վարժարանի սրահում, երեկոյան, դաստիարակչուհի Արմենուհի Զուլաքյանը ներկայացրել է «Համլետը»:

Կավուշ, № 3:

Ապրիլի 23. – Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված վեցերորդ Համամիութենական Հերթական գիտահետազոտական կոնֆերանսի և թատերական փառատոնին:

Համլետ – Վ. Վաղարշյան, Կլավդիոս – Վ. Վարդանյան, Գերտրուդ – Ա. Մկրտումյան, Օֆելյա – Ռ. Վարդանյան, Ա. դերասան – Վ. Դասոյան, Դերասանուհի – Ս. Ալավերդյան:

Ապրիլի 25. — Երկրորդ կազմը:

Համլետ — Գ. Զանիրեկյան, Կլավդիոս — Դ. Մայյան, Գերտուղ — Վ. Մելքումյան, Օֆեյլյա — Ռ. Վարդանյան, Ա. դերասան — Ա. Ադամյան, Դերասանուհի — Եվգ. Մկրտչյան:

Սունդուկյանի անվ. Թատրոնի Թանգարանի նյութեր:

Դեկտեմբերի 10. — Փարիզի Մյուսթյուալիթեի Թատրոնում, Փարիզահայ դերասանների ընկերակցությունը ղեկավարությամբ Ս. Փափազյանի. բեմադրությունը՝ Սարիմ Մաքսուտյանի, ձմեռային Թատերաշրջանի բացմանը:

Համլետ — Սորեն Փափազյան, Կլավդիոս և Համլետի Հոր ուրվականը — Ս. Մաքսուտյան, Գերտուղ — Բ. Դավթյան, Պոլոնիոս — Հ. Լաթիֆյան, Լաբրտ — Ա. Գմբեթյան, Օֆեյլյա — Աիդա Ազնավուր(յան), Հորացիո — Ս. Սուրենյան, Ռոզենկրանց և Մարցելլոս — Օննիկ Սանճազ(յան), Գիլդենշտերն — Ա. Արբաշան, Բեռնարդո — Մ(աքսուտյան) Վահան, Ֆորտինբրաս — Վահրամ Սվաճյան, Օզրիկ — Հայկ Քանտարճյան, Ֆրանցիսկո — Հ. Պոյաճյան, Վոլդիմանդ — Ն. Մուրատյան, Ա. դերասան — Գրիգոր Վահան (Մաքսուտյան), Բ. դերասան և Ա. գերեզմանափոր — Վահրամ Պաղտասարյան, Դերասանուհի — Քնար Ազնավուրյան, Բ. գերեզմանափոր — Ս. Պալապանյան:

Քուլխ, 1956, № 238:

1945

Օգոստոսի 18-19. — Լենինականում, Երևանի Սունդուկյանի անվան Թատրոնի Հյուրախաղերին, Գ. Զանիրեկյանի (Համլետ) ղեկավարությամբ:

Կլավդիոս — Լևոն Մարցյան, Գերտուղ — Ա. Մկրտումյան, Պոլոնիոս — Օ. Բունիաթյան, Լաբրտ — Գ. Աչուղյան, Օֆեյլյա — Մայրանուշ Պարոնիկյան, Հորացիո — Գ. Սաժակյան, Համլետի Հոր ուրվականը և Ա. դերասան — Արարատ Բարսեղյան, Ռոզենկրանց — Վաղինակ Մարգունի, Գիլդենշտերն և Ֆրանցիսկո — Ավետիք Զրաղացպանյան, Օզրիկ և Ա. գերեզմանափոր —

Ա. Բազրատունի, Մարցելլոս — Հ. Հայրապետյան, Բեռնարդո, Բ. դերասան և Բ. գերեզմանափոր — Լևոն Ազարյան, Դերասանուհի — Լյուսյա Հովհաննիսյան:

Սովետական Հայաստան, № 174:

1946

Հունվարի 22. — Երևանի Սունդուկյանի անվան Թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ: Նոր դերակատարներ՝

Հորացիո — Ֆրունզե Դովլաթյան, Ֆորտինբրաս — Ալ. Ադամյան, Մարցելլոս — Գևորգ Ասլանյան, Բեռնարդո — Տիգրան Բախչինյան, Ռոզենկրանց — Ավ. Զրաղացպանյան:

Սունդուկյանի անվ. Թատրոնի արխիվ:

Կահիրեի էզպեքիե Թատրոնում, Լի Գասարճյանը (Համլետ) դերասանների հետ:

ԳԱԹ, Խ. Սանտալճյանի ֆոնդ:

1947

Մայիսի 24. — Մարսելի Սալ Մազընոյում, Մարսելահայ ազգային Թատերախումբը Թրագոչի (Համլետ) ղեկավարությամբ, օգտագործվել են Լիոնի օպերային Թատրոնից վերցված զգեստները:

Մասնակցել են՝ Ժյուդեքսը (Գ. Զուլճյան), Մուրատ Սաղաթեյանը, Լ. Ղարիպյանը, Աչխեն Պոյաճյանը, Մ. Շիրվանյանը, Ս. Պասմաճյանը, Արապյան եղբայրները և ուրիշներ:

ԳԱԹ, Թրագոչի ֆոնդ:

Սեպտեմբերի 23. — Երևանի Սունդուկյանի անվան Թատրոնում, «Համլետի» 150-րդ ներկայացումը:

Սունդուկյանի անվ. Թատրոնի Թանգարանի նյութեր:

Կ. Պոլսում. — Երիտասարդաց թատերախումբը Եղուարդ Երեցյանի (Կլավդիոս) բեմադրությունները:

Համլետ — Գևորգ Գապարաճյան, Պոլոնիոս — Աբրահամ Խորյան, Օֆելյա — Սիսի Երեցյան, Ա. գերեզմանափոր — Զարեհ Արչակ, Բ. գերեզմանափոր — Պերճ Ֆազյան: Կրկնվել է Սկյուտարում:

Պերճ Ֆազյանի վկայությունը, 1995-ի ապրիլի 14-ին, Երևանում:

1948

Հունիսի 16. — Թբիլիսիի Հայպետթատրոնում, բեմադրությունը՝ Արչակ Բուրջայանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:

Գերտրուդ — Մարի Բերոյան, Լաերտ — Բաբկեն Ներսիսյան, Օֆելյա — Սերիկ Շեկոյան, Հորացիո — Վահրամ Եղջատյան, Ֆորտինբրաս — Վահան Գալստյան, Օզրիկ — Լևոն Ֆիզանյան, Մարցելլոս — Արչակ Աղիլխանյան, Բեռնարդո — Գր. Սերոբյան, Ռեյնալդո — Հայկ Գրիգորյան, Ֆրանցիսկո — Ռաֆ. Նաչիկյան, Ռոզենկրանց — Նոյ Թումանյան, Ա. դերասան — Հ. Բերոյան, Բ. դերասան — Սոս Սոսյան (Ղլիջյան), Դերասանուհի — Վեներա Հակոբյան, Ա. գերեզմանափոր — Պահարե (Հայկ Պետրոսյան), Բ. գերեզմանափոր — Հ. Հովսեփյան:

Դեկտեմբերի 22-ին, նոր դերակատարներ՝

Ա. դերասան — Ռ. Պապովյան, Բ. գերեզմանափոր — Հ. Թաթարյան, Ֆորտինբրաս — Ս. Զալալյան:

Դեկտեմբերի 26. — Օզրիկ — Ստեփան Հարությունյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիս-օգոստոս. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գուրգեն Զանիբեկյանի (Համլետ) ղեկավարությամբ հանդես է եկել՝ Հունիսի 23-ին՝ Արտաշատում, 29-ին՝ Սևանում, Հուլիսի 1-ին՝ Սպիտակում, 3-ին՝ Հոկտեմբերյանում, 10-ին՝ Էջմիածնում, 25-ին՝ Սովետաշենում, օգոստոսին՝ Ծամազդինի շրջանի (այժմ՝ Տավուշի մարզի Բերդ

քաղ.) Բերդ գյուղում, Ղազախ (Աղբրեջան) քաղաքում, Ախտայում (այժմ՝ Հրազդան), Լենինականում (այժմ՝ Գյումրի):

Սեպտեմբերի 7. — Զանգիբասարում (Մասիս):

Սեպտեմբերի 19. — Հոկտեմբերյանում:

Բանվոր, № 161, 170: Լյուսյա Հովհաննիսյանի վկայությունը:

Հոկտեմբերի 23. — Թբիլիսիի Շահումյանի անվան Հայպետթատրոնում, Բ. Ներսիսյանի ստեղծագործական երեկոյին, Հայկ Ումիկյանի բեմադրությամբ, տեսարաններ:

Համլետ — Բաբկեն Ներսիսյան, Կլավդիոս — Աշոտ Բաջվորյան, Գերտրուդ — Ասյա Ժամկոչյան, Պոլոնիոս — Լևոն Ալավերդյան, Օֆելյա — Սերիկ Շեկոյան, Հորացիո — Վահրամ Եղջատյան, Ռոզենկրանց — Նոյ Թումանյան, Գիլդենշտերն — Մնացական Մարությունյան, Ա. գերեզմանափոր — Պահարե:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 4026:

1949

Հունվարի 2. — Թբիլիսիի Հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:

Փետրվարի 10. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի «Համլետի» 200-րդ ներկայացումը:

Համլետ — Վ. Վաղարշյան, Կլավդիոս — Դ. Մալյան, Գերտրուդ — Վ. Մելքունյան, Պոլոնիոս — Օ. Բունիաթյան, Լաերտ — Գ. Աշուղյան, Օֆելյա — Ռ. Վարդանյան, Համլետի հոր ուրվականը և Ֆորտինբրաս — Ա. Ադամյան, Հորացիո — Գ. Նաժակյան, Ռոզենկրանց — Գ. Աֆրիկյան, Գիլդենշտերն — Ա. Զրադացյանյան, Մարցելլոս — Գևորգ Ասլանյան, Բեռնարդո — Տիգրան Բախչինյան, Ֆրանցիսկո — Ֆրունզե Դովլաթյան, Դերասանուհի — Ե. Մկրտչյան, Ա. գերեզմանափոր — Գ. Գաբրիելյան, Բ. գերեզմանափոր — Ա. Բազրատունի, Օզրիկ — Թ. Դիլաքյան:

Սովետական Հայաստան, № 33: Սունդուկյանի անվ. թատրոնի արխիվ:

Փետրվարի 16. — Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ: Գերտրուդ — Անիկ Մկրտումյան:

КОМУНЕСТ, № 40.

Հուլիսի 4. — Սունդուկյանի անվան թատրոնում, Պետրոս Ադամյանի ծննդյան 100-ամյակի առթիվ, տեսարաններ:

Համլետ — Վ. Վաղարշյան, Գերտրուդ — Վ. Մելքումյան:

Գրական թերթ, № 27:

1951

Հունիսի 26-30. — Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:

Հուլիսի 1. — Համլետ — Վ. Փափազյան, Յագո — Գեղամ Հարությունյան:

Սունդուկյանի անվ. թատրոնի թանգարանի նյութեր:

Նոյեմբերի 17. — Թբիլիսիի Հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:

1952

Մայիսի 9, 11. — Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Վաղարշ Վաղարշյանի (Համլետ) մասնակցությամբ. բեմադրությունը՝ Հայկ Ումիկյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Գ. Շահբաղյանի:

Կլավդիոս — Ա. Քաջվորյան, Գերտրուդ — Մ. Բերոյան, Պոլոնիոս — Լ. Ալավերդյան, Լաերտ — Բ. Ներսիսյան, Օֆելյա — Ս. Շեկոյան, Հորացիո — Ս. Բարլոյան, Ռոզենկրանց — Ն. Թումանյան, Գիլդենշտերն — Մ. Մարության, Օզրիկ — Հրաչիկ Սիմոնյան, Ֆորտինբրաս — Վ. Գալստյան, Ա. դերասան — Հ. Բերոյան, Բ. դերասան — Ս. Սոսյան, Դերասանուհի — Վ. Հակոբյան, Ա. գերեզմանափոր — Պահարե, Բ. գերեզմանափոր — Հ. Թաթար-

յան, Մարցելլոս — Հովակիմյան, Համլետի հոր ուրվականը — Հ. Օկոնյան:

Հունիսի 4. — Ա. դերասան — Հրաչիկ Սիմոնյան:

Օգոստոսի 29. — Հորացիո — Հայկ Ումիկյան:

Սեպտեմբերի 2. — Ֆորտինբրաս — Սոս Սոսյան:

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ (ծրագիր):

Հունիսի 2. — Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան ռուսական թատրոնում, Հայկական թատրոնի խմբի հետ, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Գուրգեն Զանիբեկյանի (Համլետ) մասնակցությամբ, նույն կազմով:

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

Օգոստոսի 9, 24. — Լենինականի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:

Կլավդիոս — Կարո Արծրունյան, Գերտրուդ — Ժաննա Թովմասյան, Պոլոնիոս — Հայկասար (Միանսարյան), Լաերտ — Ալեքսանդր Քոչարյան, Օֆելյա — Նինա Բոխյան, Ա. դերասան — Վարդան Թերզիբաշյան, Դերասանուհի — Վարդուհի Վարդերեսյան, Ա. գերեզմանափոր — Վահրամ Սվաճյան:

Օգոստոսի 11. — Արթիկում, Վ. Փափազյանը (Համլետ) Լենինականի պետթատրոնի դերասանական խմբի հետ:

ԳԱԹ, Վարդան Թերզիբաշյանի ֆոնդ:

Սեպտեմբերի 24. — Բաթումի վրացական թատրոնում, Վ. Փափազյանը (Համլետ) Թբիլիսիի Հայկական թատրոնի դերասանական խմբի հետ: Օֆելյա — Էմմա Ստեփանյան:

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

1953

Մարտի 27. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, «Համլետի» 1942 թ. բեմադրության վերջին՝ 273-րդ ներկայացումը:

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Ապրիլի 7. — Թեհրանում հայտարարություն է տարածվել, որ «Միծեռնակ» թատերախումբը մեծ պատրաստություններ է սքանչելի բեմադրություններ կներկայացնի ՀԱՄԼԵՏ, մասնակցություններ նորոք Ֆրանսիայից Իրան ժամանած համաշխարհային համրավ վայելող մեծ դերասան «Միծեռնակի» և իրանահայ լավագույն ուժերի: («Միծեռնակ» թատերախմբի ծրագրում եղել են նաև՝ ապրիլի 18-ին՝ «Օթեյլո», 30-ին՝ «Մակբեթ»: Ներկայացումների պատասխանատուն եղել է Ժ. Մեհտիսանյանը: Մամուլում հետք չի մնացել:

Հուլիսի 31. — Լենինականի պետթատրոնում, Վ. Փափագյանի (Համլետ) մասնակցությամբ:

1955

Փետրվարի 1. — Կ. Պոլսի Թաղապետական թատրոնում, Երիտասարդաց թատերախումբը (Հ. Մասեհյանի թարգմանությունը Թորգոմ Սրապյանի կողմից արևմտահայերենի փոխադրած, չափածո, 5 գործ, 17 պատկեր), բեմադրությունը Գևորգ Գապարաճյանի (Համլետ):

Կլավդիոս — Եղուարդ Երեցյան, Գերտրուդ — Սիսի Երեցյան, Պոլոնիուս — Նուպար Թերզյան, Լաբրտ — Թորգոմ Սրապյան, Օֆելյա — Զարուհի Տեյրմենճյան, Հորացիո — Միհրան Անտոնյան, Օզրիկ — Հ. Թոփուզյան, Ֆորտինբրաս — Ն(ուպար) Գամճյան, Բենական թագուհի — Մաքրուհի Նաչերեսյան, Ա. գերեզմանափոր — Զավեն Տատյան, Բ. գերեզմանափոր — Գամեր Սատրապյան:

Կրկնվել է մարտի 15-ին և 20-ին՝ Սկյուտարի Սանուց միության մեջ:

Մարմար, № 3897, 3928, 3946: Ժամանակ, № 17052:

Մարտի 5. — Լիոնի չրջակա՝ Տեսինի ՆՅԴ Տան մեջ, Լիոնի և Տեսինի դերասանական խմբերի ուժերով, Թրագոչի (Համլետ) ղեկավարությամբ:

Մասնակցել են՝ Ժյուդեքսը (Գևորգ Չուճյան), Մուրատ Սաղթեյանը, Սահակ Պասմաճյանը, Լևոն Ղարիպյանը, տիկ. Վ. Մուրատյանը, Միրիճան Շիրվանյանը, Ժանո և Մանվել Արապյան եղբայրները:

ԳԱԹ, Թրագոչի Փոնդ:

Մարտի 20. — Լիոնի չրջակա՝ Վիենի կաթոլիկական եկեղեցու սրահում, նույն խմբով:

1956

Հունվարի 20. — Կահիրեի էգպեթի թատրոնում, Եգիպտահայ թատերական խումբը (Թարգմ. Հ. Մասեհյան). բեմադրությունը՝ Արաքսի Օհանյանի: (Համլետի երկրորդ հայ կին դերակատարը):

Համլետ — Արաքսի Օհանյան, Կլավդիոս — Նուպար Բանյան, Գերտրուդ — Վ. Յաղճյան, Պոլոնիուս — Ասատուր Օհանյան, Լաբրտ — Հայկազ Գալուստյան, Օֆելյա — Թ. Գարաճյան, Համլետի հոր ուրվականը — Գրիգոր Նիզիպյան (բեմադրությունից սուսերամարտի մարզիչը), Հորացիո — Հ. Պոստազյան, Ռոզենկրանց — Կ. Սուլթանյան, Գիլդենշտերն — Կ. Նիկողոսյան, Օզրիկ — Հ. Նըրիսըջյան, Մարցելլոս — Պ. Պուղտաճյան, Բենարդո — Վահե (Պոյաճյան), Դերասան — Օ. Գալուստյան, Բ. դերասան — Հայկ-Արմեն, Դերասանուհի — Անահիտ, Գերեզմանափոր — Տ. Մանավյան:

Արաքս, № 3: Արաքսի Օհանյանի վկայությունը:

Մարտի 25. — Հալեպի Սինեմա Սուրիա սրահում, Կիլիկյան վարժարանների հոգաբարձության նախաձեռնությամբ, դերասան Պերճ Թոմպուլյանի ղեկավարությամբ, տեղական դերասանների հետ, ցերեկը:

Համլետ — Պերճ Թոմպուլյան, Գերտրուդ — Գոհարիկ, Պոլոնիուս — Անդրանիկ Վսեմյան, Լաբրտ — Ժորժ Զափարյան, Օֆելյա — Ազատուհի Վսեմյան, Հորացիո — Մկրտիչ Սիմոնյան,

Գերեզմանափոր – Պողոս Մենտիլյան: Մասնակցել են նաև՝
Ղևոնդ Գավլաքյանը, Ավետիս էքմեքճյանը, Մանուել Թյու-
ֆենքճյանը, Դանիել Գարամանուկյանը:

Սուրիա, № 209: Պերճ Թոմպուլյանի վկայությունը:

1957

Մարտի 17. – Թեհրանի Հայ Մշակութային միության «Արա-
րատ» կազմակերպության սրահում, Պերճ Թոմպուլյանի (Համ-
լետ) ղեկավարությամբ, տեղի դերասանների հետ:

Գերտրուդ – Կայծակուհի Միմոնյան, (Օֆելյա – Սոնյա Թոմ-
պուլյան): Մասնակցել են նաև՝ Հրաչ Թորոսյանը, Արտուշ Յաղ-
մուրյանը, Սուրեն Մուրադյանը և ուրիշներ: Կրկնվել է ապրիլի
5-ին:

Ալեք, № 58, 62:

Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ խաղացվել է նաև՝
Բաղդադում, Բասրայում (Պոլոնիուս – Անդրանիկ Վսեմյան,
Օֆելյա – Ազատուհի Վսեմյան, Գերտրուդ – Արփինե Նաչա-
տուրյան, Հորացիո – Ռ. Այվազյան), Երուսաղեմում՝ տեսա-
րաններ (1960):

Պերճ Թոմպուլյանի վկայությունը:

1958

Նոյեմբերի 23. – Սոֆիայի Գ. Դիմիտրով սրահում, «Երևան»
Մշակութային միության կենտրոնական և Սոֆիայի մասնա-
ճյուղի նախաձեռնությամբ կազմակերպված երեկոյին Վահրամ
Փափազյանը հանդես է եկել «Վերջապես ես մենակ եմ» և
«Լինե՞լ, թե՞ չլինե՞լ» մենախոսություններով:

ԳԱԹ, Օ. Քեչյանի ֆոնդ, 4-րդ բ., № 179:

1959

Տարվա վերջերին. – Հալեպում, Պերճ Թոմպուլյանը (Համ-
լետ) տեղի թատերական ուժերի մասնակցությամբ:

Քուլիս, № 311:

1961

Մայիսի 1-2. – Բեյրութի Քոլեժ դը լա Սալ թատրոնում,
«Դրամատիկ թատերախումբը» Պ. Թոմպուլյանի (Համլետ) բե-
մադրությամբ:

Կլավդիոս – Մարտիրոս Յափուճյան, Գերտրուդ – Արաքսի
Նաչատուրյան, Պոլոնիուս – Լևոն Գրլըճյան, Լաերտ – Հակոբ
Գնունի, Օֆելյա – Էոժենի Թոմպուլյան, Համլետի հոր ուրվա-
կանը – Մովսես Աշրգյան, Հորացիո – Մանուել Մենենկիչյան,
Օզրիկ – Հարություն Ապաճյան, Բեռնարդո – Հարութ Հարու-
թյունյան, Մարցելլոս – Զավեն Ապաճյան, Ֆրանցիսկո – Մար-
տիրոս Քեհայան, Գերեզմանափոր – Լևոն Ռչտունի:

Քուլիս, № 439: Պ. Թոմպուլյանի վկայությունը:

Նոյեմբերի 26. – Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում,
Պետրոս Աղամյանի մահվան 70-ամյակի առթիվ երեկոյին, տե-
սարաններ:

Համլետ – Գրիգոր Սաթամյան, Օֆելյա – Աստղիկ Գասպար-
յան:

Հառաջ, դեկտեմբերի 3:

1963

Աչնան սկզբներին. – Կ. Պոլսում, Գևորգ Գապարաճյանի
(Համլետ) բեմադրությամբ:

Քուլիս, № 402:

Ապրիլի վերջերին (23-ից հետո). — Լոնդոնում և Բիրմին-համում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված տոնա-հանդիսություններին, Սորհրդային Միության պատվիրակու-թյան անդամ, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերա-սան Դավիթ Մայյանը հանդես է եկել Կլավդիոսի մենախոսու-թյամբ:

Գ. Մայյանի վկայությունը:

Մայիսի 7-8. — Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված հանդիսությանը, Սունդուկ-յանի անվան թատրոնի դերասանների կատարմամբ, տեսա-րաններ:

Համլետ — Վ. Փափազյան, Գերտրուդ — Հեղինե Հովհաննիս-յան, Պոլոնիոս — Աշոտ Ներսիսյան, Ռոզենկրանց — Վաչե Բագ-րատունի, Գիլդենշտերն — Գեղամ Աֆրիկյան:

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Մայիսի 28-29. — Երևանի Հայֆիլհարմոնիայի Համերգային մեծ (այժմ՝ Ա. Ռաչատրյանի անվ.) դահլիճում, Շեքսպիրի ծը-նընդյան 400-ամյակին նվիրված հանդիսությանը Սունդուկ-յանի անվան թատրոնի դերասանների կատարմամբ, տեսա-րաններ:

Համլետ — Վ. Փափազյան, Գերտրուդ — Հ. Հովհաննիսյան, Պոլոնիոս — Ա. Ներսիսյան, Ռոզենկրանց — Վ. Բագրատունի, Գիլդենշտերն — Գ. Աֆրիկյան, Ա. դերասան — Ալեքսանդր Աղամյան:

Սովետական Հայաստան, № 123:

— Բեյրութի Գ. Կյուլպենկյան սրահում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, դերասան Կ. Գնդունու բեմադրությամբ ու մասնակցությամբ:

Համլետ — Կայծակ Գնդունի: Մասնակցել են՝ Հարություն Գնդունին, Ներսես Ինկիլիզյանը, Հակոբ Ավետիքյանը (գինվոր) և ուրիշներ:

Հ. Ավետիքյանի հաղորդումը:

Հոկտեմբերի 31. — Լոնդոնի Քոմընվելթ ինստիտուտի սրա-հում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված երեկոյին կրկնվել է երրորդ արարվածի չորրորդ տեսարանը:

Համլետ — Ասատուր Օհանյան, Գերտրուդ — Սեդա Ջիլին-կիրյան:

Ջարթոնք, դեկտեմբերի 23:

Բաղդադում, Պերճ Թոմպուլյանը (Համլետ) տեղի թատերա-սերների խմբի հետ:

Կլավդիոս — Հակոբ Իփեկյան, Գերտրուդ — Վրեժուհի Իփեկ-յան, Պոլոնիոս — Գրիգորյան, Օֆելյա — Էոժենի Թոմպուլյան:

Ալիք, № 72:

Նոյեմբերի 18. — Մոսկվայում, ազգային լեզուներով կրկնվող ֆիլմերի Համամիութենական սեմինար խորհրդակցությունում ցուցադրվել է «Համլետ» (ռուսական) կինոֆիլմը (Թարգմ. Հ. Մասեհյան և Վ. Հովակիմյան), ռեժիսոր՝ Երվանդ Մատուրյան, Լևոն Գրիգորյան, Հնչյունային օպերատոր՝ Շ. Գրիգորյան:

Համլետ — Նորեն Աբրահամյան, Կլավդիոս — Սոս Սարգսյան, Գերտրուդ — Մետաքսյա Սիմոնյան, Պոլոնիոս — Գեղամ Հա-րությունյան, Լաբրտ — Լորենց Առուչանյան, Օֆելյա — Մարգո Մուրադյան:

Շեքսպիրական, գիրք 3, եր., 1969, էջ 377-378:

1968

Փետրվարի 14. - Կահիրեի էզպեքիե թատրոնում եզիպտահայ թատրոնի վետերան, դերասանուհի, դրամատուրգ և ռեժիսոր Արաքսի Օհանյանի բեմական գործունեության 40-ամյակին նվիրված երեկոյին հորեցարը հանդես է եկել «Լինե՛ր, թե՛ չլինե՛ր» մենախոսությունում և Օֆեյյայի հետ տեսարանում (մտիր կուսանոց):

Համլետ - Արաքսի Օհանյան, Օֆեյյա - Սաթո Պալայան:

Զահակը, մարտ:

1972

Մարտի 11. - Բեյրութի Հ. Տեր-Մելքոնյան թատերասրահում, Պերճ Թոմպուլյանը (Համլետ) տեղի թատերասերների հետ ներկայացրել է տեսարաններ:

Օֆեյյա - Սրբուհի Իրրանոսյան, Համլետի հոր ուրվականը - Սուրեն Տեյիրմենճյան:

Պ. Թոմպուլյանի վկայությունը:

1973

Հունիսի 1. - Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երրորդ կուրսի (ղեկ. Ռ. Զրբաչյան) ուսանող Նաչատուր Զալիկյանի բեմադրությունը, տեսարաններ կուրսակիցների և դերասանական ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ:

Համլետ - Դավիթ Սաֆարյան, Համլետի կրկնակ - Գ. Մկրտչյան (դերասանակ. ֆակ. երկրորդ կուրսից), Կլավդիոս - Նիկոլ Գյուլբուրդյան (Իրան), Գերտրուդ - Մ. Աղամյանց, Լաերտ - Գրիգոր Տատինցյան, Հորացիո - Մանուել Զիջի (Սիրիա), Գերեզմանափոր - Ռոման Մաթիաչվիլի (Թբիլիսի), Ծաղրածու - Սարգիս Զրչյան, Փոքրիկ երաժիշտ - Ա. Ասատրյան (դպրոցական):

Նույն օրը. - Սաթենիկ Մաթևոսյանի բեմադրությամբ, տեսարաններ:

Համլետ - Սարգիս Զրչյան, Կլավդիոս - Արամ Տեր-Գրիգորյան, Գերտրուդ - Գոհար Տրդատյան (Պատանի Հանդիսատեսի թատրոնի դերասանուհի), Պոլոնիոս - Ս. Գրիգորյան (Հեռուտաթատրոնից), Լաերտ - Կ. Գրիգորյան (դերասանակ. ֆակ. առաջին կուրսից), Օֆեյյա - Իրինա Օհանյան, Հորացիո - Ա. Սրդոյան (դերաս. ֆակ. առաջին կուրսից), Գերեզմանափոր - Գ. Մալոյան (դերաս. ֆակ. առաջին կուրսից), Դերասաններ - Հ. Թորոսյան, Գ. Գրիգորյան, Վ. Հայրապետյան, Լևոն Իվանյան, Լ. Մանվելյան (բոլորն էլ «Տուչպա» մնջախաղի թատրոնից):

Մրազիբ ռեժիսորական ֆակուլտետի 15-րդ շրջանավարտների, Եր., (1974):

Հունիսի 16, 17, 24. - Հալեպի ՀԲԸ Միության Հանդիսասրահում, Շեքսպիրին նվիրված երեկոյին, Ուրֆայի Վերածնունդ միության թատերախումբը Պերճ Թոմպուլյանի (Համլետ) բեմադրությամբ, զգեստների ձևավորումը էոժենի Թոմպուլյանի (Գերտրուդ):

Պոլոնիոս և Մարցելլոս - Լևոն Զաղալանյան, Օֆեյյա - Դանիա Կոստանյան, Հորացիո - Սարգիս Սերմանուկյան, Բեռնարդո - Հակոբ Կյուլվարդյան, Ֆրանցիսկո - Անդրանիկ Սեմերճյան, Համլետի հոր ուրվականը - Վարդան Թերզապյան:

Արարատ, № 9506: Զարթոնք, № 208:

1976

Հոկտեմբերի 3. - Տորոնտոյի ՀԲԸ Միության թատերախումբը, Սիրարփի Աճեմյանի բեմադրությամբ, տեսարաններ:

Համլետ - Տորք Աճեմյան, Գերտրուդ - Սիրարփի Աճեմյան:

Արաբս (Մ.), 1977, № 61:

1977

Հոկտեմբերի 22. — Երևանի Հայֆիլհարմոնիայի փոքր (այժմ՝ Ա. Բաբաջանյանի անվ.) դահլիճում, Մենաթատրոն, Արամ Ռ. Գրիգորյանի Համադրությամբ ու բեմադրությամբ:

Համլետ — Ժասմեն Գևորգյան (երրորդ Հայ կին դերակատարը):

Երեկոյան Երևան, № 257:

Դեկտեմբերի 15. — Երևանում, Հայաստանի գրողների միության Մեծ դահլիճում, Ժասմեն Գևորգյանի (Համլետ) մենաներկայացումը:

Ժ. Գևորգյանի վկայությունը:

1978

Փետրվարի 16. — Լենինականի պետթատրոնում, Ժ. Գևորգյանի կատարմամբ:

Սեպտեմբերի 16. — Կիրովականի պետթատրոնում, Ժ. Գեվորգյանի կատարմամբ:

Ժ. Գևորգյանի վկայությունը:

1980

Մարտի 29. — Երևանի Դրամատիկական (այժմ՝ Ղափլանյանի անվ.) թատրոնում (Թարգմ. Հ. Մասեհյան). բեմադրությունը՝ Արմեն Ոսանդիկյանի, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով, երաժշտական ձևավորումը՝ Ֆելիքս Արամյանի, սուսերամարտը՝ Մարտին Մելքոնյանի:

Համլետ — Վլադիմիր Մարյան, Կլավդիոս — Ռաֆայել Քոթանջյան, Գերտրուդ — Անահիտ Թոփչյան, Պոլոնիոս — Լևոն Շարաֆյան, Լաերտ — Ամիրան Գալստյան, Օֆելյա — Տաթևիկ Ղափլանյան, Հորացիո — Գրիգոր Գաբրիելյան, Գիլդենշտերն — Արթուր Ութմազյան, Մարցելլոս, Օզրիկ — Ռուդիկ Հովսեփյան, Ռեյնալդո — Էդվարդ Գասպարյան, Քահանա — Հասան Նա-

վոյան, Դերասան — Ռոբերտ Հարությունյան, Դերասաններ — Հրաչյա Հարությունյան, Գեղամ Հարությունյան, Մակիչ Մարգարյան, Գերեզմանափոր — Ռուբեն Կարապետյան, Թիկնապահ — Ավետիս Նրիմյան:

Ներկայացման ծրագիրը:

1981

Մայիս. — Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) Հաստոցաչինական գործարանի մշակույթի պալատում, Հոկտեմբերյանի մի խումբ մտավորականներից և Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի մի քանի ուսանողներից կազմված թատերախումբը. բեմադրությունը՝ Սուրեն Հարությունյանի:

Համլետ — Նորիկ Աբրահամյան, Կլավդիոս — Սուրեն Հարությունյան, Գերտրուդ — Տաթևիկ Նալբանդյան, Պոլոնիոս — Գագիկ Մինասյան:

Գ. Մինասյանի վկայությունը:

Նոյեմբերի 17. — Երևանի Դրամատիկական թատրոնը՝ Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին:

1983

Հունիսի 25, Հուլիսի 6. — Մոսկվայի Փոքր թատրոնում, Երեվանի Դրամատիկական թատրոնի Հյուրախաղերին:

Համլետ — Վ. Մարյան, Կլավդիոս — Ռ. Քոթանջյան, Գերտրուդ — Ա. Թոփչյան, Պոլոնիոս — Լ. Շարաֆյան, Լաերտ — Ա. Գալստյան, Օֆելյա — Տ. Ղափլանյան, Հորացիո — Գ. Գաբրիելյան, Գիլդենշտերն — Ա. Ութմազյան, Օզրիկ, Մարցելլոս — Ռ. Հովսեփյան, Քահանա — Հ. Նավոյան, Ռեյնալդո — Է. Գասպարյան, Դերասան — Ռ. Հարությունյան, Դերասաններ — Գ. Մկրտչյան, Մ. Մարգարյան, Գերեզմանափոր — Ռ. Կարապետյան, Թիկնապահ — Ա. Նրիմյան:

Ներկայացման ծրագիրը:

1985

Դեկտեմբերի 20. – Երևանի Կամերային պետական թատրոնում, բեմականացումը և բեմադրությունը Արա Երնջակյանի, երաժշտությունը՝ Ա. Քարտայանի: Ուղղացվել է Հայերեն և ռուսերեն:

Համլետ – Արմեն Համբարձումյան, (Հայ.), Արամ Մազմանյան, (ռու.), Կլավդիոս – Միքայել Պողոսյան, Գերտրուդ – Եվգենյա Պողոսյան, Պոլոնիոս – Կարեն Ուլիխանյան, Լաերտ – Գեորգի Ամիրազյան, Ա. Աբրահամյան, Օֆելյա – Նելլի Ներսիսյան, Զարա Ուզունյան, (ռու.) Հորացիո – Միքայել Ավակիմով, Հրանտ Թոխատյան, Ռոզենկրանց – Ռոմիկ Մանուկյան, Գիլդենշտերն – Արթուր Սահակյան:

Հասցեագր. № 293. Արա Երնջակյանի վկայությունը:

1991

Մարտի 27. – Երևանի Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Թատրոնի Միջազգային օրվա առթիվ, Պետրոս Աղամյանի մահվան 100-ամյակին նվիրված միջոցառմանը ժաման Գևորգյանը կատարել է «Լինե՞լ, թե՞ չլինե՞լ» մենախոսությունը և այլ տեսարաններ:

1994

Նոյեմբերի 13. – Երևանի Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը, մենաթատրոնի արտիստուհի Ժաման Գևորգյանի կատարմամբ:

2000

Մարտի 27. – Երևանի Պատանի Հանդիսատեսի թատրոնում, Թատրոնի Միջազգային օրվա առթիվ, «Մկան թակարդ կամ փորձում ենք «Համլետ» վերնագրով: Բեմական տարբերակը և բեմադրությունը Հակոբ Ղազանչյանի, նկարիչ՝ Գրիշա Սար-

զըսյան, կոմպոզիտոր՝ Ստեփան Թորոսյան, պարադիր՝ Գագիկ Կարապետյան, բեմական պլաստիկան՝ Ս. Շահինյանի:

Համլետ – Արթուր Կարապետյան, Կլավդիոս – Արտաշես Շահվերդյան, Գերտրուդ – Անահիտ Բաբեյան, Պոլոնիոս – Արմեն Սանթրոսյան, Օֆելյա – Սուսաննա Բաղդասարյան, Գիլդենշտերն – Տրդատ Մակարյան, Համլետի հոր ուրվականը – Զավեն Աբրահամյան, Դերասաններ – Շուշանիկ Ղազարյան, Լ. Ղևոնդյան, Սուրեն Առատամյան, Վահե Պապյան, էլլադա Սայադյան:

Ներկայացման ծրագիրը:

2006

Դեկտեմբերի 1. – Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում (նվիրվել է Թաթևիկ Սարյանի Հիշատակին). բեմադրությունը՝ Արթուր Սահակյանի, արտաքին ձևավորումը և զգեստները՝ Կարեն Գրիգորյանի, երաժշտական ձևավորումը՝ Աշոտ Փափազյանի (հինգ գործողություն, 26 տեսարան, հանվել են՝ Վոլդիմանդի, Կոռնելիուսի, Ռեյնալդոյի, 2-րդ գերեզմանափորի դերերը, ավելացվել՝ նորերը):

Համլետ – Հրաչյա Հարությունյան, Կլավդիոս – Ռուբեն Կարապետյան, Գերտրուդ – Էվելինա Շահիրյան, Պոլոնիոս – Գուրգեն Անտոնյան, Լաերտ – Գրիգոր Ուչատրյան, Օֆելյա – Լիլիթ Մեսրոպյան, Հորացիո – Արտաշես Ալեքսանյան, Մարցելլոս – Արտաշես Մխիթարյան, Ռոզենկրանց – Էդվարդ Սարգսյան, Գիլդենշտերն – Արմեն Բարսեղյան, Գերեզմանափոր – Կարապետ Շամյան, Համլետի հոր ուրվականը, Դերասան – Գրիգոր Գաբրիելյան, Դերասանուհի – Նաիրա Շահիրյան, Լուցիանոս – Վահագն Գալստյան, Պալատական տիկին – Մարինե Գաբրիելյան, Պահակներ – Արտյոմ Եղիազարյան, Վահան Մալխասյան, Օգրիկ – Հովհաննես Թեքզոյան, Բեռնարդո – Արտյոմ Եղիազարյան, Քահանա – Արա Գևորգյան, Երգչուհի-դերասանուհի – Լուսինե Հարությունյան, Երգիչ-դերասան – Հրաչյա Ստեփանյան:

Ներկայացման ծրագիրը:

JULIUS CAESAR (1599)

ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ

1853

Հունվարի 25. — Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, Մխիթարյան միաբանության դպրոցական թատրոնում (Հավանաբար՝ Փրանսիացի դրամատուրգ Դյուսիսի փոխադրության թարգմանությամբ), Համառոտված, առաջին անգամ:

Հոռոմ կատարվող տեսարանում Հանդես են եկել Հուլիոս Կեսարը (Հոռոմի դիկտատոր), Անտոնիոսը (Հյուպատոս), Բրուտոսը (Պրետոր, որդի Կեսարի), Տուղլիոսը, Կասսիոսը, Կիմները (ծերակույտի ավազներ), ծերակույտ, Հոռոմացիք:

ԳԱՔ, ներկայացման ծրագրի լուսանկար պատճենը:

1911

Կ. Պոլսում բեմադրության է պատրաստվել: Մասնակիցներից պետք է լինեին Վահրամ Փափազյանը, Ենուկը Շահենը:

ԳԱՔ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 2028:

1916

Փետրվարի 18. — Բաքվի Հայ դրամատիկ դերասանների խումբը, Արմեն Արմենյանի թարգմանությամբ ու բեմադրությամբ պատրաստվել է ներկայացնել Մայիլյանների (այժմ՝ Ախունդովի անվ. օպերայի և բալետի) թատրոնում: Մամուլում հայտարարվել է, բայց ներկայացումը տեղի չի ունեցել (Հիշատակություն չկա):

Ներկայացման մասնակիցների թվում նախատեսված են եղել՝ Վահրամ Փափազյանը, Հովհաննես և Արաքս Զարիֆյանները, Արչակ Հարությունյանը, Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Օլգա Գուլազյանը, Արմեն Արմենյանը:

Արև, № 11:

— Նյու Յորքում, առաջին անգամ, բեմադրվել է Հայ դրամատիկ խմբի ուժերով (Մկրտիչ Նուրյան և ուրիշներ):

ԳԱՔ, Ղ. Սարգիսյանի հուշերը:

1920

1920, Թիֆլիս. — 1920–1921 թատերաշրջանում բեմադրելու համար, Հայոց Դրամատիկական ընկերության խորհրդի որոշումով, հատուկ պատվերով թարգմանվել է «Հուլիոս Կեսարը»:

Մշակ, № 55:

1934

Հունիսի 24. — Հայկաի Այնթապցիների կրթասիրաց վարժարանում, Հայ Երիտասարդաց ընկերակցության թատերախմբի (այժմ՝ Պ. Աղամյանի անվ.) ներկայացումը:

Հուլիոս Կեսար — Սաչիկ Գալուստյան: Ներկայացմանը մասնակցել են՝ Հովհաննես Պազարպաչյանը, Անդրանիկ Կետիկյանը, Գրիգոր Պարսումյանը, Կարապետ Գարտաչյանը, Վահան Թյությունճյանը, Նուպար Տեմիրճյանը, Գրիգոր Գորարիկյանը և ուրիշներ:

Հայկաի «Պետրոս Աղամյան» թատերախմբի Հավաքածո (ազդագիր):

— 1930-ական թթ. Կիպրոսի Մելքոնյան կրթական Հաստատությունում, Հ. Շեռհանյանի բեմադրությամբ: (Հուլիոս Կեսար — Հովհաննես Շեռհանյան):

Նոր Ապրիլ, 1980, № 3, էջ 59:

1968

Մայիսի 21. - Երևանի Գեղարվեստա-Թատերական (այժմ՝ Թատրոնի և Կինոարվեստի պետական) ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երրորդ կուրսի (ղեկ. Ռ. Զրբաչյան) ուսանող Ռուբեն Մակարյանի համադրությունը ու բեմադրությունը, համակուրսեցիների կատարմամբ:

Բրուտոս - Ռուբեն Մակարյան, Կասիոս և Կեսար - Արմեն Նանդիկյան, Կասկա - Դավիթ Մնացականյան, Անտոնիոս - Վահե Շահվերդյան, Պորցիա - Սվետլանա Քոչարյան (հետո՝ Լանա Ատրունի):

Ծրագիր ռեժիսորական ֆակուլտետի 11-րդ չրջանավարտների, Եր., 1971:

1972

Մարտի 11. - Բեյրութի Տեր-Մելքոնյան սրահում, Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությունը ու մասնակցությունը (Անտոնիոս), տեսարաններ:

ԳԱԹ, Զ. Գալուստյանի ֆոնդ:

1973

Հունիսի 16-17, 24. - Հայելի ՀԲԸ Միության հանդիսասրահում, Ուրֆայի Վերածնունդ միության թատերախումբը, Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությունը ու մասնակցությունը (Մարկ Անտոնիոս), տեսարաններ:

Հուլիոս Կեսարի դիակ - Աբրահամ Կոսդանյան:

Զարթոնք, № 208:

1992

Մայիսի 24. - Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում (Թարգմ. Ս. Դաշտենց), բեմադրությունը և երաժշտական ձևավորումը՝ Արմեն Նանդիկյանի, նկարիչ՝ Կարեն Գրիգորյան:

Կեսար - Վլադիմիր Մարյան, Օկտավիանոս - Արամ Մխիթարյան, Անտոնիոս - Լևոն Շարաֆյան, Լեպիդոս - Կարեն Զանգիրյան, Բրուտոս - Արթուր Ութմազյան, Կասիոս - Արամ Անանյան, Կասկա - Հրաչյա Հարությունյան, Լիզարիոս - Թորոս Նաչատրյան, Դեցիոս Բրուտոս - Ռուբեն Կարապետյան, Սինա - Գրիգոր Գաբրիելյան, Գուլակ - Ռոբերտ Հարությունյան, Լացիոս - Հովհաննես Բաբախանյան, Կալփուրնիա - Լաուրա Թանգյան, Պորցիա - Մարինե Սարգսյան, Կեսարի սպասավոր - Ռոլանդ Հունանյան, Օկտավիանոսի սպասավոր - Ռոբերտ Առաքելյան, Քաղաքացիներ - Էդվարդ Գասպարյան, Լևոն Մուրադյան, Գևորգ Աբազյան, Սերգուշ Բաբայան, Լևոն Սահակյան, Հովհաննես Բաբախանյան:

Երկրորդ կազմ՝ Օկտավիանոս - Արմեն Հակոբյան, Կասկա - Գրիգոր Գաբրիելյան, Սինա - Արամ Մխիթարյան:

Ներկայացման ծրագիրը:

1997

Նոյեմբեր. - Թբիլիսիում, Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը Համալիսարհային արվեստի փառատոնին:

Թատերական Երևան, № 4:

2010

Ապրիլի 30. - Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, բեմադրությունը՝ Ա. Նանդիկյանի, նկարչական ձևավորումը և զգեստները՝ Կ. Գրիգորյանի, երաժշտական ձևավորումը՝ Աշոտ Փափազյանի և Ա. Նանդիկյանի:

Հուլիոս Կեսար - Գրիգոր Գաբրիելյան, Բրուտոս - Արթուր Ութմազյան, Անտոնիոս - Հրաչյա Հարությունյան, Կասիոս - Գրիգոր Նաչատրյան, Օկտավիանոս - Արտաշես Մխիթարյան, Կասկա - Արմեն Բարսեղյան, Դեցիոս Բրուտոս - Վահան Գալստյան, Սինա - Արեն Վաթյան, Պորցիա - Գոհար Իգիթյան,

Կալփուրնիա – Լուիզա Ղամբարյան, Գուչակ – Գուրգեն Անտոնյան, Լեպիդիոս – Կարեն Միրիջանյան, Կեսարի սպասավոր – Էդվարդ Գասպարյան, Օկտավիանոսի սպասավոր – Բարկեն Չորանյան, Լացիոս – Նիկոլայ Ավետիսյան, Քաղաքացիներ – Հովհաննես Թեքզոյան, Հրաչյա Ստեփանյան, Սամվել Հարությունյան, Գազիկ Մկրտչյան, Նարեկ Քթոյան:

Ներկայացման ծրագիրը:

2011

Հոկտեմբերի 21. – Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը վաճառված Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնին:

1912

Փետրվարի 27. – Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի «Հուլիոս Կեսար» բեմադրությունն արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի: Մրցանակ է շնորհվել բեմադրող՝ Արմեն Նանդիկյանին, բեմանկարիչ՝ Կարեն Գրիգորյանին, դերակատարներ՝ Գրիգոր Գաբրիելյանին (Հուլիոս Կեսար), Արթուր Ութմազյանին (Բրուտոս), Հրաչյա Հարությունյանին (Անտոնիոս):

WINTER'S TALE (1610)

ՁՄԵՌԱՑԻՆ ՀԵՔՒԱԹ

1954

Հունիսի 28. – Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Հ. Աբեյանի անվան թատրոնում (Թարգմ. Ստեփան Ալաջաջյան), առաջին անգամ, բեմադրությունը՝ Հովհաննես Կարապետյանի, նկարիչ՝ Թադևոս Բերբերյան, երաժշտությունը՝ Կ. Մելիք-Վրթանեսյանի, պարերը՝ Վ. Ղարիբյանի:

Լեոնտես – Սուրեն Հովհաննիսյան, Մամիլիուս – Ռեմիկ Սարգսյան, Կամիլլո – Հ. Ավագյան, Անտիգոնես – Միքայել Հակոբյան, Կլեոմենես – Ղազար Նազարյան, Դիոն – Սուրեն Եղիազարյան, Պալատական – Ալեքսանդր Շազաֆյան, Պոլիքսենես – Արչակ Արչակունի (Հարությունյան), Ֆլորիզել – Վոլոդյա Գրիգորյան, Դատական պաշտոնյա – Գրիգորի Կոտով, Նավաստի – Ժիրայր Կարապետյան, Բանտապահ – Գեղամ Նալբանդյան, Մեր Հովիվ – Գ. Կարապետյան, Կլաուն – Թ. Սարգսյան, Ավտոլիկոս – Ալեքսանդր Հովհաննիսյան, Հերմիոն – Աղավնի Հարությունյան, Պերտիդա – Լենա Փաչինյան, Պոլինա – Հասմիկ Նաղաչյան, Էմիլյա – Օ. Մուրաֆյան, Ա. ազնրվականուհի – Աղավնի Հովհաննիսյան, Բ. ազնվականուհի – Արաքսյա Մարյան, Մոպսա – Ռ(ոզա) Գրիգորյան, Դուկաս – Ռ. Գորիլյան:

Երկրորդ կազմ՝ Լեոնտես – Արչավիր Վաչյան, Մամիլիուս – Ռոզա Գրիգորյան, Կլեոմենես – Աշոտ Գևորգյան, Դիոն – Վրույր Աղաջանյան, Բանտապահ – Հովհաննես Մարյան, Կլաուն – Ս. Սահակյան:

Կայծ, № 84: Սովետական Հայաստան, № 202:

Սեպտեմբեր. — Երևանի Հայֆիլհարմոնիայի Ամառային թատրոնում (այժմյան Կոմիտասի անվ. երաժշտական տան տեղը), Կիրովականի Արեւյանի անվան պետթատրոնի ներկայացումը Շրջանային թատրոնների ստուգատեսին:

Նոյեմբերի 17. — Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի բեմադրութեան քննարկումը, զեկուցող՝ Լուիզա Սամվելյան:

1955

Մարտի 27. — Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

1956

Մայիս. — Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում, Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

Космоспект, № 138.

1977

Փետրվարի 17. — Ստեփանակերտի Գորկու (այժմ՝ Վ. Փափազյանի) անվան թատրոնում (Թարգմ. Ստ. Ալաջաջյան). բեմադրութունը՝ Հովհաննես Կարապետյանի, նկարիչ՝ Գրիգոր Մատուրյան, երաժշտական ձևավորումը՝ Ֆելիքս Արամյանի, պարերի բեմադրութունը՝ Ա. Ա. Բաբայանի:

Լեոնտես — Բենիկ Օվչյան, Մամիլիուս — Ս. Երեմյան, Կամիլո — Սամվել Վիրաբյան, Անտիգոնես — Վանյա Հովհաննիսյան, Կլեոմենես — Ա. Հարությունյան, Դիոն — Սամվել Էվրիյան, Պոլիքսենես — Միքայել Հարությունյան, Ֆլորիդել — Բ. Գևորգյան, Նավաստի — Մ. Ավագյան, Բանտապահ — Բ. Պողոսյան, Մեր Հովիվ — Գուրգեն Գրիգորյան, Կլաուն — Քաջիկ Հարությունյան, Ավտոլիկոս — Մամիկոն Միքայելյան, Հերմիոն — Մարգր Բալասանյան, Պերտիդա — Ժաննա Գալստյան, Պոլինա — նը-

վարդ Ասատրյան, Էմիլյա — Ռոզա Գրիգորյան, Մոպսա — Արեգա Առաքելյան, Դորկաս — Զ. Առաքելյան, Ա. Հովվուհի — Ժաննա Գալստյան, Բ. Հովվուհի — Ա. Հարությունյան, Դատական պաշտոնյա — Վ. Առուշանյան, Ա. Պալատական — Բուղդան Բաբայան, Բ. պալատական — Բ. Պողոսյան, Ա. ազնվականուհի — Շուշիկ Գրիգորյան, Բ. ազնվականուհի — Ա. Հովհաննիսյան, Գ. ազնվականուհի — Ա. Օհանյան:

Երկրորդ կազմ. Մեր Հովիվ — Ժորա Մովսիսյան, Հերմիոն — Հերիքնազ Սիմոնյան, Պերտիդա — Արեգա Պետրոսյան, Պոլինա — Զուլիխտ Հարությունյան, Ա. Հովվուհի — Արեգա Պետրոսյան:

Կոմունիստ, № 73: Ներկայացման ծրագիրը:

1978

Մայիսի 25. — Կիրովականում, Ստեփանակերտի թատրոնի հյուրախաղերին:

Ներկայացման ծրագիրը:

MACBETH (1605)

ՄԱԿԲԵԹ

1864

Հունվարի 29. — Վենետիկի Մխիթարյան միաբանության դպրոցական թատրոնում (Ժան-Ֆրանսուա Դյուսիսի ֆրանսերեն փոխադրության 1839-ի հրատարակությունից թարգմ. Սամուել վարդապետ Կայսերյան), Շեքսպիրի ծննդյան 300-ամյակի առթիվ, առաջին անգամ:

Պիեսը խաղացվել է կրճատված, 9 գործող անձով, Լեդի Մակբեթի դերը դարձվել է ֆրետեկոնտ անունով, իսկ Հայերեն թարգմանության մեջ՝ էդգարդ, որդի Մակբեթի:

Բազմավեպ, 1964, № 10-12, էջ 287-289:

1867

Մարտի 25. — Կ. Պոլսի Նաումի թատրոնում, Ասիական ընկերության դերասանական խումբը (Թարգմ. Ուաչատուր Ուղուրեկյան). բեմադրությունը՝ Հակոբ Վարդուկյանի:

Մակբեթ — Հակոբ Վարդուկյան, (Լեդի Մակբեթ — Երանուհի Գարագաչյան, Մակդուֆ — Պետրոս Աղամյան):

Մասիա, № 789: Շեքսպիրական, գիրք 2, Եր., 1967, էջ 236:

1873-1874

Կ. Պոլսի Հայ դերասանական խումբը 1873-1874 թատերաշրջանում բեմադրվելիք պիեսների շարքում նախատեսել է ներկայացնել «Մակբեթը», իբրև առաջին անգամ:

Թատերախմբի վերատեսուչը եղել է Թովմաս Ֆասուլյանյանը, բեմի տնօրենը՝ Սերովբե Պենկյանը, փոխտնօրենը՝ Գրիգոր Վարդուկյանը: Ներկայացումը չի կայացել:

ԳԱԹ, Ս. Դավթյանի ֆոնդ:

1893

Դեկտեմբերի 20. — Թիֆլիսի Արքունական (օպերային) թատրոնում, Գևորգ Պետրոսյանի բենեֆիսային «Քին» ներկայացման մեջ կատարվել է մի տեսարան «Մակբեթից» (Թարգմ. Ստեփան Մալխասյանց):

Մակբեթ — Գևորգ Պետրոսյան:

Մատենադարան, Ալ. Երիցյանի ֆոնդ:

1899

Հունվարի 27. — Բաքվում, Թիֆլիսի դերասանական խումբը, ի նպաստ Գևորգ Պետրոսյանի տրված «Քին» ներկայացման մեջ բեմ բեմի վրա տեսարանում կատարել է հատված «Մակբեթից»:

Տարազ, № 5, էջ 127:

1914

Փետրվարի 10. — Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայոց դրամատիկական ընկերության դերասանական խմբի ներկայացման («Մալոմե», «Դյուլթական հրչյուններ») վերջում Սիրանուչը կատարել է Լեդի Մակբեթի մենախոսությունը: (3-րդ արարի 4-րդ պատկերը):

Հորիզոն, № 32: Մշակ, № 33:

1910-ական թթ.

1910-ական թթ. երկրորդ կեսին, Նյու Յորքի Հայ դրամատիկ խմբի կատարմամբ (Թերևս՝ Մ. Մելքոնի թարգմանությամբ):

ԳԱԹ, Ղ. Սարգիսյանի հուշերը:

1919

Սեպտեմբերի 1. - Լովելի Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Արանց և կանանց մասնաճյուղը բեմադրության է պատրաստել «Մակբեթը»:

Երիտասարդ Հայաստան, № 14:

1920

Մարտի 15. - Կ. Պոլսի Բերայի Պրտի Շան թատրոնում, ցերեկը, Պոլսահայ դրամատիկ խումբը. բեմադրությունը՝ Վ. Փափազյանի:

Մակբեթ - Վահրամ Փափազյան, Լեդի Մակբեթ - Սիրանույշ Ալիքսանյան, էդմոնդ - Տրդատ Նշանյան, Բանքո - Նշան Պեչիկթաշյան:

ԳԱԹ, Վ. Փափազյանի ֆոնդ:

Հոկտեմբերի 24. - Կ. Պոլսի Պրտի Շան թատրոնում, ցերեկը, Պոլսահայ դրամատիկ խումբը:

Նոր դերակատարներ՝ Դունկան - Տրդատ Նշանյան, Անգուս - Աշոտ Մատաթյան, Մակդուֆ - Հրաչյա Ներսիսյան, Մալկոմ - Երվանդ Թոլայան, Ռոս - Վ. Պալթազարյան:

Ճակատամարտ, № 588, 589:

Նոյեմբերի 4. - Նույն խումբը: Մակբեթ - Տրդատ Նշանյան:

1922

Օգոստոսի 6. - Կ. Պոլսի Սկյուտարի Թեփեբաշի թատրոնում, Պոլսահայ դրամատիկ խումբը:

Մակբեթ - Վ. Փափազյան, Լեդի Մակբեթ - Ս. Ալիքսանյան, Առաջին վհուկ - Գրիգոր Ավետյան:

ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ:

Նոյեմբեր-դեկտեմբեր. - Բաթումում, Վ. Փափազյանը (Մակբեթ) տեղի թատերական կոլեկտիվի հետ: Լեդի Մակբեթ - Նվարդ Ալիխանյան (վերագրվել է Արուս Ոսկանյանին):

1924

Աչնանը. - Խարկովում, Վ. Փափազյանը (Մակբեթ) տեղի թատերասերների խմբի հետ:

Մարտակոչ, № 298:

1926

Դեկտեմբերի 29. - Թիֆլիսի Ռուսթավելու անվան թատրոնում, Հայկական պետթատրոնի ներկայացումը. թարգմանությունը և բեմադրությունը՝ Վ. Փափազյանի (Մակբեթ), նկարիչ՝ Գիգո Շարբաբջյան:

Դունկան - Վարդան Միրզոյան, Բանքո - Մաթևոս Սանամյան, Մալկոմ - Ռ. Նադիրյան, Մակդուֆ - Խորեն Հարությունյան, Դոնալդեն - Պերճիկ (Հովհաննիսյան), Առաջին վհուկ - Հարություն Բերոյան, Ֆլինս - Վարյա Սարգսյան, Լեդի Մակբեթ - Մարի Բերոյան, Ազնվական կին - Արուս Ասրյան, Բ. վհուկ, Ա. մարդասպան - Մուրադ Կոստանյան, Մենտեթ, Գ. վհուկ, Բ. մարդասպան - Արամ Խոսրով, Դոնապան - Արշակ Մամիկոնյան, Համբավաբեր - Գեղամ Աֆրիկյան, Մանկավիճիկ - Սեդա Արարատյան, Լենոքս - Կարո Ալվարյան, Ռոս - Վալիկ (Անուշավան) Վարդանյան, Անգուս - Վահան Գալստյան:

Մարտակոչ, № 298: ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

1927

Հունվարի 27. - Թիֆլիսի Հայպետթատրոնում: Նոր դերակատար. Լեդի Մակբեթ - Օլգա Մայուրյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Սեպտեմբերի 15. - Լենինականի (Գյումրի) Քաղաքացիական թատրոնում, Վ. Փափազյանի (Մակբեթ) ղեկավարությամբ խումբը:

Լեդի Մակբեթ - Մարիամ Մոճոռյան: Մասնակցել են նաև Արչակ Մամիկոնյանը, Արամ Ռչտունին, Հայկ Բեյլերյանը և ուրիշներ:

Բանվոր, № 75:

1928

Փետրվարի 8. - Թիֆլիսի Հայպետթատրոնում, թարգմանությունը և բեմադրությունը՝ Վ. Փափազյանի (Մակբեթ), նկարիչ՝ Գ. Շարբաբչյան:

Դունկան - Միքայել Ալիխանյան, Մալկոմ - Արտաշես Վարդանյան, Դոնալդեյն - Նվարդ Ալիխանյան, Բանքո - Մաթևոս Սանամյան, Մակդուֆ - Դավիթ Մալյան, Լենոքս և Անգուս - Վահան Գալստյան, Ռոս - Անուշավան (Վավիկ) Վարդանյան, Ֆլինս - Վեներա Հակոբյան, Բժիշկ - Արտեմ Լուսինյան, Դրոնապան - Դորի Ամիրբեկյան, Ա. վհուկ - Հարություն Բերոյան, Բ. վհուկ - Գևորգ Փիրումյան, Գ. վհուկ - Ալեքսանդր Աբարյան, Ա. մարդասպան - Գրիգոր Ավագյան, Համբավաբեր - Գեղամ Աֆրիկյան, Լեդի Մակբեթ - Մարի Բերոյան, Ազնվական կին - Արուս Ասրյան:

Պրոլետար, № 30, 34: ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունվարի 18. - Բաքվի Հայպետթատրոնի ներկայացումը (Թարգմ. Հ. Մասեհյան), բեմադրությունը՝ Լևոն Քալանթարի:

Մակբեթ - Վ. Փափազյան, Լեդի Մակբեթ - Մարիա Ադամյան, Մալկոմ - Սերժ Հայրյան, Դոնալդեյն - Լյուսի Թառայան,

Բանքո - Լևոն Ալավերդյան, Մակդուֆ - Ալեքսանդր Հովհաննիսյան, Լենոքս - Մկրտչյան, Ռոս - Մարտունի Մարյան, Բժիշկ - Աղասի Ալայան, Ազնվական կին - Մանյա Թավրիզյան, Դրոնապան և Բ. վհուկ - Ավետ Ազյան, Ա. վհուկ - Վահան Եսայան, Գ. վհուկ - Միքայել Սաֆարյան, Համբավաբեր - Սերոբ, Դահիճ - Մարկոսյան:

ԳԱԹ, Լ. Ալավերդյանի ֆոնդ:

1932

Նոյեմբերի 15.- «Մակբեթի» Համբարձեմը Երևանի Առաջին (այժմ՝ Սունդուկյանի անվ.) թատրոնի կողմից:

1933

Ապրիլի 24. - Երևանի Առաջին (այժմ՝ Սունդուկյանի անվ.) թատրոնում (Թարգմ. Հ. Մասեհյան), տեքստի լրացումները՝ Տիգրան Հախումյանի (5 գործ., 20 պատկեր), տեքստի համադրումը և բեմադրությունը՝ Արմեն Գուլակյանի, ռեժիսուրա՝ Ա. Գուլակյան, Մկրտիչ Զանան, նկարիչ՝ Միքայել Արուստյան, երաժշտությունը՝ Արամ Նաչատրյանի:

Դունկան - Տիգրան Այվազյան, Մալկոմ - Վաչե Բազրատունի, Մակբեթ - Հրաչյա Ներսիսյան, Լեդի Մակբեթ - Արուս Ոսկանյան, Բանքո - Վավիկ Վարդանյան, Ֆլինս - Թաթուլ Դիլաբյան, Եպիսկոպոս - Ս. Ասլանյան, Անգուս - Ավետ Ավետիսյան, Մակդուֆ - Գուրգեն Զանիրբեկյան, Ռոս - Լևոն Մարյան, Լենոքս - Օրի Բունիաթյան, Մենտեթ և Ա. ապստամբ քաղաքացի - Գարիկ Մուշեղյան, Կաթնես - Գեղամ Աֆրիկյան, Միվարդ - Հենրի Ասլանյան, Բժիշկ և Դոնապան - Գուրգեն Գաբրիելյան, Ա. աղջիկ - Անատոլյա Եղյան, Բ. աղջիկ - Ա. Միմոնյան, Էմմանուել - Մուրադ Կոստանյան, Մարդասպան - Սիանոս Հովհաննիսյան, Ա. քահանա - Տիգրիս Աբրահամյան, Բ. քահանա և Բ. սուրհանդակ Դունկանի մոտ - Գևորգ Ասլանյան, Գ. քահանա և Զեկ-Կեղ - Վաղինակ Մարգունի, Դիկ -

Հովհաննես Ավագյան, Ջոն — Ռաֆայել Սարոյան, Ջորջ — Նշան Գևորգյան, Սմիթ — Սուրեն Աբեղյան, Սուրհանդակ Ջեկ-Կեդի մոտ — Տարոն Նաչատրյան, Ա. սուրհանդակ Դունկանի մոտ, Բ. լրտես Անգուսի մոտ և Ա. սպասավոր — Ծերուն Սամոկրանյան, Ա. լրտես Անգուսի մոտ — Ազատ Շերենց, Ա. կին ապստամբ — Ամայա Արագյան, Բ. սպասավոր — Հ. Գալստյան:

Ապրիլի 26. — Երկրորդ կազմ. Մակրեթ — Մկրտիչ Ջանան;

Ապրիլի 27. — Լեդի Մակրեթ — Ռուզաննա Վարդանյան:

Մայիսի 16. — Բժիշկ — Գրիգոր Ավետյան:

Հունիսի 16. — Սիվարդ — Վահան Դասոյան:

Խորհրդային Հայաստան, № 134: Սունդուկյանի անվ. Թատրոնի նյութեր:

Մայիսի 19-20. — Հայաստանի գրողների տանը, Սունդուկյանի անվան Թատրոնի բեմադրության քննարկումը: Ջեկուցող՝ Հայկ Գյուլիքևիսյան:

Գրական Թերթ, № 9:

1934

Երևանի Առաջին պետթատրոնում, նոր դերակատարներ:

Հունվարի 28. — Ռոս — Վահան Դասոյան:

Մայիսի 24. — Ջեկ-Կեդ — Վահան Դասոյան:

1935

Հունիսի 10. — Երևանի Առաջին պետթատրոնի բեմադրության վերջին՝ 59-րդ ներկայացումը:

1940-1950-ական թթ.

Սփյուռքահայ Թատրոնում: Մակրեթ — Մանվել Մարուքյան:

Դերասանի վկայությունը:

1950

Հայեպում. — Փարիզահայ դերասան-ռեժիսոր Տրդատ Նշանյանը (Մակրեթ) տեղի Թատերասերների խմբի հետ:

Ք. Քորանյան, Սուրիահայ Թատրոնը և Բարսեղ Արովյանի հուշերը, Բեյրութ, 1973, էջ 37:

1958

Նոյեմբերի 23. — Սոֆիայի Գ. Դիմիտրով սրահում, «Երևան» մշակութային միության «Սունդուկյան» Թատերախումբը Վահրամ Փափագյանի (Մակրեթ) մասնակցությամբ, տեսարաններ:

Լեդի Մակրեթ — Սիրուն Տեր-Մինասյան:

ԳԱՔ, Օ. Քեչյանի ֆոնդ:

1964

Մայիսի 28-29. — Երևանի Հայֆիլհարմոնիայի մեծ (այժմ՝ Արամ Նաչատրյանի անվան) դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, տեսարան:

Մակրեթ — Վ. Փափագյան, Լեդի Մակրեթ — Լյուսյա Հովհաննիսյան:

1967

Դեկտեմբերի 3. — Երևանի Գեղարվեստա-Թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երկրորդ կուրսի (ղեկ. Ռ. Ջրբաչյան) ուսանող Կարլեն Վարժապետյանի բեմադրությամբ, տեսարաններ (I և IV):

Մակրեթ — Ռուբեն Մակարյան, Լեդի Մակրեթ — Փիրուզա Կողակյան (դերասանակ. ֆակ. երկրորդ կուրսից), Ա. վհուկ — Կ. Աղիլխանյան (դերասանակ. ֆակ. երկրորդ կուրսից), Բ. վհուկ — Սվետլանա Քոչարյան (այժմ՝ Լանա Ատրունի), Գ.

վհուկ – Գոհար Տրդատյան (ղերասանակ. ֆակ. երրորդ կուրսից), Սպասավոր – Արմեն Նանդիկյան:

Ծրագիր ուսումնական ֆակուլտետի 11-րդ չրջանավարտների, Եր., 1971:

1972

Մարտի 11. – Բեյրութի Հ. Տեր-Մելքոնյան սրահում (Բուրջ Համուտ), Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ (Մակբեթ), տեսարան:

Լեդի Մակբեթ – էոժենի Թոմպուլյան:

ԳԱԹ, Զ. Գալուստյանի ֆոնդ:

Մայիսի 5. – Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Արեւյանի անվան թատրոնում (Թարգմ. Հ. Մասեհյան). բեմադրությունը՝ Ռաֆայել Զրբաչյանի, նկարիչներ՝ Նիկոլայ Էպով, Սվետլանա Ստավցևա (Մոսկվա), զգեստները՝ Սերինե Բեժանյանի, պարերը՝ Զարե Մուրադյանի, երաժշտական ձևավորումը՝ Զոն Ասատրյանի, ներկայացումն ընթացել է առանց ընդմիջման:

Դուռնական – Լևոն Սարգսյան, Մալկոմ – Լևոն Շարաֆյան, Դոնալդ – Մ. Մարգարյան, Մակբեթ – Վոլոդյա Գրիգորյան, Բանքո – Սուրեն Հովհաննիսյան, Մակդուֆ – Հակոբ Ազիզյան, Լենոքս – Աշոտ Գևորգյան, Ռոս – Ալֆրեդ Զաքարյան, Ֆլինս և Սպա – Ռ. Բաղդասարյան, Սեյտոն – Ռազմիկ Մարգարյան, Բժիշկ – Միքայել Հակոբյան, Դոնապան – Գ. Ստեփանյան, Ա. վհուկ – Ռ. Գորիկյան, Բ. վհուկ – Ռոզա Մխիթարյան, Գ. վհուկ – Շամիրամ Տերտերյան, Ա. մարդասպան – Ղազար Նազարյան, Բ. մարդասպան – Վ. Աղաջանյան, Լեդի Մակբեթ – Լենա Փաշինյան, Լեդի Մակդուֆ – Էլինե Աղամյան, Լեդի Մակդուֆի որդին – Ս. Լ. Դանիելյան (զպրոցական), Ազնվական կին – Լիդա Վասիլյան, Մառա – Սամվել Վիրաբյան, Լրաբեր – Ասատուր Օհանյան:

Երկրորդ կազմ. Բ. վհուկ – Մ. Նահապետյան, Ֆլինս – Ա. Սարգսյան:

Ներկայացման ծրագիր:

1973

Մայիսի 4. – Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի բեմադրության քննարկումը: Զեկուցող՝ Նշան Մուրադյան:

Թատերական Երևան, № 11:

Հունիսի 1. – Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ուսումնական ֆակուլտետի երրորդ կուրսի (ղեկ. Ռ. Զրբաչյան) ուսանող Արա Տեր-Գրիգորյանի բեմադրությամբ, տեսարաններ:

Մակբեթ – Կարեն Զանգիրյան, Լեդի Մակբեթ – Գոհար Տրդատյան (ՊՀԹ ղերասանուհի), Աիդա Հովհաննիսյան, Բանքո – Մ. Փանոսյան, Ռոս – Դավիթ Սաֆարյան, Անգուստ – Մանուել Զիջի (Սիրիա), Սպասավոր – Նիկոլ Գյուլբուրդյան (Իրան), Վհուկներ – Միհրան Զուլալյան, Իրինա Օհանյան, Սաթենիկ Մաթևոսյան:

Ծրագիր ուսումնական ֆակուլտետի 15-րդ չրջանավարտների, Եր., 1974:

Հունիսի 16–17, 24. – Հալեպի ՀԲԸ միության Հանդիսասրահում, Ուրֆայի Վերածնունդ միության թատերախումբը, Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ (Մակբեթ), տեսարաններ:

Լեդի Մակբեթ – էոժենի Թոմպուլյան, Սպա – Սարգիս Սերմանուկյան:

Զարթուր, № 208:

1973–1974

Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ուսումնական ֆակուլտետի (ղեկ. Արտ. Հովսեփյան) ուսանող Լեոնիդ Հարությունյանի նախադիպլոմային աշխատանքը, տարբեր կուրսերի ուսանողների մասնակցությամբ:

Մակբեթ – Լևոն Գրիգորյան, Լեդի Մակբեթ – Զուլիետ Ստեփանյան: Մասնակցել են նաև՝ Կարեն Աբրահամյանը, Սամվել Գարանյանը, Ռուբեն Հախվերդյանը, Հրաչիկ Մեսյանը:

Առնիկ Հարությունյանի հաղորդումը:

1988

Գարնանը. – Մոսկվայի Տազանկայի թատրոնում, Կինեմատոգրաֆիայի Համամիութենական պետական ինստիտուտի Հայկական դերասանական կուրսի ներկայացումը, կուրսի ղեկավար և բեմադրող՝ Արմեն Զիզարխանյան:

Մակրեթ – Արթուր Դիլանյան:

Արտաշես Ալեքսանյանի Հաղորդումը:

1995

Հուլիսի 12. – Թեհրանի Հայ Ուսումնասիրաց Չարմահայ միության «Հովհ. Թումանյան» սրահում, «Հայ Փորձական թատրոնը». բեմադրությունը և Համադրումը թատերախմբի ղեկավար Լուսաննա Հովհաննիսյանի (Հ. Մասեհյանի թարգմանություն սեղմված-կրճատված տարբերակով):

Մակրեթ – Արա Ասլանյան, Լեդի Մակրեթ – Ժանետ Հովհաննիսյան, Ա. վճուկ, Բանքո, Բանքոյի ուրվականը, Սեյտոն, Մահ – Վարուժան Ազիզյան, Բ. վճուկ, Մարդասպան, Բժիշկ, Զինվոր – Հենրիկ Ուաչատրյան:

Ժանետ Հովհաննիսյանի Հաղորդումը:

Հուլիսի 15. – Նույնը կրկնվել է ի պատիվ Չարմահայի Հայ Ուսումնասիրաց միության նորոգ Հանգուցյալ դերասան և ռեժիսոր Էդիկ Ասլանյանի: (Ուղագրվել է վեց անգամ):

Ալիք, № 150:

2004

Հոկտեմբերի 23. – Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում (Թարգմ. Հ. Մասեհյան), բեմականացման տարբերակը և բեմադրությունը Արմեն Ուանդիկյանի, նկարիչ՝ Կարեն Գրիգորյան, ռեժիսորներ՝ Արթուր Ութմազյան, Ռոբերտ Հարությունյան, երաժշտական ձևավորումը՝ Աշոտ Փափազյանի և Ա. Ուանդիկյանի:

Դունկան – Ռոբերտ Հարությունյան, Մալկոմ – Գրիգոր Ուաչատրյան, Նարեկ Ղափլանյան, Մակրեթ – Արթուր Ութմազյան, Լեդի Մակրեթ – Լիլիթ Մեսրոպյան, Լուիզա Ղամբարյան, Մարինե Գաբրիելյան, Բանքո – Ռուբեն Կարապետյան, Մակդուֆ – Հովհաննես Բարախանյան, Լեդի Մակդուֆ – Նաիրա Շահիրյան, Լիզա Բարսեղյան, Մակդուֆի որդին – Արեն Մարգարյան, Ռոս – Արմեն Բարսեղյան, Լենոքս – Արտյոմ Եղիազարյան, Ֆլինս – Հրաչյա Ստեփանյան, Սեյտոն – Էրիկ Սարգսյան, Արեն Վաթյան, Բժիշկ – Կարպիս Շամյան, Գևորգ Աբազյան, Լրաբեր – Հովհաննես Թեքզոյցյան, Մաղրաժու – Վահագն Գալստյան, Դայակ – Հայկուհի Ուուդավերդյան, Մարի Մարյան, Հեկատե – Շուշան Ղազարյան, Ա. ոգի – Լուիզա Ղամբարյան, Լիլիթ Մեսրոպյան, Բ. ոգի – Լուսինե Հարությունյան, Գ. ոգի – Անժել Սարգսյան, Ա. մարդասպան – Էդվարդ Գասպարյան, Բ. մարդասպան – Արա Գևորգյան, Զինվորներ – Տիգրան Գևորգյան, Վահան Մալխասյան, Գազիկ Մկրտչյան:

Ներկայացման ծրագիրը:

2008

Սեպտեմբերի 13. – Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը, Երևանյան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնին:

2010

Սեպտեմբերի 15. – Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում. «Լեզենդ Մակրեթի մասին» վերնագրով (Թարգմ. Հ. Մասեհյան): Բեմադրությունը, նկարչական և երաժշտական ձևավորումները՝ Վահան Բաղայանի, զգեստների նկարիչ՝ Մերի Սարգսյան: Ներկայացվել է Վ. Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնին:

KING JOHN (1596)

ՋՈՆ ԱՐՔԱ

1981

Նոյեմբերի 11. – Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում (Թարգմ. Նաչիկ Դաշտենց), առաջին անգամ, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնի բացմանը. բեմադրությունը Նորեն Աբրահամյանի, ռեժիսոր՝ Համլետ Հովհաննիսյան, նկարիչ՝ Զարուհի Մուրադյան, զգեստները՝ Սամվել Փարթամյանի, կոմպոզիտոր՝ Տիգրան Մանսուրյան, պարերը՝ Ռուդոլֆ Նառատյանի, սուսերամարտը՝ Մ. Մելքոնյանի:

Ջոն Արքա – Սոս Սարգսյան, Արթուր – Ա. Մանուկյան, Կոմս Փեմբրուկ – Գևորգ Ասլանյան, Կոմս-էսեքս – Վիգեն Ստեփանյան, Կոմս Սոլսբերի – Վլադիմիր Աբաջյան, Հուբերտ դե Բուրգ – Արմեն Մարության, Ռոբերտ Ֆոլքլենդերիջ – Սերգեյ Մկրտչյան, Ֆիլիպ Ֆոլքլենդերիջ – Ռուդոլֆ Ղևոնդյան, Պիտեր Պոմֆրեացի – Աչոտ Ներսիսյան, Ֆիլիպ – Հովակ Գալոյան, Լուիս – Յուրի Ամիրյան, Կարդինալ Պանդոլֆ – Մայիս Կարապետյան, Շատիլոն – Ալեքսանդր Նաչատրյան, Թագուհի էլիսոր – Վարդուհի Վարդերեսյան, Կոնստանս – Լյուսյա Հովհաննիսյան, Բլանչ – Անուշ Սարգսյան, Առաջին ծաղրածու – Հարություն Մովսիսյան, Երկրորդ ծաղրածու – Վլադիմիր Քոչարյան, Ստիվըն Լենգթըն – Նաչիկ Նազարեթյան, Լորդեր – Գևորգ Աչուկյան, Գեղամ Հարությունյան, Մուրադ Կոստանյան, Վադինակ Մարգունի, Ալեքսանդր Ադամյան, Գևորգ Չեպչյան, Վաչե Բագրատունի, Վահրամ Եղչատյան, Անատոլի Թորգոմյան, Նորայր Գևորգյան, Կարեն Զանիբեկյան, Անժերի քաղաքացիներ – Հարություն Հայրապետյան, Լորենց Առուշանյան, Աչոտ Բարսեղյան, Լենա Ալվարյան, Լուսինե Բարսեղ-

յան, Զուլիետա Բարսեղյան, Թամար Աբրահամյան, Մ. Պետրոսյան, Լյուդմիլա Բարսեղյան, Լեդիներ – Ալլա Թումանյան, Կարինե Սուքիասյան, Թամար Աբրահամյան, Դահիճներ – Վահան Հովակիմյան, Արթուր Նալբանդյան:

Ներկայացման ծրագիրը:

1982

Նոր դերակատարներ. փետրվարի 24-ին՝ Երկրորդ ծաղրածու – Աչոտ Ղուկասյան, մայիսի 11-ին՝ Կոմս Սոլսբերի – Գեվորգ Չեպչյան, 21-ին՝ Ֆիլիպ – Գեղամ Հարությունյան, Հոկտեմբերի 8-ին՝ Բլանչ – Ալլա Վարդանյան, 1983-ի Հունվարի 9-ին՝ Երկրորդ ծաղրածու – Արմեն Էլբակյան:

1983

Ապրիլի 5, 6. – Մոսկվայի Փոքր թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի Հյուրախաղերին. տեքստը հաղորդվել է ռուսերեն թարգմանությամբ:

Հունիսի 12. – Կիևի Ֆրանկոյի անվան թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի Հյուրախաղերին:

Հունիսի 23-ին, ցերեկը – ցուցադրվել է հեռուստատեսությամբ:

Սեպտեմբերի 28. – Սունդուկյանի անվան թատրոնում, նոր դերակատարներ. Պիտեր Պոմֆրեացի – Հարություն Հայրապետյան, Հոկտեմբերի 30-ին՝ Շատիլոն – Կարեն Զանիբեկյան:

1984

Մարտի 11. – Նոր դերակատարներ՝ Կոմս Փեմբրուկ – Վաչե Մարութանյան:

Հոկտեմբերի 27. – Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության վերջին՝ 60-րդ ներկայացումը:

Սունդուկյանի անվ. թատրոնի ներկայացումների զբանջման մատյաններ:

Մայիսի 16 – Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի «Զոն Արքա» բեմադրությունը ներկայացվել է Լոնդոնի՝ չեքսպիրյան շրջանի «Գլոբուս» (կլոր, առանց տանիքի) թատրոնում:

Հունիսի 20. – Սունդուկյանի անվան թատրոնում (Թարգմ. Ս. Դաշտենց), բեմադրությունը՝ Տիգրան Գասպարյանի, նկարիչ՝ Վահագն Թևանյան, զգեստների նկարիչ՝ Մերի Սարգսյան, կոմպոզիտոր՝ Էդուարդ Հայրապետյան:

Զոն արքա – Արմեն Մարության, Բաստարդ – Տիգրան Ներսիսյան, Կոնստանս – Ալլա Վարդանյան, Էլինոր – Նելլի Ներանյան, Արքա Ֆիլիպ – Արամ Հովհաննիսյան, Կարդինալ Պանդոլֆ – Արմեն Մարգարյան, Հուբերտ – Ալբերտ Սաֆարյան, Բլանչ – Լիանա Արեստակյան, Արթուր – Գնել Ուլիխանյան, Լյուդովիկ – Դավիթ Գասպարյան, Երաժիշտներ – Արտակ Ասատրյան, Մհեր Մնացականյան, Ոսրով Մնացականյան:

Ներկայացման ծրագիրը:

KING RICHARD II (1595)

ՌԻՉԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐ

1984

Նոյեմբերի 25. – Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Արեւյանի անվան թատրոնում (Թարգմ. Սաչիկ Դաշտենց), առաջին անգամ, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին. բեմադրությունը՝ Վահե Շահվերդյանի, նկարիչ՝ Սաչատուր Ղարաբեկյան, զգեստները՝ Նատաշա Կազիրելովայի, երաժշտական ձեւավորումը՝ Միհրան Զուլակյանի:

Ժամանակ – Հասմիկ Ալեքսանյան, Ռիչարդ Երկրորդ – Ռազմիկ Սոսրոն, Հենրի Բոլինբրոկ – Հակոբ Ազիզյան, Զոն Գոնտ – Սուրեն Հովհաննիսյան, Յորքի դուքս – Գառնիկ Պապյան, Դուքս Օմեո – Հայկ Թորոսյան, Կոմս Նորթեմբերլենդ – Ժակ Գաբրիելյան, Թոմաս Մաուբրի – Սամվել Փիլոյան, Հենրի Պերսի – Արթուր Ազիզյան, Բուչի – Վ. Նազլուխանյան, Բեզոտ – Հակոբ Դանիելյան, Գրին – Արշակ Մարտիրոսյան, Լորդ Ռոս – Ասատուր Օհանյան, Լորդ Վիլոբի – Գագիկ Դուրմիչյան, Լորդ Ֆիցվոտեր – Արամ Մխիթարյան, Կարլայլի եպիսկոպոսը – Մայիս Սարգսյան, Լորդ Մարչալ – Կ. Սարուխանյան, Պիրա էքստոն – Վ. Աղաջանյան, Ա. պարտիզպան և Ախոռապետ – Ռազմիկ Մարգարյան, Բ. պարտիզպան – Սերգեյ Մելիքյան, Թագուհի – Էլինե Աղամյան, Յորքի դքսուհի – Լենա Փաշինյան, Գլոստերի դքսուհի – Քնարիկ Գուրուսյան, Պալատական տիկին – Շամիրամ Տերտերյան:

Ներկայացման ծրագիրը:

1985

Սեպտեմբերի 27. – Ստեփանակերտի թատրոնում, Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

1987

Հուլիսի 20, 28. – Մոսկվայի Սովրեմեննիկ թատրոնում, Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

Օգոստոսի 7, 18. – Բառնաուլում (Ռուսաստանի Ալթայան երկրամաս), Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

Սեպտեմբերի 11. – Թբիլիսիի Հայկական թատրոնում, Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

1988

ղերասանական ընտանիքը տեղական ուժերի հետ:

Օթեյլո - Միք. Կոստանյան, Կասիո - Հրայր Ուաչատրյան,
(Ցագո - Վ. Կոստանյան), Մոնտանո - Անդրանիկ Սարյան,
Դեզդեմոնա - Մարգո Կոստանյան, էմիլյա - Նվարդ Մադաթ-
յան:

Ա. Սարյանի հաղորդումը:

Մայիսի 21. - Թբիլիսիի պետթատրոնում, Արտեմ Լուսին-
յանի (Օթեյլո) ստեղծագործական երեկոյին, տեսարաններ:
էմիլյա - Ասյա Ժամկոչյան:

Հունիսի 20. - Ախալցխայում, Թբիլիսիի թատրոնի ղերասա-
նական խումբը: Օթեյլո - Ա. Լուսինյան:

Հուլիսի 4. - Սունդուկյանի անվան թատրոնում, Պետրոս
Աղամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկոյին, տեսա-
րաններ:

Օթեյլո - Գ. Զանիբեկյան, Դեզդեմոնա - Ռ. Վարդանյան:

Գրական թերթ, № 27:

Հուլիսի 23. - Մարսելի Սինեմա թատրոն Ալքազարում,
«Շանթ» թատերախումբը Մ. Մարությանի (Օթեյլո) բեմադ-
րությամբ:

Կասիո - Սերժ Սարգիսյան, Ցագո - Գ. Բենդերյան, Դեզդե-
մոնա - Ռ. Մարության, էմիլյա - Ե. Վարժապետյան և ուրիշ-
ներ:

Հառաջ, № 1310:

Հուլիսի 30. - Լիոնի Հոլոֆի թատրոնում, Մարսելի «Շանթ»
թատերախմբի ներկայացումը Մ. Մարությանի (Օթեյլո) ղեկա-
վարությամբ:

Հառաջ, № 1326:

Օգոստոս. - Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ղե-
րասանական խումբը Գ. Զանիբեկյանի (Օթեյլո) ղեկավարու-
թյամբ, Լենինականում և Կիրովականում:

1950

Ապրիլի 26. - Զանգիբասարում (այժմ՝ Մասիս), Սունդուկ-
յանի անվան թատրոնի ներկայացումը:

Մայիսի 2. - Թբիլիսիի թատրոնում, Երևանի Սունդուկյա-
նի անվան թատրոնի ղերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթեյլո)
մասնակցությամբ:

Սովետական Վրաստան, № 40:

Մայիսի 22. - Բուենոս Այրեսի Փոլիթեամա թատրոնում, Ար-
գենտինահայ ժողովրդական թատերախումբը, Կարո Ուաչիկ-
յանի (Օթեյլո) բեմադրությամբ:

Վենետիկի դուքս և Լոդովիկո - Ս. Բյուսիեյան, Բրաբան-
ցիո - Միհրան Միրաքյան, Ծերակուտական - Հ. Գույումճյան,
Կասիո - Վահրամ Օզգայան, Ցագո - Սիրակ Սուրենյան (Փա-
րիզից), Ռոզրիզո - Մարգիտ Գալթագճյան, Մոնտանո - Արամ
Երկաթ, Դեզդեմոնա - Թագուհի Պալապանյան, էմիլյա - Գ.
Ստեփանյան:

ԳԱՔ, Ս. Սուրենյանի ֆոնդ:

Մայիսի 30. - Իսի լե Մուլինոյի Սինեմա Ալհամբրայում,
«Արփի» թատերախումբը, ի պատիվ Գառնիկ Բարիլուսյանի
(Օթեյլո), Ժիրայր Վարդապետյանի բեմադրությամբ:

Հունիսի 1. - Կրկնվել է Արֆուլիլի Սինեմա Ռեխսում:

Հառաջ, № 1572:

Հունիսի 2. - Թբիլիսիի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյ-
լո) մասնակցությամբ:

Վենետիկի դուքս - Գրիգոր Արզումանյան, Բրաբանցիո -
Լ. Ալավերդյան, Ա. սենատոր - Հ. Թաթարյան, Բ. սենատոր -
Մ. Մարության, Կասիո - Ռ. Պապուկյան, Ցագո - Գ. Ամիրբեկ-
յան, Բիանկա - Ռուզան Մալխասյան:

Այլ դերակատարներ՝

Հունիսի 12. — Լողովիկո — Գրիգոր Արզումանյան:

Հունիսի 17. — Օթելլո — Ա. Լուսինյան, Դեզդեմոնա — Սերիկ Շեկոյան, Լողովիկո — Արչակ Աղիլխանյան, Ռոդրիգո — Պահարե, Էմիլյա — Ծաղիկ Վրույր, Ա. սենատոր — Անդրանիկ Թաղեփոսյան:

Հուլիսի 25. — Բրաբանցիո — Ա. Քաջվորյան, Կասիո — Գրիգոր Արզումանյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիսի 23. — Աղբաշում, Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը:

Հուլիսի 28. — Ախալքալաքի շրջանի Դիլիսի գյուղում, Թրիլիսիի թատրոնի հյուրախաղերին: Կրկնվել է՝

Հուլիսի 29. — Ախալքալաքի մշակույթի տանը:

Հուլիսի 31. — Բողոքանովկայի շրջանի Փոքր Բանջալի գյուղում (Բրաբանցիո — Ֆերդինանդ Բժիկյան):

Օգոստոսի 3. — Սուլդա գյուղում (Բրաբանցիո — Մնացական Մարության):

Օգոստոսի 10. — Ախալցխայի պետթատրոնում:

Օգոստոսի 11. — Վալե գյուղում:

Օգոստոսի 12. — Ծինուբան գյուղում:

Օգոստոսի 14. — Ծղալթրիլա գյուղում:

Օգոստոսի 15. — Մեծ Պամաջ գյուղում:

ԳԱԹ, Պահարեի ֆոնդ:

Օգոստոսի 10. — Կիրովականում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:

(Բրաբանցիո — Լ. Մարյան, Կասիո — Գ. Աշուղյան, Ցագո — Գեղամ Հարությունյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Դեզդեմոնա — Ա. Արազյան, Էմիլյա — Ե. Սեբար): Մասնակցել են նաև՝ Թ. Դիլաքյանը, Տիգրան Բախչինյանը, Ավետիք Զրաղացպանյանը և ուրիշներ:

Օգոստոսի 20. — Լենինականում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը, նույն կազմով:

ԳԱԹ, Մրազիլ:

Նոյեմբերի 6. — Բուենոս Այրեսի Փոլիթեամա թատրոնում, Արգենտինահայ դրամատիկ թատերախումբը Մանվել Մարությանի (Օթելլո) բեմադրությամբ:

Վենետիկի դուքս — Հ. Կոչկարյան, Բրաբանցիո — Ա. Պոզոլյան, Սենատոր — Մ. Սիվրյան, Կասիո — Ե. Պերպերյան, Ցագո — Թ. Հովհաննիսյան, Մոնտանո — Պ. Թյուխունճյան, Լողովիկո — Հ. Գունտաքճյան, Ռոդրիգո — Հ. Լեոնյան, Սպա — Գ. Տեր-Պաշտոյան, Դեզդեմոնա — Ռոզա Մարության, Էմիլյա — Վ. Հովհաննիսյան:

ԳԱԹ, Թ. Ամատունու ֆոնդ:

1951

Հունվարի 26-27. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:

Գրական Թերթ, № 6:

Փետրվարի 8. — Լենինականի (այժմ՝ Գյումրի) թատրոնում: Բեմադրությունը՝ Ալեքսանդր Աբարյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Ա. Ներսիսյանի:

Օթելլո — Արտավազդ Փաշայան, Վենետիկի դուքս — Հովհ. Ղազարյան, Բրաբանցիո — Հ. Միանսարյան, Սենատորներ — Մ. Գավրոշ, Աշոտ Գևորգյան, Կասիո — Ստեփան Ալիխանյան, Ցագո — Արծրունի Հարությունյան, Գրացիանո — Վահրամ Սվաճյան, Լողովիկո — Արամ Ռչտունի, Մոնտանո — Կարո Արծրունյան, Ռոդրիգո — Ալեքսան Բոչարյան, Սուրհանդակ — Սերգեյ Չոլախյան, Նավաստի — Ֆրունզիկ Մկրտչյան, Սպա — Գեվորգ Աբաջյան, Դեզդեմոնա — Նինա Բոխյան, Էմիլյա — Նվարդ Աբալյան:

Երկրորդ կազմ՝

Օթեյլո - Ժան էլոյան, Յազո - Կարո Արծրունյան, Դեզդեմոնա - Վարդուհի Վարդերեսյան:

Բանվոր, № 26: ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 2996:

Ապրիլի 29. - Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթեյլո) մասնակցութեամբ:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 4033:

Մայիսի 20. - Թբիլիսիի Հայկական թատրոնում, Արտեմ Լուսինյանի (Օթեյլո) ստեղծագործական երեկոյին, տեսարան:

Մայիսի վերջերին. - Կապանի Շիրվանզադեի անվան թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հր. Ներսիսյանի (Օթեյլո) մասնակցութեամբ:

Հունիսի 20-24. - Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցութեամբ, նաև՝ Հուլիսի 2-3-ին և 9, 14-ին:

Սովետական Հայաստան, № 145:

Հունիսի 28. - Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Ավետ Ավետիսյանի (Յազո) մասնակցութեամբ, Օթեյլո - Ա. Լուսինյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հուլիսի 14. - Ախալցխայում, Վ. Փափազյանը (Օթեյլո) Թբիլիսիի թատրոնի դերասանական խմբի հետ:

Դեզդեմոնա - Էմմա Ստեփանյան, Էմիլյա - Սերիկ Շեկոյան, Բիանկա - Վեներա Հակոբյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Օգոստոսի 5. - Ախալցխայում, Վ. Փափազյանի մասնակցութեամբ, նույն կազմով, նաև՝

Օգոստոսի 7. - Գանդիադիում:

Հոկտեմբերի 30. - Բոլնիս Սաչենում:

Նոյեմբերի 16. - Թբիլիսիի թատրոնում:

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

Օգոստոսի երկրորդ կես. - Բաթումում, Թբիլիսիի Հայկական թատրոնի Հյուրախաղերին:

Батумская работа, № 158.

Հոկտեմբերի 28. - Լենինականի թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Ավետ Ավետիսյանի (Յազո) մասնակցութեամբ, նաև՝

Նոյեմբերի 3-4. - Նույն տեղում, Գ. Զանիրեկյանի (Օթեյլո) մասնակցութեամբ:

Նոյեմբերի 29-ից - Հոկտեմբերի 3-ը. - Նույն տեղում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցութեամբ:

1952

Փետրվարի 28. - Թբիլիսիի Հայպետթատրոնում, Լենինականի թատրոնի դերասան և ռեժիսոր Արմեն Արմենյանի ծննդյան 80 և բեմական գործունեության 60-ամյակների առթիվ ստեղծագործական երեկոյին, տեսարաններ 3-րդ գործողությունից:

Օթեյլո - Ա. Լուսինյան, Յազո - Արմեն Արմենյան, Կասիո - Ռ. Պապովյան, Դեզդեմոնա - Էմմա Ստեփանյան, Էմիլյա - Այա Ժամկոչյան:

ԳԱԹ, Մրազիր:

Մարտի 11. - Կալկաթայի Հայկազյան Գեղարվեստական միության թատերախումբը, Կոստանյանների մասնակցութեամբ:

Օթեյլո - Միք. Կոստանյան, Դեզդեմոնա - Մարգո Կոստանյան:

Նոր Ազգարար, № 2, էջ 48:

Ապրիլի 24-26. - Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցութեամբ:

Մայիսի 4. - Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Գ. Զանիրեկյանի (Օթեյլո) մասնակցութեամբ:

Մայիսի 12. — Երևան, Հայկական թատերական ընկերությունում Գ. Զանիբեկյանի (Օթեյլո) ստեղծագործական երեկոյին, տեսարաններ:

Մայիսի 12. — Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Մայիսի 29. — Թբիլիսիի Հայկական թատրոնում, Գուրգեն Զանիբեկյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Վենետիկի դուքս — Ա. Բաջվորյան, Բրաբանցիո — Լ. Ալավերդյան, Ա. սենատոր — Վ. Գալստյան, Բ. սենատոր — Մ. Մարության, Կասիո — Ռ. Պապովյան, Յագո — Դ. Ամիրբեկյան, Գրացիանո — Ն. Թումանյան, Լոդովիկո — Սոս Սոսյան, Ռոդրիգո — Հ. Ումիկյան, Մոնտանո — Ս. Բաբլոյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Էմիլյա — Ա. Ժամկոչյան, Բիանկա — Ռուզան Մալխասյան:

Սովետական Վրաստան, № 44: ԳԱԹ, Մրազիլ:

Հունիսի 7-8. — Կիրովականի Արեյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Հայկ Բեյլերյանի (Յագո), նկարիչ՝ Գ. Գեոկչակյան:

Վենետիկի դուքս — Գրիգորի Կոտով, Բրաբանցիո — Աչոտ Գևորգյան, Կասիո — Վոլոդյա Գրիգորյան, Ռոդրիգո — Ալեքսանդր Հովհաննիսյան, Մոնտանո — Հ. Ավագյան, Լոդովիկո — Սուրեն Եղիազարյան, Դեզդեմոնա — Մարուսյա Մարտիրոսյան, Էմիլյա — Հասմիկ Նաղաչյան, Բիանկա — Լենա Փաչինյան:

Երկրորդ կազմ՝

Յագո — Ալեքսանդր Շազաֆյան, Դեզդեմոնա — Աղավնի Հարությունյան:

ԳԱԹ-ի նյութեր:

Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Հունիսի 27. — Թբիլիսիի Հայպետթատրոնում:

Հուլիսի 22. — Թբիլիսիի Հայպետթատրոնում:

Հուլիսի 25. — Կիրովականի պետթատրոնում:

Օգոստոսի 4. — Ախալցխայում, Թբիլիսիի պետթատրոնի դերասանական խմբի հետ:

Օգոստոս. — Լենինականի թատրոնում:

Օգոստոս. — Բաթումում, Թբիլիսիի պետթատրոնի դերասանական խմբի հետ:

Սեպտեմբերի 7. — Գորիսի Վաղարշյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Աղասի Ալայանի (Յագո), նկարիչ՝ Վ. Խչատյան:

Վենետիկի դուքս — Վաղարշակ Խուրչուղյան, Բրաբանցիո — Լևոն Հարութ(յունյան), Կասիո — Կ. Ղարիբյան, Ռոդրիգո — Մելիտոս Ղազարյան, Գրացիանո — Ռ. Մուսայելյան, Լոդովիկո — Պարզև Առաքելյան, Դեզդեմոնա — Հրանուշ Բաբաջանյան, Էմիլյա — Սիրանուշ Խորենյան:

Սեպտեմբերի <9>. — Կապանի Շիրվանզադեի անվան թատրոնում, Վ. Փափազյանը (Օթեյլո) Գորիսի Վաղարշյանի անվան թատրոնի դերասանների հետ:

Նոյեմբերի 8. — Ախալցխայում, Թբիլիսիի թատրոնի դերասանական խումբը, Կասիո — Հ. Ումիկյան, Յագո — Ա. Բաջվորյան, Դեզդեմոնա — Մ. Մոճոոյան:

Դեկտեմբերի 6. — Թբիլիսիի Հայպետթատրոնում, Արամ Լուսինյանի (Օթեյլո) բեմական գործունեության 25-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:

ԳԱԹ, Մ. Մոճոոյանի ֆոնդ:

Դեկտեմբերի 23. — Երևանի Կիրովի անվան գործարանի ակումբում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների հանդիպումը բանվորների հետ: Տեսարան Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Սովետական Հայաստան, № 303:

1953

Հունվարի 31. — Լենինականի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Փետրվարի 5, 11, 25. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ, նաև ապրիլի 1, 3, 8-ին:

Սովետական Հայաստան, № 30:

Հունիսի 18. — Բաքվի 26 Կոմիսարների անվան Մշակույթի պալատում (նախկին Հայկական թատրոն), Թբիլիսիի Շահումյանի անվան թատրոնի Հյուրախաղերին: Ներկայացվել է նաև՝

Հունիսի 21. — Լոկ Բատանում:

Հունիսի 22. — Ջաբրատում:

Հունիսի 23. — Բաքվի Ձերժինսկու անվան զրոսայգու ամառային թատրոնում:

Հունիսի 29. — Բինաղաղիում:

Հուլիսի 6. — Սաբունչիում:

ԳԱԹ, Ն. Բերոյանի և Պաշարեի Փոնդեր:

Օգոստոսի 2. — Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ), Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Բրաբանցիո — Գևորգ Գևորգյան, Դեզդեմոնա — Վարդուշ Թամրազյան:

ԳԱԹ-ի նյութեր:

Օգոստոսի վերջերին. — Ստեփանակերտի պետթատրոնում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթեյլո) մասնակցությամբ նաև՝ Մարտակերտում:

Սովետական Ղարաբաղ, № 100, 105:

Հոկտեմբերի 12, 13. — Թբիլիսիի Հայպետթատրոնում, Հր. Ներսիսյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Նոյեմբերի 7, 8. — Ախալցխայի թատրոնում, Թբիլիսիի Հայպետթատրոնի դերասանական խումբը Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

ԳԱԹ, Ն. Բերոյանի Փոնդ:

1954

Հուլիսի 5. — Բաքվի Ազիզբեկովի անվան (Հետագայում՝ Երաժշտական կոմեդիայի) թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի Հյուրախաղերին, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Հուլիսի 6. — Նույն տեղում, Դեզդեմոնա — Ա. Արազյան:

Հուլիսի 30. — Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ: Ցազո — Հայկ Բեյլերյան:

1955

Հուլիսի 31. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում: Օթեյլո — Հր. Ներսիսյան, Դեզդեմոնա — Սիրուշ Ավետիսյան: Ցազո — Գեղամ Հարությունյան (առաջին ելույթը):

Օգոստոսի 14. — Կիրովականի Արեւյանի անվան թատրոնի բեմադրության քննարկումը: Ջեկուցող՝ Ներսես Ոսկանյան:

Օգոստոսի 15. — Ստեփանավանի թատրոնում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հր. Ներսիսյանը (Օթեյլո) Կիրովականի թատրոնի բեմադրության մասնակիցների հետ:

Սովետական Հայաստան, № 196:

Օգոստոս. — Ոսկարում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գ. Զանիբեկյանի (Օթեյլո) ղեկավարությամբ:

Ցազո — Ա. Ավետիսյան, Դեզդեմոնա — Ա. Արազյան:

Կոմունիստ, № 210:

Սեպտեմբերի 14. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության վերջին՝ 375-րդ ներկայացումը:

Մարտի 31. — Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, նոր բեմադրություն հեղինակ՝ Լևոն Բալանթար, նկարիչ՝ Կարո Մինասյան, երաժշտությունը՝ Ալ. Սպենդիարյանի:

Օթեյլո — Վահրամ Փափազյան, Վենետիկի դուքս — Արման Կոթիկյան, Բրաբանցիո — Ալ. Աղամյան, Ա., Բ., Գ. սենատորներ — Տիգրան Բախչինյան, Հովակ Գալոյան, Հարություն Հայրապետյան, Կասիո — Գ. Աշուղյան, Ցագո — Դավիթ Մալյան, Ռոդրիգո — Վ. Բագրատունի, Գրացիանո — Աշոտ Մկրտչյան, Մոնտանո — Հովակ Գալոյան, Լոդովիկո — Գրիգոր Զալիկյան, Նավաստի — Արկադի Հայրապետյան, Դեզդեմոնա — Մետաքսյա Միմոնյան, Էմիլյա — Սիրան Ալավերդյան, Բիանկա — Սիրուշ Ավետիսյան:

Նոր դերակատարներ՝

Ապրիլի 7. — Դեզդեմոնա — Մարգո Մուրադյան, Էմիլյա — Վ. Մելքունյան:

Այլ դերակատարներ՝

Օթեյլո — Հրաչյա Ներսիսյան, Վենետիկի դուքս — Սոս Սարգրսյան, Գրացիանո — Լեոնիդ Ռշտունի, Մոնտանո — Տիգրան Բախչինյան, Լոդովիկո — Վլադիմիր Աբաջյան, Ռոդրիգո — Գեվորգ Չեպչյան, Բիանկա — Լիդա Սալախյան:

ԳԱՔ, Մրազիլ: Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Հունիսի 4, 7. — Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի մասնաճյուղում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումները Հայ գրականության և արվեստի տասնօրյակին:

Հունիսի 27. — Մոսկվայում Հայ գրականության և արվեստի տասնօրյակի մասնակիցներից Խորհրդային Միության ժողովրդական արտիստի բարձր կոչման են արժանացել նաև Օթեյլոյի դերակատարներ Վահրամ Գամբրի Փափազյանը և Հրաչյա Ներսեսի Ներսիսյանը (Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի ղեկավար Միքայել Թավրիզյանի և մե-

ներգչուհիներ Գոհար Գասպարյանի ու Տաթևիկ Սազանդարյանի հետ):

Հունիսի 23, 24. — Հալեպում, սիյուռքահայ թատրոնի դերասան և ռեժիսոր Պ. Թոմպուլյանը տեղի թատերախմբի հետ:

Օթեյլո — Պերո Թոմպուլյան, Կասիո — Ժորժ Չափարյան, Ցագո — Պետրոս Քելեչյան, Դեզդեմոնա — Արփինե Սաչատուրյան, Էմիլյա — Արտեմիս Պարսումյան: Մասնակցել են նաև Կարապետ Եղբայրունին (Գարազայան), Արսեն Եսայանը, ճորժ Կարապետյանը:

Ք. Թորանյան, Սուրիահայ թատրոնը և Բարսեղ Աբովյանի Հուշերը, Բեյրութ, 1973, էջ 106:

Հուլիս. — Լիոնի Սենթ Անտուան արվարձանի Մարտիկյան սրահում, Թրագոչի (Օթեյլո) ղեկավարությամբ դերասանական խումբը:

Ապրիլի 13. — Թբիլիսիի Շահումյանի (այժմ՝ Աղամյանի) անվան պետթատրոնի նոր բեմադրությունը՝ ռեժիսոր՝ Ֆերդինանդ Բժիկյան, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Գուրգեն Շահբաղյանի:

Օթեյլո — Արտեմ Լուսինյան, Վենետիկի դուքս — Վ. Գալստյան, Բրաբանցիո — Լ. Ալավերդյան, Ա. սենատոր — Մ. Մարության, Բ. սենատոր — Սերգեյ Բաբլոյան, Գ. սենատոր — Ա. Պարոնբեկյան, Դ. սենատոր — Հ. Թաթարյան, Կասիո — Ռ. Պապովյան, Ցագո — Դ. Ամիրբեկյան, Գրացիանո — Նոյ Թումանյան, Լոդովիկո — Սուրեն Եղիազարյան, Ռոդրիգո — Հ. Ումիկյան, Մոնտանո — Վ. Եղչատյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Էմիլյա — Ա. Ժամկոչյան, Բիանկա — Մարիետա Բաբայան, Սպա — Ռ. Գևորգյան, Նավաստի — Աղամ Բոչարյան, Սուրհանդակ — Ա. Աղիլխանյան:

Նոր դերակատարներ՝

Ապրիլի 28. — Դեզդեմոնա — Արուս Զարաջյան:

Հունիսի 27. — Յագո — Ա. Քաջվորյան, Գրացիանո — Ա. Պարոնբեկյան, Բիանկա — Սեդա Զանիկյան:

Հունիսի 30. — Լոդովիկո — Ժիրայր Զոփիկյան:

ԳԱՔ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիսի 30. — Սուխումի ֆիլհարմոնիայի Ամառային թատրոնում, Հայկական, վրացական և արխազական թատերախմբերի կատարմամբ: Ա. և Բ. գործողությունները՝ վրացերեն, Գ. և Դ. գործողությունները՝ Հայերեն, Ե. գործողությունը՝ արխազերեն:

Հայերենում՝ Օթեյլո — Ա. Լուսինյան, Կասիո — Ռ. Պապովյան, Յագո — Դ. Ամիրբեկյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Բիանկա — Մ. Բարայան:

Բանվոր, 1972, № 98:

1958

Փետրվարի կեսերին. — Կիրովականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Մարտի 9. — Ստեփանակերտի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Կարո Ալվարյանի, նկարիչ՝ Գրիգոր Մատուրյան:

Օթեյլո — Վ. Փափազյան, Վենետիկի դուքս — Գուրգեն Գրիգորյան, Բրաբանցիո — Հմայակ Դանիբեյան, Կասիո — Վանյա Հովհաննիսյան, Յագո — Միքայել Կորգանյան, Մոնտանո — Ռաֆիկ Հարությունյան, Ռոդրիգո — Զինավոր Գևորգյան, Լոդովիկո — Բենիկ Օվչյան, Ա. սենատոր — Սուրեն Համզոյան, Բ. սենատոր — Բուղդան Բարայան, Սպա — Միքայել Հարությունյան, Դեզդեմոնա — Մարգո Բալասանյան, Էմիլյա — Նինա Հովսեփյան:

Կոմունիստ, № 60:

Հունիսի 23. — Արտաշատի շրջանի Բաղրամյան պուլում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումից տեսարաններ:

Օթեյլո — Հր. Ներսիսյան, Դեզդեմոնա — Մետաքսյա Սիմոնյան:

ԳԱՔ, Ծրագիր:

Նոյեմբերի 23. — Սոֆիայի Գեորգի Դիմիտրով սրահում, Վ. Փափազյանը տեղի «Երևան» Մշակութային միության «Սունդուկյան» թատերախմբի Հետ, 3-րդ գործողությունը:

Օթեյլո — Վ. Փափազյան, Կասիո — Բաֆֆի Թոսունյան, Յագո — Օննիկ Քեչյան, Դեզդեմոնա — Վարդուհի Գասպարյան, Էմիլյա — Արուսյակ Պալյան:

Երևան, № 2: ԳԱՔ, Օ. Քեչյանի ֆոնդ:

Դեկտեմբերի 3, 4. — Պլովդիվի Հայ մշակույթի տանը, Վ. Փափազյանը (Օթեյլո) Սոֆիայի «Սունդուկյան» թատերախմբի Հետ: Կասիո — Նաչիկ Պալյան:

ԳԱՔ, Օ. Քեչյանի ֆոնդ:

— Մոնտեվիդեոյի պետական թատրոնում, Մանվել (Օթեյլո) և Ռոզա (Դեզդեմոնա) Մարությունները տեղի դերասանների Հետ:

Դերասան Մ. Մարություն, իր բեմական և գրական գործունեության 50-ամյակի առթիվ (1918–1968), Թեհրան, 1969, էջ 64:

Դեկտեմբերի վերջերին. — Բուխարեստի «Ստեփան Շահումյան» Հայ Մշակութային միության տանը, Վ. Փափազյանը (Օթեյլո) տեղի թատերախմբի Հետ, 3-րդ գործողությունը:

Կասիո — Արտաշես Հայրապետյան, Յագո — Տիգրան Կարժարյան, Դեզդեմոնա — Վերժին Գովանյան, Էմիլյա — Աղավնի Քիրպիճյան:

Նոր կյանք, 1959, № 2:

Ապրիլի 23. — Հայաստանի Գրողների տանը, Շեքսպիրի ծննդյան 395-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:

Օթեյլո — Հր. Ներսիսյան, Ցագո — Դ. Մալյան, Դեզդեմոնա — Մ. Սիմոնյան:

Ավանդարդ, № 51:

Ապրիլի 25. — Կիրովականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Ապրիլի 29. — Արտաշատի թատրոնում, Վ. Փափազյանը (Օթեյլո) Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների հետ: Նույն խմբով՝

Հունիսի 16. — Հրազդանում:

Հունիսի 25. — Հրազդանի ցեմենտի գործարանի ակումբում:

Հուլիս. — Օշականում:

Հուլիսի 23. — Ապարանում:

Սեպտեմբերի 16. — Ոսկեվազում:

Սեպտեմբերի 24. — Հոկտեմբերյանում:

Սեպտեմբերի 25. — Վեդիում:

Հոկտեմբերի 8. — Վերին Արտաշատում:

Հոկտեմբերի 10. — Անաստասավանում:

Հոկտեմբերի 14. — Վ. Փափազյանի վերջին ելույթը Օթեյլոյի դերում — Սունդուկյանի անվան թատրոնում:

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Հուլիսի 4. — Բուենոս Այրեսի Հայ Կեդրոն սրահում, Մ. Մարությանի բեմական գործունեության 40-ամյակի թոթիվ երեկոյին, տեսարան 3-րդ գործողությունից: Դեզդեմոնա — Ռ. Մարության:

Շարժում, № 51:

Նոյեմբերի 22. — Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի մասնակցությամբ: Այդ օրվա ելույթը համարվել է նրա 4325-րդ Օթեյլոն:

Բանվոր, № 274, 277:

— Բեյրութում, «Քին» ներկայացման մեջ: Օթեյլո — Տիրան Աճեմյան:

Քուլա, 1960, № 329:

Փետրվարի 18. — Թբիլիսիի Հայպետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Նոր դերակատարներ՝

Ա. սենատոր — Կ. Քաղբջյան, Բ. սենատոր — Հ. Թաթարյան, Լոդովիկո — Ժիրայր Զոփիկյան, Մոնտանո — Զ. Աթաբեկյան, Դեզդեմոնա — Արուս Ղարաջյան, Սպա սենատոր — Ռոբերտ Ուչատրյան, Նավաստի — Միքայել Գրիգորյան:

ԳԱՔ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Մայիս. — Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Մայիս. — Ախալքալաքում, Վ. Փափազյանը (Օթեյլո) Լենինականի թատրոնի դերասանական խմբի հետ:

Վենետիկի դուքս — Հովհ. Ղազազյան, Բրաբանցիո — Լևոն Զոհրաբյան, Ցագո — Հայկ Բեյլերյան, Լոդովիկո — Լևոն Սարգրսյան, Դեզդեմոնա — Նինա Բոխյան, էմիլյա — Ռիմա Օղաբաչյան:

ԳԱՔ, Վ. Փափազյանի ֆոնդ:

Հունիս. — Բաքվի 26 Կոմիսարների անվան Մշակույթի պալատում, Վ. Փափազյանը (Օթեյլո) Ստեփանակերտի պետթատրոնի դերասանական խմբի հետ:

Կամուֆլաժ, № 90:

Հունիսի 30. — Սուխումի ֆիլհարմոնիայի Ամառային թատրոնում, Վ. Փափազյանը (Օթեյլո) Թբիլիսիի Հայպետթատրոնի դերասանական խմբի հետ: Նույն խմբով՝

Հուլիս. — Բաթումում:

1961

Փետրվար. — Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ՝

Յագո — Հ. Բեյլերյան, Դեզդեմոնա — Ն. Բոխյան, Էմիլյա — Ռ. Օդարաչյան:

Երևան, № 54:

Մայիսի 20. — Արտաշատի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) բեմադրությամբ ու մասնակցությամբ, նկարիչ՝ Ս. Հովհաննիսյան:

Բրաբանցիո — Ս. Սարգսյան, Կասիո — Ուաչիկ Պետրոսյան, Քաջիկ Գյուրջյան, Լոդովիկո — Ք. Բարսեղյան, Դեզդեմոնա — Մազդա Գյուրջյան, Էմիլյա — Կլարա Ավետիսյան-Մանվելյան:

Նոյեմբերի 26. — Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում, Պետրոս Աղամյանի մահվան 70-ամյակին նվիրված Հանդիսավոր երեկոյին «Վահրամ Փափազյան» թատերախմբի ուժերով, տեսարաններ:

Օթեյլո — Թորոս Սարգիսյան, Դեզդեմոնա — Սիրվարդ Յագյան:

Մեր նշանաբանն է Հառաջ, դեկտեմբերի 3:

1962

Հունվար. — Կիրովականի Աբեյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթեյլո) մասնակցությամբ:

Կասիո — Վոլոդյա Գրիգորյան, Յագո — Ալեքսանդր Շազաֆյան, Դեզդեմոնա — Լենա Փաշինյան, Էմիլյա — Հասմիկ Նաղաչյան:

Վ. Գրիգորյանի Հաղորդումը (1988):

Սեպտեմբերի 21, 22. — Սիսիանում, Վ. Փափազյանի (Օթեյլո) կազմած խմբով:

Բանվոր, № 224:

Հոկտեմբեր. — Վ. Փափազյանը (Օթեյլո) Լենինականի թատրոնի դերասանների հետ: Դեզդեմոնա — Վարդուշ Թամրազյան:

Սովետական Վրաստան, № 134:

1963

Դեկտեմբերի 27. — Թեհրանի «Արարատ» սրահում, «Շեքսպիրի անմահ թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի մահվան երեսնամյակին» նվիրված Հուշ-երեկոյին, 3-րդ գործողությունը:

Օթեյլո — Մանվել Մարության, Կասիո — Էդիկ Ասլանյան, Յագո — Հարություն Մինասյան, Դեզդեմոնա — Ռոզա Մարության, Էմիլյա — Շուշիկ Ուաչատրյան:

Ալեք, № 282:

1964

Ապրիլի 25. — Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ Հանդիսությունը, Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրությունից 3-րդ գործողությունը:

Օթեյլո — Վ. Փափազյան, Յագո — Ավետ Ավետիսյան, Դեզդեմոնա — Մետաքսյա Սիմոնյան, Էմիլյա — Սիրան Ալավերդյան:

Մայիսի 7, 8. — Կիրովականի թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ Հանդիսությունը, սունդուկյանցիների նույն կազմով:

Մայիսի 13. — Բաքվի Նարիմանովի շրջանի Շահումյանի անվան Մշակույթի պալատի Հայ ժողովրդական թատրոնը, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ: Բեմադրությունը՝ Ալեքսանդր Մարտիրոսյանի:

Օթելլո – Վարդան Բեգյան, Կասիո – Ռաֆիկ Վարդանյան, Ցագո – Յուրի Պողոսյան, Դեզդեմոնա – Օլգա Ֆանդունց, Էմիլյա – Մարգո Հակոբյան:

Վ. Բեգյանի հաղորդումը:

Մայիսի 28, 29. – Երևանի Հայֆիլհարմոնիայի Մեծ (այժմ՝ Ա. Սաչատրյանի անվ.) դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ սունդուկյանցիների նույն կազմով, 3-րդ գործողությունը:

Սովետական Հայաստան, № 123:

1965

Նոյեմբերի 16. – Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան թատրոնում, Հայկական թատրոնի ներկայացումը: Վահրամ Փափազյանի վերջին ելույթը Օթելլոյի դերում, որը շարունակվել է 57 տարի:

1966

Գարնանը. – Վահրամ Փափազյանը (Օթելլո) Արտաշատի թատրոնի դերասանական խմբի հետ՝ Արտաշատում, Նախիջևանում, Եղեգնաձորում, Գորիսում և մերձակա գյուղերում:

Երեկոյան Երևան, 1988, № 106:

1968

Փետրվար. – Բաքվի Նարիմանովի շրջանի Շահումյանի անվան Մշակույթի պալատի Հայ ժողովրդական թատրոնի խումբը, Ազիզբեկովի անվան թատրոնի դերասան Իսմայիլ Դադստանյու (Օթելլո) մասնակցությամբ (աղբբեջաներեն):

Ցագո – Յուրի Պողոսյան, Դեզդեմոնա – Օլգա Ֆանդունց:

Կոմունիստ, № 48:

Դեկտեմբերի 7, 8. – Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում, Պերճ Թոմպուլյանի (Օթելլո) բեմադրությամբ, իր կազմած խմբով:

Զարթոնք, № 61:

1969

Բասրայում (Իրաք), թատերասերների խումբը ներկայացրել է «Օթելլոն»:

Հայրենիք, № 1720:

Նոյեմբերի 16. – Երևանի Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում, բեմադրությունը՝ Երվանդ Ղազանչյանի և Նորեն Աբրահամյանի, բեմադրության ղեկավար՝ Հրաչյա Ղափլանյան, նկարիչ՝ Սարգիս Արուտչյան, զգեստները՝ Մ. Լիխնիցկայայի, երաժշտական ձևավորումը՝ Մարտին Վարդազարյանի և Ֆելիքս Արամյանի:

Օթելլո – Նորեն Աբրահամյան, Վենետիկի դուքս – Գուրգեն Հակոբյան, Բրաբանցիո – Գարուշ Սաժակյան, Գրացիանո – Գեղամ Աֆրիկյան, Լոդովիկո – Վահրամ Եղչատյան, Կասիո – Լորենց Առուչանյան, Ցագո – Սոս Սարգսյան, Ռոդրիգո – Արծրուն Մանուկյան, Մոնտանո – Շահում Ղազարյան, Դեզդեմոնա – Շաքե Թուխմանյան, Էմիլյա – Լյուսյա Հովհաննիսյան, Բիանկա – Ժենյա Ավետիսյան, Սենատորներ – Գևորգ Աշուղյան, Գևորգ Ասլանյան, Վաչե Բազրատունի, Արսեն Բազրատունի, Ստեփան Աջաբխանյան, Սպա – Սուրեն Ավետիսյան, Համբավաբեր – Վրեժ Հակոբյան, Օթելլոյի ծառա (մավրի անխոս կերպար) – Հարություն Հայրապետյան, Սուրհանդակ – Ալեքսանդր Սաչատրյան:

Նոր դերակատարներ՝

Դեկտեմբերի 3. – Բիանկա – Գալյա Նովենց:

Հունվարի 22 (1970). – Ռոդրիգո – Վրեժ Հակոբյան, Համբավաբեր – Արմեն Մարության:

Հունվարի 30. – Լոդովիկո – Հովակ Գալոյան:

Փետրվարի 10. - Բրաբանցիո - Ալեքսանդր Աղամյան:
Հունվարի 22 (1971). - Մոնտանո - Ռազմիկ Արոյան:
Դեկտեմբերի 20 (1972). - Բիանկա - Գոհար Գալստյան:
Մայիսի 11 (1973). - Լոդովիկո - Ալեքսանդր Աղամյան:
Հոկտեմբերի 8. - Բրաբանցիո - Գևորգ Ասլանյան:
Մարտի 15 (1974). - Մոնտանո - Նորայր Գևորգյան:
Հուլիսի 2. - Սուրհանդակ - Ռուզուֆ Ղևոնդյան:

Սունդուկյանի անվ. Թատրոնի նյութեր:

1970

Սեպտեմբերի 2. - Երևանի Արվեստի աշխատողների տանը,
Սունդուկյանի անվան Թատրոնի բեմադրության քննարկումը:
Զեկուցող՝ Ռուբեն Զարյան:

Գրական Թերթ, սեպտեմբերի 25:

1971

Ապրիլի 5. - Ստամբուլի Կեդրոնական Սանուց միության
Թատերախումբը, Գ. Գապարաճյանի բեմադրությունը (Հ. Մա-
սեհյանի Թարգմանությունն արևմտահայերենի է վերափոխել
Թորգոմ Սրապյանը): Պատրաստվել է երկու և կես ամսում,
խաղացվել առանց հուշարարի: Նկարիչ՝ էրոլ Սարաֆյան:

Օթեյլո - Գևորգ Գապարաճյան, Վենետիկի դուքս - Արրա-
համ Ցանրզյան, Բրաբանցիո - Պետրոս Զիչեքճյան, Սենատոր-
ներ - Միսաք Թորոսյան, Հերման Վարիչ, Կասիո - Արա Թոր-
գոմի Սրապյան, Ցազո - Թորգոմ Սրապյան, Ռոզրիզո - Լևոն
Աղասյան, Դեզդեմոնա - Թամար Շերեֆ (Գևորգի Գապարաճ-
յան), էմիլյա - Անդա Թորոսյան: Մասնակցել են նաև՝ Պերճ
Կազերոզյանը, Շահնուր ձեյհանը, Հակոբ Իմայհանը, Սարգիս
Կյուրլեքը:

Գուլիս:

Սեպտեմբերի 17. - Մոսկվայի Փոքր Թատրոնում, Սունդուկ-
յանի անվան Թատրոնի հյուրախաղերին:

Օթեյլո - Ս. Աբրահամյան, Բրաբանցիո - Գ. Ոսթակյան,
Կասիո - Լ. Առուչանյան, Ցազո - Ս. Սարգսյան, Ռոզրիզո -
Ա. Մանուկյան, Դեզդեմոնա - Շ. Թուխմանյան, էմիլյա - Լ.
Հովհաննիսյան:

Գարուն, 1972, № 1:

1975

Հունվարի 8. - Երևանի Սունդուկյանի անվան Թատրոնի
բեմադրության վերջին՝ 123-րդ ներկայացումը Ս. Աբրահամ-
յանի մասնակցությամբ:

1980

Նոյեմբերի 14. - Հրազդանի Ժողովրդական Թատրոնում,
բեմադրությունը՝ Թատերախմբի ղեկավար, Երևանի Ղափլան-
յանի անվան Թատրոնի դերասան Իշխան Ղարիբյանի, նկարիչ՝
Հ. Գարսևանյան: Բեմադրության քննարկմանը զեկուցումով
հանդես է եկել Հրայր Հովակիմյանը:

Ներկայացման մասնակիցներն են եղել՝

Օթեյլո - Մ. Բաղայան, Վենետիկի դուքս - Ժ. Մուրադյան,
Կասիո - Վ. Մուրադյան, Ցազո - Վ. Դավթյան, Ռոզրիզո -
Ս. Կնյազյան, Մոնտանո - Ս. Նաչատրյան, Լոդովիկո - Գ. Սո-
ղոմոնյան, Դեզդեմոնա - Գ. Բաղդասարյան, էմիլյա - Ռ. Հա-
րությունյան, Բիանկա - Շ. Նազարյան:

Ռ. Ղարիբյանի հաղորդումը: Հ. Հովակիմյան, Հայաստանի ժողովրդական
Թատրոնների տարեգրություն, Երևան, 1984, էջ 205:

Փետրվարի 18. – Մոնրեալի Ալեք Մանուկյան վարժարանի կեռնճյան սրահում, Թեքեյան Մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը (Հ. Մասեհյանի թարգմանությունը արևմտահայերենի վերածված): Բեմադրությունը՝ Պ. Ֆազյանի, նկարիչ՝ Վահե էմմիլյան, զգեստները՝ Սիրվարդ Ֆազյանի (էմիլյա), երաժշտությունը՝ Հայդընի, Կորեյլի, Դեզդեմոնայի երգը՝ Հարութ Ֆազյանի:

Օթեկո – Պերճ Ֆազյան, Վենետիկի դուքս – Վահան Ծաքարյան, Բրաբանցիո – Օննիկ Գալուստյան, Կասիո – Հակոբ Գլըճյան, Ցագո – Աբել Վարդիվառյան, Մոնտանո – Արա Տեմիրճյան, Ռոզրիգո – Հակոբ Թոչիկյան, Լոդովիկո – Բաֆֆի Մադտեսյան, Գրացիանո – Սարո Թոչիկյան, Դեզդեմոնա – Վարսենիկ Նազոյան, Բիանկա – Լենա Նաչիկյան, Ա. զինվոր – Նորայր Ղարիպյան, Բ. զինվոր – Արտաշես Պոյաճյան, Գ. զինվոր և Բրաբանցիոյի Ա. Հետևորդ – Ռիչրտ Ջաքարյան, Բրաբանցիոյի Բ. Հետևորդ – Վարուժան Արթոզյան:

Ապագա, № 427-428: Քուլիս, № 895, էջ 24:

Հունվար-փետրվար. – Մոսկվայի Տազանկայի թատրոնում, Կինեմատոգրաֆիայի Համամիութենական պետական ինստիտուտի Հայկական դերասանական կուրսի ներկայացումը, կուրսի ղեկավար և բեմադրող՝ Արմեն Զիգարխանյան:

Օթեկո – Արտաշես Ալեքսանյան, Կասիո – Արթուր Դիլանյան, Ցագո – Հայկ Գասպարյան, Դեզդեմոնա – Սուսաննա Մելքոնյան, էմիլյա – Մարգարիտ Թաթոյան:

Հայրենիքի ձայն, № 13:

Մայիսի 2. – Ստամբուլի Հարպիե Քաղաքապետական թատրոնում, «Քուլիս» թատերական Հանդեսի Հրատարակության 40-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:

Քուլիս, № 993, 994:

Օգոստոսի 7. – Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան Հայպետթատրոնում: Բեմադրությունը՝ Արմեն Բայանդուրյանի, նկարիչ՝ Շամիր Տեր-Մինասյան, երաժշտական ձևավորումը՝ էդո Գրիգ-Արյանի, զգեստները՝ Քեթևան Փալավանդիչվիլու:

Օթեկո – Ռոման Մաթիաշվիլի, Վենետիկի դուքս – Ռոբերտ Հովհաննիսյան, Բրաբանցիո – Սուրեն Եղիազարյան, Կասիո – Ֆելիքս Նաչատրյան, Ցագո – Սլավա Ստեփանյան, Ռոզրիգո – Գևորգ Թերժանյան, Մոնտանո – Արթուր Նաչոյան, Դեզդեմոնա – Լեյլա Մկրտչյան, էմիլյա – Զուլիխտա Սաղաթեյան, Բիանկա – Մնեժանա Ցաղուբյան:

Ներկայացման ծրագիրը:

Սեպտեմբերի 3. – Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Թբիլիսիի Աղամյանի անվան թատրոնի Հյուրախաղերին:

**ՇԵՔՍՊԻՐՑԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ
ԵՐԵՎԱՆԻ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՑԱՆԻ
ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ**

ԲԱԼԵՏՆԵՐ

Համլետ

1972, ապրիլի 26. – Պարադիր Մարկ Մնացականյանի բեմադրությամբ ներկայացվել է Դմիտրի Շոստակովիչի «Համլետ» մեկ գործողությամբ բալետը, դիրիժոր՝ Գասպար Թորիկյան, նկարիչ՝ Բ. Մեսսերեր:

Համլետ – Ռուդոլֆ Նառատյան, Կլավդիոս – Էդվարդ Անանյան, Գերտրուդ – Աննա Մարիկյան, Լաերտ – Ալբերտ Անդրեասյան, Օֆելյա – Էլվիրա Մնացականյան, Համլետի հոր ուրվականը – Էդիկ Նաչատրյան:

Հետագա նոր դերակատարներ՝

Համլետ – Հակոբ Գասպարյան, Սերգեյ Պետրոսյան, Գերտրուդ – Սոֆիկ Նաչատրյան, Լաերտ – Հովհաննես Նաչիկյան, Օֆելյա – Տատյանա Կասպարովա, Կատարինե Սարյան:

Композитор, № 108.

1981, փետրվարի 3. – Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ստուդիայում, օպերայի և բալետի թատրոնի արտիստ և պարադիր Ռուդոլֆ Նառատյանի լիբրետոյով ու բեմադրությամբ ներկայացվել է Յաբլոնսկու, Միլիարյամի և Ուլրիխի երաժշտական թեմաներով գրված մեկ գործողությամբ «Համլետ» բալետը:

Համլետ – Հայկ Ավագյան, Օֆելյա – Նադեժդա Նառատյան:

Ռ. Նառատյանի հաղորդումը:

Ռոմեո և Ջուլիետ

1970, մայիսի 31. – Պարադիր Օ. Վինոգրադովի բեմադրությամբ ներկայացվել է Սերգեյ Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» 3 գործողությամբ բալետը, դիրիժոր՝ Հակոբ Ոսկանյան, նկարիչ՝ Վ. Լիվենտալ:

Ռոմեո – Վիլեն Գալստյան, Ռուդոլֆ Նառատյան, Ջուլիետ – Էլվիրա Մնացականյան, Սոնա Վարդանյան, Տիրալտ – Նորայր Մեհրաբյան, Հովհաննես Դիվանյան, Մերկուտիո – Ալբերտ Անդրեասյան, Հովհաննես Նաչիկյան, Սերգեյ Պետրոսյան, Պարիս – Հակոբ Գասպարյան, Էդվարդ Անանյան, Սինյորա Կապուլետտի – Վիկտորյա Նանամիրյան, Ժասմենա Բարախանյան, Սինյոր Կապուլետտի – Ալբերտ Միքայելյան, Ս. Ղամբարյան, Սինյոր Մոնտեզյու – Նիկոլայ Շիսյան, Վլադիսլավ Անգուրով, Հերցոգ – Վիկտոր Բորիսով, Հայր Լորենցո – Մերուժան Սահակյան, Էդվարդ Հարությունյան:

Սովետական արվեստ, № 12, էջ 34–35:

1986, հունիս. – Վերականգնվել է Օ. Վինոգրադովի բեմադրությունը:

Ռոմեո – Ռուդոլֆ Նառատյան, Ջուլիետ – Էլվիրա Մնացականյան: Մասնակցել են նաև՝ Հովհաննես Դիվանյանը, Սերգեյ Պետրոսյանը, Ա. Գասպարյանը, Ա. Հունանյանը և ուրիշներ:

Սովետական Հայաստան, № 160:

2011, մայիսի 29. – Թատրոնի գլխավոր պարադիր Ռուդոլֆ Նառատյանի բեմադրությամբ ներկայացվել է Ս. Պրոկոֆևի բալետը, նկարիչ՝ Աստղիկ Ստեփանյան:

Ռոմեո – Ռուբեն Մուրադյան, Ջուլիետ – Ժակելինա Մարխոչյան, Տիրալտ – Նարեկ Մարտիրոսյան, Մերկուտիո – Արման Բալմանուկյան, Պարիս – Ահարոն Պետրոսյան, Բենվոլիո – Կարեն Մարտիրոսյան, Սինյորա Կապուլետտի – Էլվիրա Մնացականյան:

լետտի – Սոնա Առուստամյան, Դայակ – Իրինա Մկրրտումյան, Սինյոր Կապուլետտի – Ջավեն Հարությունյան, Քաղաքապետ – Հրաչ Հովհաննիսյան, Սինյոր Մոնտեգյու – Վաչագան Բոյախչյան, Հայր Լորենցո – Գարուչ Պունյան:

Երկրորդ-երրորդ կազմը՝

Ռոմեո – Սևակ Ավետիսյան, Ահարոն Պետրոսյան, Զուլիետ – Սյուզի Փիրումյան, Տիրալտ – Արտակ Հովհաննիսյան, Մերկուտիո – Սերգեյ Սաֆարյան, Գազիկ Բաբելյան, Պարիս – Արթուր Կարճիկյան, Բենվոլիո – Գազիկ Բաբելյան, Սինյորա Կապուլետտի – Մերի Վարդանյան, Մարիա Դիվանյան, Դայակ – Մարիաննա Պողոսյան, Սինյոր Կապուլետտի – Հայկ Հարությունյան, Քաղաքապետ – Գարուչ Պունյան, Սինյոր Մոնտեգյու – Գարուչ Պունյան, Հայր Լորենցո – Հրաչ Հովհաննիսյան:

Զուլիետի ընկերուհիները՝

Տաթևիկ Գրիգորյան, Նեյլի Մելքոնյան, Մարինա Բաղդասարյան, Աննա Մելքոնյան, Դիաննա Տվերդոլսկեր, Ալբինա Ղազարյան, Լիլիթ Փալանջյան:

Փողոցային պարուհիներ՝

Տաթևիկ Գրիգորյան, Նեյլի Մելքոնյան, Մարինա Բաղդասարյան, Դիաննա Տվերդոլսկեր, Ալբինա Ղազարյան:

Ռ. Պառատյանի հաղորդումը:

Օթեյլո

1984, նոյեմբերի 17. – Պարադիր Ն. Ռիժենկոյի (Ռուսաստան) բեմադրությամբ ներկայացվել է Հենրի Պյորսելի «Օթեյլո կամ Մավրի Պավանա» մեկ գործողությամբ բալետը ըստ Պոսե Լիմոնի խորեոգրաֆիայի, դիրիժոր՝ Հակոբ Ոսկանյան, նկարիչ՝ Սարգիս Արուստյան, զգեստների նկարիչ՝ Անահիտ Արուստյան:

Օթեյլո – Վիլեն Գալստյան, Դեզդեմոնա – Էլվիրա Մնացականյան, Յագո – Ս. Աբրահամյան, Էմիլյա – Լ. Գյուրջյան:

Շեքսպիրյան ներկայացումների Համամիութենական փառատոնին «Օթեյլոյի» նոր բեմադրության հետ, նույն օրը ներկայացվել են «Համլետ» և «Ռոմեո և Զուլիետ» բալետները:

Коммунаст, № 265.

1993, հոկտեմբերի 23. – Թատրոնի գլխավոր պարադիր Վիլեն Գալստյանի բեմադրությամբ ներկայացվել է Լորիս Ճգնավորյանի «Օթեյլո» 2 գործողությամբ բալետը, դիրիժոր՝ Օհան Դուրյան, նկարիչ՝ Սարգիս Արուստյան, զգեստների նկարիչ՝ Նատալյա Պովազո:

Օթեյլո – Հովհաննես Դիվանյան, Դեզդեմոնա – Յուլիա Ակոպովա, Յագո – Ֆելիքս Գրիգորյան, Էմիլյա – Նադեժդա Դավթյան, Կասիո – Վ. Համբարձումյան, Ռոդրիգո – Վ. Ղազարյան, Բրաբանցիո – Հ. Հովհաննիսյան, Վենետիկի դուքս – Ա. Սմբատյան:

Երկրորդ կազմ՝

Օթեյլո – Ֆելիքս Գրիգորյան, Դեզդեմոնա – Ե. Յարուչուկ, Յագո – Ա. Սաչատուրով, Հ. Քաջբերունի, Էմիլյա – Մ. Գյուրջյան, Ելենա Պավլիդի, Կասիո – Ջ. Հարությունյան, Ռոդրիգո – Կ. Մուրադյան, Բրաբանցիո – Ա. Սմբատյան:

Հայաստանի Հանրապետություն, № 125: Ներկայացման ծրագիրը:

1997, օգոստոսի 31. – Բալետի երեկոյին ներկայացվել է Հ. Պյորսելի «Օթեյլո կամ Մավրի Պավանա» բալետը. պարադիր՝ Ն. Ռիժենկո, դիրիժոր՝ Վ. Չարչոյցյան:

Օթեյլո – Հովհաննես Դիվանյան, Դեզդեմոնա – Մարիա Դիվանյան, Յագո – Ռ. Տոնոյան, Էմիլյա – Ելենա Պավլիդի:

Ներկայացման ծրագիրը:

2005. – Ն. Ռիժենկոյի նոր բեմադրությամբ ներկայացվել է Հ. Պյորսելի «Օթեյլո կամ Մավրի Պավանա» բալետը: Թեև ներկայացման ծրագրում նշված է, որ «Վարիացիաներ

Օթեյլոյի թեմայով» ենթավերնագիրը չի նշանակում թե խոսքը Շեքսպիրի ողբերգութեան բեմականացման մասին է», բայց և այնպես, նյութն ընդհանրացված է շեքսպիրյան չորս գլխավոր հերոսների հոգեբանութեան և գործողութիւններէ մեկնաբանութեան հիմքի վրա:

Դիրիժոր՝ Վիլեն Զարչոյցյան, նկարիչներ՝ Ս. և Ա. Արուտչյաններ:

Օթեյլո – Զավեն Հարութչունյան, Դեզդեմոնա – Ժակելինա Սարխոչյան, Յագո – Ա. Գևորգյան, Էմիլյա – Մարիա Դիվանյան:

Երկրորդ կազմ՝

Օթեյլո – Կ. Մաճկայան, Դեզդեմոնա – Մարիա Դիվանյան, Յագո – Վ. Նաչատրյան, Էմիլյա – Ք. Ավագյան, Ի. Մկրտումյան, Ա. Դալլաքյան, Ն. Վարդանյան:

Ներկայացման ծրագիրը

ՕՊԵՐԱՆԵՐ

Ռոմեո և Զուլիետ

1955, Հունիսի 19. – Թատրոնի ռեժիսոր Վավիկ (Անուշավան) Վարդանյանի բեմադրութեամբ ներկայացվել է Շառլ Գունոյի «Ռոմեո և Զուլիետ» 4 գործողութեամբ օպերան: Դիրիժոր՝ Սուրեն Զարեքյան, ռեժիսոր՝ Արաքսյա Անանյան, պարադիր՝ Զարե Մուրադյան, նկարիչ՝ Կարո Մինասյան, խմբավար՝ Կարո Կարապետյան:

Ռոմեո – Ա. Կովալյով, Գալուստ Գարրիեյան, Զուլիետ – Գոհար Գասպարյան, Լյուբով Լազարևա, Մանկլավիկ Ստեֆանո – Վիտլետա Վարդանյան, Ելենա Վարդանյան, Արաքսյա Ստեփանյան, Գերտրուդ – Անատոլյա Ղարիբյան, Սեդա Վանիկյան, Տիրալտ – Սերգեյ Բարխուդարյան, Ա. Պերճյան, Բենվոլիո – Գևորգ Իվանյան, Ա. Քեչիչյան, Մերկուտիո – Վահրամ Գրիգորյան, Սերգեյ Գալստյան, Պարիս – Էդվարդ Բաղդասարյան, Գ. Կիրակոսյան, Դուքս – Կարլոս Մարկոսյան, Սերգեյ Շախի-

Ջանյան, Ն. Ֆոմին, Գրեգորիո – Գ. Իվանյան, Ս. Կորժենյան, Կապուլետտի – Կ. Մարկոսյան, Ս. ՇախիՋանյան, Դավիթ Պողոսյան, Հայր Լորան – Նար Հովհաննիսյան, Ս. ՇախիՋանյան, Կ. Մարկոսյան: Մասնակցել են նաև բալետի արտիստներ:

Սովետական Հայաստան, № 176: Ներկայացման ազդագիրը:

Օթեյլո

1942, Հունիսի 21. – Թատրոնի ռեժիսոր Արմեն Գուլակյանի բեմադրութեամբ ներկայացվել է Զ. Վերդիի 4 գործողութեամբ «Օթեյլո» օպերան: Դիրիժոր՝ Միքայել Թավրիզյան, հարակից ռեժիսոր՝ Գոհարինե Մելքունյան, նկարիչ՝ Աշոտ Միրզոյան, պարադիր՝ Լեոնիդ Լավրովսկի:

Օթեյլո – Վ. Սավելև-Դամուրին, Դեզդեմոնա – Հայկանուշ Դանիբեյան, Կասիո – Յա. Դորբյանսկի, Յագո – Մ. Դենիսով, Էմիլյա – Թամար Շահնազարյան, Զարուհի Դուլիսանյան, Ռոդրիգո – Գևորգ Բաղդասարյան, Լոդովիկո – Կարլոս Մարկոսյան, Ա. Ցեսեիչ, Մոնտանո – Ն. Սմորոդին, Ի. Գրեկով, Մունեստիկ – Ա. Կասպերովիչ:

Սովետական Հայաստան, № 146, 150:

1944, ապրիլի 29. – «Օթեյլո» ներկայացումով թատրոնը մասնակցել է Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված Շեքսպիրյան 6-րդ Համամիութենական գիտահետազոտական կոնֆերանսին և թատերական փառատոնին:

Փառատոնի ծրագիրը:

1959, մարտի 17. – Ներկայացվել է Ա. Գուլակյանի բեմադրութեամբ: Դիրիժոր՝ Յուրի Դավթյան, նկարիչ՝ Աշոտ Միրզոյան, պարադիր՝ Զարե Մուրադյան:

Օթեյլո – Սերգեյ Դանիբեյան, Կասիո – Սերգեյ Բարխուդարյան, Յագո – Միհրան Երկաթ, Դեզդեմոնա – Անժելա Հարութչունյան, Էմիլյա – Մարիա Չաչկյան, Ռոդրիգո – Էդվարդ Բաղդասարյան, Լոդովիկո – Կարլոս Մար-

կոսյան, Մոնտանո – Հարություն Քարաջյան, Մունետիկ – Ա. Կասպերովիչ:

Այլ դերակատարներ՝

Դեզդեմոնա – Գոհար Գասպարյան, Սեդա Քալան-Թարյան, Էմիլյա – Մարգարիտ Զալալյան, Կասիո – Ա. Պերճյան, Ռոդրիգո – Գ. Կիրակոսյան, Միրիճ Դավթյան, Լոդովիկո – Վիկտոր Շորոխով, Մոնտանո – Ն. Ֆոմին, Մունետիկ – Արշավիր Կարապետյան:

Սովետական Հայաստան (ամսագիր), № 6, էջ 31–33:

1959, Հոկտեմբեր. – Ռումինահայ երգիչ Դավիթ Հովհաննիսյանի ելույթը Յագոյի դերում:

1961, Հուլիս-օգոստոս. – Սոչիում, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հյուրախաղերին:

1961, դեկտեմբերի 20. – Ռումինահայ երգիչ Դավիթ Հովհաննիսյանի ելույթը Յագոյի դերում:

1962, դեկտեմբերի 1. – Ռումինահայ երգիչ Կարպիս Զոբյանի ելույթը Օթեյլոյի դերում:

1963, Հունիսի երկրորդ կես. – Թբիլիսիի Զ. Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնի հյուրախաղերին:

1968, մարտի 23. – Սփյուռքահայ երգչուհի Լուիզա Պոզապալյանի (Փարիզ) ելույթը Դեզդեմոնայի դերում:

1970, Հունվարի 10. – Հայկական օպերայի 100-ամյակի առթիվ, թատրոնի մենակատար Միհրան Երկաթի ստեղծագործական երեկոյին:

Օթեյլո – Մ. Դանիելյան, Յագո – Մ. Երկաթ, Դեզդեմոնա – Ա. Հարությունյան:

Սովետական Հայաստան, № 5:

1970, փետրվարի 20. – Թատրոնի մեներգիչ Տ. Լևոնյանի առաջին ելույթը Օթեյլոյի դերում:

Օթեյլո – Տիգրան Լևոնյան, Կասիո – Մ. Բարխուդարյան, Յագո – Մ. Երկաթ, Դեզդեմոնա – Գոհար Գասպար-

յան, Էմիլյա – Արաքսյա Ստեփանյան, Ռոդրիգո – Գ. Կիրակոսյան, Լոդովիկո – Բորիս Գրեկով, Մոնտանո – Հարություն Քարաջյան, Հերոլդ – Գ. Դավթյան:

1970, փետրվարի 27. – Ռումինահայ երգիչ Դավիթ Հովհաննիսյանի ելույթը Յագոյի դերում:

1970, մայիսի 16. – Փարիզահայ երգչուհի Աստղիկ Անդրեասյան-Տետեյանի ելույթը Դեզդեմոնայի դերում:

Սովետական արվեստ, № 7, էջ 60–61:

1970, սեպտեմբերի 24. – Թատրոնի մեներգիչ Հարություն Քարաջյանի առաջին ելույթը Յագոյի դերում:

1995, Հոկտեմբերի 15. – Թատրոնի գլխավոր ռեժիսոր Տիգրան Լևոնյանի (Օթեյլո) բեմադրությամբ ներկայացվել է Վերդիի «Օթեյլո» օպերան (լիբրետտոն՝ Ա. Բոյտոյի): Դիրիժոր՝ Յուրի Դավթյան, պարադիր՝ Վիլեն Գալստյան, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով, զգեստների նկարիչ՝ Մ. Սարգսյան:

Դեզդեմոնա – Հասմիկ Հացագործյան, Կասիո – Եղիշե Մանուչարյան, Յագո – Կոստանդին Սիմոնյան, Ռոդրիգո – Մ. Թորոսյան, Լոդովիկո – Վահան Մակվեցյան, Մոնտանո – Միքայել Հովակիմյան, Էմիլյա – Գրիգորյան, Մունետիկ – Է. Մխիթարյան:

Հոկտեմբերի 21. – Երկրորդ կազմ՝

Օթեյլո – Ռազմիկ Պապիկյան, Դեզդեմոնա – Անահիտ Մխիթարյան, Էմիլյա – Ռաիսա Շիրինյան, Լ. Օվչյան, Յագո – Ա. Մուրադյան, Ա. Մարտիրոսյան, Ռոդրիգո – Ռուբեն Կուրեյան, Լոդովիկո – Ռուբեն Թելունց, Հակոբյան, Վալերի Հարությունյան, Մոնտանո – Գագիկ Շիրինյան:

Ներկայացման ծրագիրը:

**ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇՈՒՐ ՀԱՅԻՆ
ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՇԵՔՍՊԻՐՑԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Համլետ

1926, դեկտեմբերի 23. — Բաքվի Բունիաթզադեի անվան դրամատիկական թատրոնում (Թարգմ. Ջ. Ջաբարլի), առաջին անգամ ադրբեջաներեն՝ արևելյան երանգավորումով: Բեմադրությունը՝ Ալ. Տուգանովի, նկարիչ՝ Ն. Ե. Կուլեչ, արևելյան մոտիվներով երաժշտությունը՝ Անտոն Մայկլյանի:

Գերտրուդ — Ելիզավետա Մելիք-Շահնազարյան:

Եքսպիրն ադրբեջանական թատրոնում, այլոմ (ադրբեջաներեն և ռուսերեն), Բաքու, 1964:

1929. — Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում, բեմադրությունը՝ Իբրահիմ Իսֆահանյու (Համլետ):

Օֆելյա — Նինա Օպինսկայա (Քնարիկ Բասմաչյան),

Գերտրուդ — Նվարդ Ալիխանյան:

Ն. Օպինսկայայի հաղորդումը:

1932. — Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում, բեմադրությունը՝ Արչակ Բուրջայանի:

Գրական թերթ, № 9:

Օթելլո

1904, օգոստոսի 22. — Շուշիի Նանդամիրյանի թատրոնում, առաջին անգամ թուրք-ադրբեջաներեն, հայ դերասանուհիների և ադրբեջանցի թատերասերների մասնակցու-

թյամբ (Թարգմանիչ և Օթելլոյի դերակատար՝ Հաչիմբեկ Վեզիրով), բեմադրությունը՝ Հովհաննես Աբեյանի, իր խմբի զգեստներով:

Դեզդեմոնա — Արաքս Զարիֆյան, Էմիլյա — Ազնիվ Անդրանիկ («Նրանք երկուսն էլ իրենց դերերը լիովին հաջող կատարեցին»):

Կառույթ, № 197.

1910, հոկտեմբերի 29. — Բաքվի Թադիևի թատրոնում, Մուսուլմանական «Նիջաթ» լուսավորական ընկերության դերասանական խումբը (Թարգմ. Հ. Վեզիրով), բեմադրիչ և Օթելլոյի դերակատար՝ Հյուսեյն Արաբլինսկի (Ոսլաֆով):

Դեզդեմոնա — Ելիզավետա Մելիք-Շահնազարյան:

Կառույթ, № 247, 249.

1926, դեկտեմբերի 7. — Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում (Թարգմ. Գ. Սաբրի), փորձավար՝ Իբրահիմ Իսֆահանյի (Ցագո):

Օթելլո — Վահրամ Փափազյան (թուրք-ադրբեջաներեն):

Մարտակոչ, դեկտեմբերի 7: Ն. Օպինսկայայի վկայությունը:

1931, մարտ. — Թիֆլիսի Ռուսթավելու անվան թատրոնում, ադրբեջանական թատրոնի ներկայացումը:

Օթելլո — Վ. Փափազյան, Դեզդեմոնա — Նինա Օպինսկայա (Ք. Բասմաչյան): Փափազյանից բացի, Օպինսկայան խաղացել է նաև Ուլվի Ռաջարի (Օթելլո) հետ: Դեզդեմոնայի դերում մինչև 1955-ը հանդես է եկել Կիրովաբադի (Գյանջա) Ջաբարլու անվան ադրբեջանական թատրոնում:

Նինա Օպինսկայայի հաղորդումը:

1932, դեկտեմբերի 26. — Բաքվի Բունիաթզադեի անվան թուրք գեղարվեստական թատրոնում. բեմադրությունը՝ Ս. Մա-

յորովի, ռեժիսոր՝ Զ. Զարարլի, նկարիչ՝ Ս. Եֆիմենկո, երաժշտությունը՝ Սերգեյ Փանյանի:

Օթելլո - Վ. Փափազյան (Թուրք-աղբբջաներեն), Յազո - Ռզա Աֆղանլի, Դեզդեմոնա - Մարզիա Դավուդովա:

ԳԱՔ, Վ. Փափազյանի ֆոնդ:

1933, նոյեմբեր. - Շուշիում, Ստեփանակերտի Հայպետթատրոնի ներկայացումը:

Օթելլո - Վ. Փափազյան (տեղացիների խնդրանքով՝ Թուրքերեն):

Վանյա Հովհաննիսյանի Հաղորդումը:

1935, ապրիլի 21. - Բաքվի Բունիաթզադեի անվան թատրոնում, Հայ և աղբբջանցի դերասանների մասնակցությամբ:

Օթելլո - Հովհաննես Աբեյան, Դեզդեմոնա - Ժամեն (Մարիամ Գրիգորյան - Հայերեն), Յազո - Ռզա Աֆղանլի:

Կոմունիստ, ապրիլի 21: Ռ. Աֆղանյու Հաղորդումը:

1938, մայիսի 19. - Երևանի Զ. Զարարլու անվան աղբբջանական թատրոնում. բեմադրությունը՝ Վաղարշ Վաղարշյանի, ռեժիսոր՝ Բախչի Քալանթարլի, նկարիչ՝ Արմեն Զիլինգարյան, երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի:

Օթելլո - Իսմայիլ Դադաստանլի, Դեզդեմոնա - Զարիկ Տերյան, Էմիլյա - Ազրիկ Դերձակյան (նույն թատրոնի դերասանուհիներ):

Խորհրդային արվեստ, № 4: Ի. Դադաստանլու Հաղորդումը:

1944, ապրիլի 27. - Երևանի Զարարլու անվան աղբբջանական թատրոնում, Շքսպիրի ծննդյան 380-ամյակի առթիվ գիտական կոնֆերանսի և թատերական փառատոնի առթիվ. բեմադրությունը՝ Բախչի Քալանթարլու:

Օթելլո - Ալի Զեյնալով, Դեզդեմոնա - Զարիկ Տերյան, Էմիլյա - Ազրիկ Դերձակյան:

1946, փետրվարի 4-6. - Երևանի Զարարլու անվան աղբբջանական թատրոնում:

Օթելլո - Վ. Փափազյան (Հայերեն), Կասիո - Գևորգ Աշուղյան (Սունդուկյանի անվան թատրոնից):

Սովետական Հայաստան, № 28:

1953. - Բաքվի Ազիզբեկովի անվան աղբբջանական թատրոնում:

Օթելլո - Վ. Փափազյան (Թուրք-աղբբջաներեն), Յազո - Աղասաղըխ Գերայբեյլի:

Շքսպիրական, Գիրք 4, Եր., 1974, էջ 407:

ԱՄԵՐԻԿՑԱՆ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԹԱՏՐՈՆՈՒՄ

1920, ապրիլի 6. - Նյու Յորքի Ուոլտորֆ էսթորիա Հյուրանոցի երաժշտական սրահում, բարիտոն Ֆիլիպ Պեննելյանը Համլետի տարազով երգել է «Պրինտիգի» գինու գովաբան Ա. Թոմայի «Համլետ» օպերայից:

Կոչնակ, № 17, էջ 537:

1950-ական թթ. - Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերային թատրոնի մենբրգչուհի Լ. Ամարայի բազմակի ելույթներն «Օթելլո» օպերայում:

Դեզդեմոնա - Լուսին Ամարա (Քազուհի Արմաղանյան):

1964-1969 թթ. - Նյու Յորքի և ամերիկյան այլ թատրոնների դերասան և ռեժիսոր Էդուարդ Սեդրակյանը Հանդես է եկել շքսպիրյան Հետևյալ դերակատարումներով՝

Մոնտանո (Օթելլո)

Բանկո (Մակբեթ)

Կլավդիոս (Համլետ)

<1960-1970-ական թթ.>. - Ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը գրել է «Անտոնիոս և Կլեոպատրա» օպերան:

1977, ապրիլի 27. — Կահիրեի Ամերիկյան Համալսարանի ուսանողական թատերախմբի «Չափի դեմ չափ» ասմունքային եղանակով (բեմադրող՝ Դեյվիդ Վուտման) ներկայացմանը Հանդես են եկել՝

Անջելո — Ժիրայր Բարազյան, Իզարեյլա — Նորա Արմանի:

Արև, № 17671:

1970—1980-ական թթ. — Ամերիկյան թատրոնում, ամերիկահայ դերասանուհի և ռեժիսոր **Լեսլի Այվազյանը** մասնակցել է «Կամակոր կնոջ սանձահարումը» պիեսի բեմադրությունը:

2000, ապրիլ. — Վաշինգտոնի Քենեդիի կենտրոնում, երևանցի պարադիր Ռուդոլֆ Նառատյանի բեմադրությամբ. մի երեկոյում ներկայացվել են «Համլետ» և «Օթելլո» մեկական գործողությամբ բալետները:

Համլետ — Հակոբ Նառատյան, Օֆելյա — Ժանետ Հանլի:

2009. — Վաշինգտոնում, Ռ. Նառատյանի բեմադրությամբ ներկայացվել է «Համլետ» բալետը:

Ռ. Նառատյանի Հաղորդումը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԹԱՏՐՈՆՈՒՄ

1946, Հունիսի 29. — Կահիրեի Գալուստյան վարժարանի տարեվերջի գեղարվեստական Հանդեսի ավարտին, աչակերտները ներկայացրել են մի տեսարան «Համլետից»:

1961. — «Լոնդոնում», Լոնդոնի Օլդ Վիք թատերական դպրոցի շրջանավարտ Վիքի Սահակյանը բացօթյա (բեմով ու հանդիսատեսով) բեմադրել է «Ամառնային գիշերվան մը երազը»:

Հիպոլիտա — Վիքի Սահակյան:

Մարմարա, № 6265:

1963. — Թեհրանում, Անգլիական դեսպանատան ամառանոցի այգում, ամերիկացի թատերագետ և ռեժիսոր՝ պրոֆ.

Ջորջ Քուինբրիի բեմադրած «Ասսանձ կնոջ սանձահարումը» բեմադրության ու զգեստների ձևավորումները կատարել է երիտասարդ թատերական գործիչ Արբի Հովհաննիսյանը:

Հանդես գրականության և արվեստի, 2002, № 2:

1966. — Լոնդոնի Դը Բրիսթոլ Օլդ Վիք թատերական դպրոցի ուսանող Վարուժան Նտրչյանն ավարտական ներկայացումների ժամանակ մասնակցել է Լոնդոնի մերձակայքում, ամֆիթատրոնում, Երիտասարդական միության նախաձեռնությամբ տրված ներկայացմանը:

Օթելլո — Վարուժան Նտրչյան, Յագո — Ջոն Քենթ, Դեզդեմոնա — Լյուզիլա Բուլովկա, Էմիլյա — Սյուզան Ռոյթ:

Վ. Նտրչյանի Հաղորդումը:

1964—1968. — Լոնդոնի Դը Բրիսթոլ Օլդ Վիք թատերական դպրոցի ուսանող Գրիգոր Սաթամյանը մասնակցել է Շեքսպիրյան մի քանի պիեսի բեմադրությունների:

Միակ Հակոբ Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, Հ. Գ., Բեյրութ, 1981, էջ 344:

1967, մարտ. — Լոնդոնի Արքայական օպերային թատրոնում, Վերդիի «Ֆալստաֆ» օպերայում:

Միստրիս Տորդ — Լուիզա Գոզապայան:

Ադարատ, 1967, № 7603:

1971, մայիս. — Երևանի № 78 անգլիական թեքումով դպրոցում, «Համլետ» (կրճատումներով), բեմադրությունը՝ ուսուցչուհի Մելսիդա Քոչարյանի:

Համլետ — Մերի Հակոբյան, Օֆելյա — Սիրվարդ Հոկտանյան, Հորացիո — Մարինե Ժամկոչյան:

Ավանդարդ, № 63:

<1978>. — Լոնդոնում, Գիլդ Հոլի երաժշտության և դրամայի դպրոցի շրջանավարտ Սաբրինա Գրիգորյանը խաղացել

է Հիպոլիտայի և Հերմիայի («Միջամատնային գիշերվա երազ»), Էմիլյայի («Օթելլո») ղերերը:

Երևանի Միջին Արևելքի (Մարկո Գրիգորյանի) Թանգարանի նյութեր:

1985, Հոկտեմբեր. – Լոնդոնի «Օդիոն» թատրոնում բեմադրվել է Մանչեստրի «Պրիթիչ Նորթըն Պալե թեատրի» առաջարկով՝ Լորիս Ճզնավորյանի գրած (1984) «Օթելլո» բալետը: Պարագիր՝ Ռոբերտ Դավորնի:

Աշխարհ, 1988, № 1514:

1986. – Էդինբուրգում, դերասան և ռեժիսոր Ժ. Բարազյանը բեմադրել է «Ձմեռային պատմությունը» (Ձմեռային հեքիաթ):

Ծեր Հովիվ – Ժիրայր Բարազյան:

1993. – Լոնդոնում, թատրոնի տեսաբան և ռեժիսոր Հ. Փիլիկյանը բեմադրել է «Համլետը»:

Համլետ – Հովհաննես Փիլիկյան:

1995. – Լոնդոնի Դը Բրիսթոլ Օլդ Վիք թատերական դպրոցի շրջանավարտ, լոնդոնահայ դերասան և երգիչ Ստեփան Սևանը ուսման տարիներին մասնակցել է Շեքսպիրի, Դիկենսի, Չեխովի և ուրիշների պիեսների բեմադրություններին: Փոքրիկ թատերախմբերի հետ մի շարք քաղաքներում մասնակցել է «Բազում աղմուկ վասն ոչնչի», իսկ Ստրեստֆորդի Շեքսպիրյան Մեմորիալ թատրոնում՝ «Ձմեռային հեքիաթ» պիեսների բեմադրություններին:

Հատաջ, 1999, № 10886:

ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1970-ական թթ. – Վիեննայի օպերային թատրոնում, մեներգչուհի Սոնա Ղազարյանը հանդես է եկել Վերդիի «Ճալստաֆ» և Վ. Բելլինիի «Կապուլետտի և Մոնտեկի» (Զուլիետի դերով) օպերաներում:

Ասպարեզ, 1980, № 258:

2000–2001 թթ. – Վիեննայի Ֆոլքս (Ժողովրդական) օպերային թատրոնի մեներգչուհի Գարին Օհանյանը հանդես է եկել «Ամառնային գիշերվա երազ» օպերայում:

Հատաջ, 2001, № 20021:

ԱՐԱԲԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1964. – Ռաչանայի (Լիբանան) թատերական փառատոնին Պերճ Ֆազլյանի բեմադրությամբ ներկայացվել է «Մխալների կատակերգությունը»:

Թորոս Թորանյան, Պերճ Ֆազլյան կամ այսպես կնվիրվեն թատրոնին, Հալեպ, 1989–1990, էջ 188:

1996. – Բեյրութում, մենաթատրոնում:

Օթելլո – Հովհաննես Հելվաճյան:

ԱՐԳԵՆՏԻՆՑԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

<1960-ական թթ.>. – Բուենոս Այրեսի «Կոլոն» օպերային թատրոնում, երգիչ Լևոն Պողոսյանը հանդես է եկել Վ. Բելլինիի «Ի Կապուլետտի է ի Մոնտեկի» օպերայում:

Ալիք, 1971, № 195:

ԲԵԼՈՒՈՒՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1946. – Վիտեբսկի Ցակուբ Կոլասի անվան բելոռուսական դրամատիկական թատրոնում Վալերի Բերուտովի բեմադրությամբ ներկայացվել է «Համլետը»: Նկարիչ՝ Ելենա Բերուտովա: 1955-ին ևս բեմադրվել է նույն կազմով:

Театральная энциклопедия, М., т. 1, 1961, էջ 477:

1983–1986 թթ. – Մինսկի օպերայի և բալետի պետական թատրոնում, թատրոնի մենակատար Մարիա Գուլեգինան (Մուրադյան) հանդես է եկել «Մակբեթ» օպերայում:

Урагу, 2003, № 18.

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1912, փետրվարի 15. – Սոֆիայում, Վաչրամ Փափազյանը Բուլղարական թատրոնի դերասանների հետ հանդես է եկել Օթեյլոյի դերում, հայերեն: Դեզդեմոնա – Պետկովա:
